


ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՀՈՎԱՏԵՍՐԵՐ

87



1817

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



- 1.- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ . . . . . Իմ արահետով
- 22.- Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . . Մեքբափուխ
- 28.- Ն. ՔԱԶԱՆՁԱԳԻՍ . . . . . Վերախաչուած Քրիստոսը  
(Հայացուց՝ Ս. Տէր ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ)
- 38.- ԱՐՄԱՆՏ . . . . . Գագեղ հայրենակամ
- 39.- Ա. ԳԱՐԻԷԼԵԱՆ . . . . . Նեղեալների յոյսերգութիւնն  
ու մէկ դալարը
- 43.- ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ . . . . . Հայ գիրքը՝  
«Աստուածային գորաւորք»
- 55.- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . . Դէմ առ զէմ Փօլ Կիրակոսեանի
- 65.- Թ. ՕՇԱԿԱՆ . . . . . Նամակներ՝ Ն. Սարափեանին
- 69.- \* \* \* . . . . . Եզիա Տէմիրնիպաշեան
- 70.- Թ. ՕՇԱԿԱՆ . . . . . Եզիա Տէմիրնիպաշեան
- 72.- Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ . . . . . Մենակ
- 74.- Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ . . . . . Պատերազմ բնդդէմ Ֆռանսայի
- 77.- \* \* \* . . . . . Մշակութային լուրերը

493

# Բազմը

## ԱՂՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՋ. ՏԱՐԻ. ԹԻԻ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1987 ՊԵՂԱՍԻ

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ



Ի Մ Ա Ր Ա Հ Ե Տ Ո Վ 10436

Գլուխ Ա. Կայանից կայան

Մեր այնտակիցը, Անն Մերտլան, պուրաստած է նաև որոնք գործը մը, ֆուտուան՝ ելևէջներով հարուստ հեանքի մը փորձառու թիւ ներքով:  
Ստորին ներկայացուածքը առաջին մասն է մեր որոմող-բուժեան աակ դրուած աճաղկի մը, որուն մնացեալ էջերը պիտի հաղորդենք ձեզի հետ յաջորդ տարուան թիւերով:

1942ի Մայիսի 21ի կէսօրից յետոյ, իրիկնուղէմին, մի քանի տասնեակ ռազմագերիներէ հետ, որոնք թէոդոսիայի գերբական ճամբարում իրենց հերթին առանձնացուել ու դուրս էին հանուում այնտեղից, շարքով քայլում էի քաղաքի փողոցներով, անյայտ ու զգուժեամբ: Քայլելը երկար շանեց, երեւի 10-15 րոպէ: Մտանք մի դարպասից ներս, անդաւրու եջինք դարպասից ոչ-հեռու գտնուող՝ գետնին կպած ընդարձակ շէնքում, ձախ կողմում, որն աւելի շուտ ապրանքների պահեստի էր նման: Այնտեղ արդէն ուրիշներ կային, որոնք գերուել էին աւելի առաջ:  
Բակն ինքնին ընդարձակ էր, շուկայի հրասպարակի նման: Մեր շէնքի հետեից բարձր պատը շարու նակուում էր, իսկ այնու հետեւ, կիսաշրջանի վրայ,

ա շ ա - ԱԿ

digitized by Թ.Ր.Ա.Ր.Ա.Ր.Յ.

ընկարաններ չեն տեղացի բնակչու թեան համար: Թաթար կանայք բարձրա-  
ձայն կանչու մ էին երկխաներին կամ ոտքի վրայ հեռու ից մտքեր փոխանակու մ  
հարեւանու հիների հետ: Տների առջեւ եւ, արեւի տակ, շարերից կախուած, շո-  
րանու մ էին, յուացուած հագուստներն ու սպիտակեղէնները:

Մեզնից որոշ հեռու որու թեան վրայ, դարպասի աջ կողմից, կար մի  
բազմալարկ շէնք: Տեղեկացանք, որ դա ոստիկանութեան տեղական վարչու-  
թեան շէնքն է: Այնտեղ կար, ըստ երեւոյթին մեծ խոհանոց, քանի որ մեր կե-  
բակու բները եւս այնտեղից էին ստացու մ: Այդից եւ եթ ազատ էինք, սնու մ  
եւ միայն ինքնասպասարկիչ աշխատանքներ ինք կատարու մ: Դա շատ ար-  
տաստփոր էր թու մ՝ մեր անցած ճանապարհի շամեմատ:

Յաջորդ օրը հարկ համարեցի իմ փոքրիկ ու կիսովին թրջուելուց  
քրքրուած ծոցատեարու մ 11 տողի մէջ մատիտով ամփոփել նախորդ երկու  
շարաթուայ պատմութիւնը, իսկ սպա նշեց տուեալ օրու այ վիճակս. «Ճակե-  
ցիմ որպէս ռադիստ. շգիտեմ՝ ինչ եմ անելու: Փազաբի բակերից մէկու մ  
եմք: Վիճակս ընդհանրապէս անհամապատասխան է գիտութեան մասին  
ունեցածս պատկերացմանը»:

Մէկ օր անց՝ մօտ 60 հոգի հանրակառքով տեղափոխու եցին Միմֆերու-  
պու: Մեր հերթին էինք սպասու մ: Արդէն թիչ էինք մնացել՝ երեւի քսան մարդ:  
Խաղտաներից բացի, կային նաեւ այլ զբաղմունքի մարդիկ, վարորդներ,  
եւայլն: Բայց անընդհատ նորերն էին դալիս:

Այդտեղ եւս, ինչպէս որ սպասելի էր, ուշադրու թեան կենտրոնու մ էին  
գտնու մ ճաշի կաթսան ու շերեփու: Գործը կարգաւորուած էր արդէն, տարբեր  
ազգերից մէկ-մէկ ներկայացուցիչներ միասին էին տնօրինու մ քայլումը:  
Մտահոգուելու յատուկ բան չկար: Բայց կային մարդիկ, որոնք ուզու մ էին  
անպայման տեղ ունենայ այդ խմբու մ, համապատասխան «նախընտրական  
արշաւ» նախաձեռնելով: Այսպէս, մի հայ երիտասարդ, Լենինականի թէ կիրո-  
վականի կողմերից, մէկ-մէկ ներկայանու մ էր կայանի հայերին եւ թախան-  
ձու մ, որ իր թեկնածու թիւնը առաջադրեն հայերի կողմից: «Ձեզ վարդի պէ՛ս  
կը պահեմ», - նոյն խօսքն էր կրկնու մ բոլորին: Բայց երբ իր նպատակին հա-  
սու, «ընտրողներին» հանդէպ բարեւն անգամ մոտացաւ ու կողմնակի գոր-  
ծարքներով էր զբաղու մ: Եւ դա կատակների նիւթ դարձաւ. «Վարդի պէ՛ս կը  
պահեմ», - Ի հարկէ, նրանից ոչ ոք իրականու մ ոչ մի ակնկալու թիւն չէր էլ ու-  
նեցել ու շու նէր, եւ մարդիկ ընդատալէլ էին սոսկ ընդատալէլու համար, քանի  
որ այնքան բուռն ձգտու մ ունէր:

Մայիսի 28ին, երբ ինքս ինձ համար շրջու մ էի բակ-հրապարակի ծայ-  
րու մ, ոստիկանութեան շէնքի առջեւ խուռն բազմութիւն էր հաւաքուած,  
ոգի որուած նուազու մ եւ պարու մ էին ոմանք: Մինչեւ որ քայլիով հասայ  
բազմութեանը՝ նուազ վերջացաւ եւ մարդիկ ցրու մ կամ կանդնած գրու-  
ցու մ էին: Մի գերի, օրինակ, պատմու մ էր խորհրդային ճանապարհների ող-  
բալի կացու թեան մասին, իսկ գերմանական համազգեստով ու ուստերէն հա-  
մարեա՝ վարժ խօսող մէկ ուրիշը եզրափակու մ էր գրուցը. «Այդէն այսքան  
տեղեր եղանէ՛՛ ոչ մի կարգիմ Յամապարի շտեմաէ՛ք»: Ապա իմացայ, որ կի-  
նտեղարահանու մներ են եղել: Այդ նկարահանու մները շարու նակու եցին յա-  
ջորդ օրը, նորանոր դիրքերից:

Կարգից գուրս նորու թիւն էր այն, որ գիշերները խորհրդային ոմրակո-  
ծիչները, ինչպէս ասու մ էին, ու մեր էին նեւտու մ քաղաքի վրայ: Այդ հաշու ով  
էլ մեզ յուր հասաւ, թէ Մայիսի 28ի յույս 29ի գիշերը, ռազմագերիները ճամբար  
ընկած ու մրից սպանու են 14 եւ վիրաւ որու են 7 մարդ: Թէ որբա՞ն ճիշտ  
էին այդ յուրերը՝ ստուգել չէինք կարող, ի հարկէ:

Դրսի հետ հաղորդակցուելու հնարաւորութիւն, անշուշտ, չկար: Մի

անդամ պատահամար ձեռքս ընկաւ զերմտնական մի պատկերազարդ պար-  
րերական, որից քաղցիտի՝ ինչ ոչ կարող էի: Բովանդակութիւնից աւելի իմ ու-  
շաղրութիւնը զբաւեց թղթի բարձր որակը, սպուածի ու լուսանկարների  
խնամուած տեսքը: Բացի այդ, շէնքի կողքին նկատուցի հասարկի նման մի կի-  
սափակ տնակ, որտեղ խառ ի խուռ ու յցուած էին ամէն տեսակ իրեր եւ, մասնա-  
ւանդ՝ հին ու նոր գրքեր ու հանդէսներ: Զուգեցի ուս սերէն նշանաւ որ «նիվա»  
(«ԱՐԱՍ») հանդէսի 1903 թուի յաւելուածներից մէկը եւ ամբողջ ժամանակ  
դրանով էի գրադրուած:

Վերջապէս, Մայիսի 31ին 30 օրախտներ թւող սոսիայից հանրակառքով  
հասանք Սիմֆերոպոլ: Ըանապարհին մի տեղ բառական երկար կանդ առանք:  
Պարզուեց, որ տեղական պարտիկանները քանդել են խճուղու մի հատուած  
եւ հիմա դա նորոգութեամբ էր: Բացի այդ, ուղեւորներից ոմանք մի սնկերին մա-  
տով ցոյց տուին հանրակառքի ետեւի մատուց իրար վրայ դարձուած հրացան-  
ների կոյուր, ժպտալով ու զարմանալով «գերմանացիների անհոգութեան»  
վրայ: Այդ հրացաններն, ի հարկէ, բոլորովին զատարկ էին: Բայց եւ այնպէս...

Սիմֆերոպոլ հասանք երեկոյեան, տեղաւորուեցինք այդտեղի կայա-  
նում՝ իրար կից շէնքերի մէջ: Այնտեղ ցուցակագրեցին մեզ եւ յաջորդ օրերի  
հաշուով սնունդ բաժանեցին: Իրանք ամէն տեսակի չոր ու թաց՝ պահպան-  
ւող ու տեղիքներ էին: Ծանօթ կամ անծանօթ: Կային նաեւ սրճադոյն սալիկ-  
ներ: Միմիանց հարցնելով իմացանք, որ շոկոլատ է:

Յունիսի 1ի առաւօտեան արթնացանք ժամը 3ին, մեզ կարգի բերինք  
եւ 130 Նոդով քայլեցինք դէպի երկաթուղային կայարան: Քայլելիս վաղ  
առաւօտ էր, փողոցներում շատ մարդ չէր երևում: Բայց թւում էր, որ քաղաքը  
կոկիկ ու բարեկարգ է:

Կայարանի մօտ, դրսում, բաւական երկար սպասեցինք, մինչեւ որ մեզ  
հասանելիք վագոնները տրամադրուեցին: Ժամը 8ն էր, երբ տեղաւորուեցինք  
սանիտարական գնացքի վերջին վագոններում: Իրանք արարքատար վա-  
գոններ էին, բայց պատուահաններով: Այնպէս որ, Գերմանիա տանող ամբողջ  
ճանապարհին շուրջը դիտելու կատարեալ հնարաւորութիւններ կային:  
Գնացքը երկար կանդ առաւ Զանկոյում: Այլ կողմից երևում էր գերիական  
բացօթեայ ճամբարը: Կարելի էր տեսնել, թէ գերիներից շատերը ինչպէս են  
ձեռքերի ետանդուն շարժումներով ցանկանում հաղորդակցուել գնացքում  
գտնուողների հետ:

Այնուհետեւ լրջապատն անհրապոյր էր: Եկաւ գիշերը ու միայն յա-  
ջորդ առաւօտեան մեզ գտանք Ուկրաինայում: Գնացքը կանգ առաւ Մելիտո-  
պոլում: Կարելի էր դուրս գալ վագոններից ու պարտել կատամտոյցում, որ-  
տեղ նաեւ ուկրաինացի բնակիչներ էին սպասում կամ լրջում: Մերոնք խօ-  
սակցութեան բռնուեցին նրանց հետ: Տեղացիներն, ի հարկէ, նախ զարմա-  
նում էին, որ առանց հակիչների ենք ճամբորդում: Բացատրեցինք, որ մեզ հա-  
մար էլ պարզ չէ, թէ ինչու, եւ որ մեզ էլ դա՛ էր թափն ընկել: Մի ասրեց մարդու  
հարցրինք բնակչութեան վիճակի ու արամադրութեան մասին: Յատուկ  
զօգուտութիւն չյայտնեց, ասաց, որ «կարելի է ապրել»: Վերջում միայն, ձեռքը  
հիստա-արեւելք ուղղելով, զգալի մտահոգութեամբ յարեց. «Ի՞նչ եթէ նրանք  
զա՛ն...»: «Երանք», պարզ է, կոմունիստներն էին:

Անցանք Զապորոժիեն, Սիմեյնիկովսեն, հասանք Գնիպոլպետովսկ, որ-  
տեղ ընթերցեցինք՝ տաք կերակուր ստանալով վագոն-խոհանոցից, եւ մնացինք  
ամբողջ գիշերը: Այդ օրը նոր անդրադարձանք, որ մեր սանիտարական՝ վեց  
վագոնից կազմուած գնացքին, որոնցից երկուսը գերիներին էին զպատկան  
նումք, հետեւից ու առջեւից կցուած են երկու այլ հատուածներ՝ զինուորական  
եւ Լիբմուս հաւաքագրուած ու Գերմանիա ուղարկուող երկսեռ երիտասար-

դու թեան էշիռնները: Չգիտեմ, թէ ինչ կարգով էին հասարակարարուել այդ երբ-տասարդները եւ ինչ էին մտածում առհասարակ: Բայց, գտնելով արտաքին նշաններէից, շատ առոյգ եւ առատախօս էին: Պատուահանները զարդարել էին կանաչ փոքրիկ ճիւղերով եւ, զնացքը կորագրած կազմելու զէպքում, Հեռուից Հեռու միմեանց ողջունում էին՝ ձեռքի շարժումներով եւ բարձրաձայն հրճուածից բացականութիւններով:

Գնացքը սուրում էր ու կրահնական դաշար ու շէն հարթավայրերով, կանգ առնելով սոսկ սակաւաթիւ հանդուցներում: Շուրջը թարմ ու կանաչ դաշտեր էին, բնակավայրեր, այստեղ-այնտեղ աշխատող մարդիկ:

Յու նիսի Յին Հասանը Ջնամենկա, իրիկնաղէմին, դարձեալ տաք կերակուր ստանալով: Առհասարակ, այդպիսի հանդուցային կայարաններում, յատուկ կէտերում կաթսաների մէջ եռացած ջուր («կիպեատոկ») էր մատակարարուում, բացօթեայ, կարիք ու ննջող ու զեւորներէ համար: Եւ կարելի էր տեսնել, թէ զրիմցի երիտասարդները ամաններով ինչպէս են ջրի պաշար տանում վազոններ:

Ինձ համար խիստ հաճելի էր, որ մօտս էր մի երեսանցի՝ Բագրատը: Նա ինձնից մեծ էր երեւի 10 տարով, աւելի փորձառու թիւն ունէր, տեղեակ էր ՉՅական թուերի իրազարժութիւններին մօտեկից, եղել էր Դաշերիտ կազմակերպութեան շարքերում եւ, ընդհանրապէս, վերին աստիճանի կազմակերպւած անձնաւորութիւն էր: Ու ամբողջ ճանապարհին մտքեր էինք փոխանակում Հին ու նոր այլեւայլ հարցերի շուրջ:

Եւ, առհասարակ, ու զեւորներս ժամանակ ու նէինք ոտքի վրայ զրուցելու նաեւ հրատապ այլեւայլ նիւթերի շուրջ: Այդ ընթացքում բուռն վէճեր էին ծագում կովկասցիների եւ մեր խմբում գտնուող նորահաս ռուսների միջեւ: Այդ ռուսները մեծ մասամբ համարեա՝ պատանիներ էին: Յիշում եմ, նրանից մէկը ամբողջ ճանապարհին ինքն իր համար միայն ու ցածրաձայն երգում էր Ռուսաստանում երկար ժամանակից ի վեր տարածուած երգը մօր՝ նրա եզակի որդեգրութեան մասին: Իսկ միսները եռանդով պաշտպանում էին ոչ թէ խորհրդային իշխանութիւնը, այլ՝ «Ռուսաստանի մեծութիւնը»: Պնդում էին, թէ այդ իշխանութիւնից օգտուել են ո՛չ թէ ռուսները, այլ՝ «ազգային փոքրամասնութիւնները», յատկապէս կովկասցիները, «ռուսներին ճնշելով»: Եւ այդ շրջանակում էին ծաւալում վէճերը:

Մեր գնացքի յաջորդ կանգառը կապտին քաղաքն էր՝ կէսօրին, որտեղ նոյնպէս օգտուելիք վազոն-խոհանոցից: Կայարանում, երկաթուղապահից ոչ-հեռու, ծառերի տակ բացօթեայ շուկայ էր, գեղջկուհիները զանազան մթերքներ էին վաճառում: Մերոնցից ոմանք հետաքրքրուեցին շուկայով, ստուտրի բնոյթով, զանազան հաշիւներ արեցին գների կապակցութեամբ ու եզրակացրին, որ «է՛մանութիւն է՝ համեմատաբար»: Այդ շուկայի շրջակայքում պատահաբար ձեռքս ընկաւ եւ մի ուկրաիններէն թերթ, որը աչքի անցկացնելով մօտու որապէս իմացայ, որ զա տեղական նախաձեռնութեամբ լոյս տեսնող թերթ է, տեղական հարցեր շուրջիցու առաջադրանքով: Զկարողացայ աւելի խորանայ:

Չով անտառների միջով գնացքը շարժուելից առաջ՝ գիշերուայ ընթացքում, անցնելով Ռոմիոնից ու կովկից: Յու նիսի Յի առաւօտեան, երբ արթնացանք, գնացքը կանգնած էր մի տեղ: Առաջին, թէ «պետական սահման» է: Էլ ի՞նչ պետական սահման, խորհրդածեցինք մենք, երբ ամէն ինչ իրար է խառնուել: Ու, իսկապէս, ո՞ր պետական սահմանի մասին էր խօսքը: Ու երբ «պետական սահմանից» անցանք՝ արեւածագ էր, երեւում էր փոքրիկ ու կոկիկ, տպուորիք քաղաքը, շուրջը անլափ թարմ, կանաչ ու արեւաշող: Այդպէս մտանք Անաստան:

Երեկոյեան հասանք ինչմ, իսկ յաջորդ առաւօտեան՝ Լիւբլին, որտեղ շատ երկար՝ ժամերով կանգ առանք: Վաղոններ էին անջատու մ, ուրիշները միացուած: Մեր վաղոնները կցուեցին նոր գնացքի: Պայծառ արեւ էր: Դիմացը՝ երկաթգծերի մի հակայական դաշտ: Կողքի գծի վրայի էշերունը գինու առական էր, ոսկմական պիտոյքներով բեռնուած: Բաց վաղոններու մ՝ ուղեկցող գինու որներ:

Մերոնցից ոմանք իջնելով՝ ժօտեցան նրանց, թեթեւ գրոյցի բռնուելով: Տարեց գինու որականներից մէկը ժօտեցողներին հարցրեց, թէ արդեօք իրենց հետ խորհրդային դրամ ունե՞ն: Գերիները գրական պատասխան տալով՝ գրպանից հանեցին ու ցոյց տուին: Գերմանացին վերցրեց մի թղթագրամ, երկու ձեռքով ծայրերից բռնեց, նայեց Լենինի նկարին ու հանդիսաւ որապէս արտասանեց. «Վչադ իմիր Իլլիչ Լենին»: Ուրիշ՝ ոչինչ: Բայց շատ լաւ երեսու մ էր, որ որոշակի ակնածանքով է արտասանում այդ բառերը: Այդ պատկերը անջնջելի մնաց յիշողութեանս մէջ: Եւ այն ժամանակ ինքս ինձ մտածում էի՝ ի՞նչ հակառական բան է աշխարհը: Մարդիկ միւս կողմից միջոններով են փախում լենինեան միջավայրերից, իսկ այստեղ ուրիշները կարօտով են մտածում չտեսած ու չնաչափած, հետաւոր իրականութեան մասին, չիմանալով՝ թէ ինչու:

Յունիսի 7ի իրիկնադէմին, Տարնոյն ու Բոխնեան ետեւ թողնելով, կանգ առանք Կրակովի կայարան շահած ու շատ ուպտեցինք: Հենց այդ պահին էլ թղթին յանձնեցի թուցիկ տպագրութիւններս «չալ-չալ անասունների եւ իւրաձեւ մեղուափեթակների» մասին, լեշտելով, թէ՛ «Տարնուից սկսած բնութիւնն անկի գեղեցիկ է դառնում. ձայնից՝ բլուրներ, անտառապատ, հեռուում՝ լեռներ, բնակավայրերը բարեշէն, մարդիկ աշխոյժ: Պայծառ արեւ»:

Վերջապէս, շարժուելուց անմիջապէս յետոյ, կայարանի ժօտեց սկսած, մի անշարժ գարմանալի պատկեր պարզուեց աչքերիս առջեւ: Աջ կողմից, երկաթուղի-գագծին գուգահետ անմշակ ու կանաչապատ ճանապարհով, երեւի մէկ կիլոմետր անընդհատ, շարժուում էր մի բազմութիւն, — կին, աղամբրդ, փոքրահասակ, մեծահասակ: Գունազեղ հաղուստներով ու գուարթի դէմքերով: Նախ թուաց, թէ երեկոյեան լաւ եղանակին զրօտանքի են դուրս եկել: Բայց այդ բացարձակութիւնը չբաւարարեց ու տեսարանի արտասովոր բնոյթը անբացատրելի մնաց իմ գիտակցութեան մէջ:

Բազմաթիւ ու շարժուութիւնը հրախրեցի տեսարանի վրայ, զարմանք յայտնելով, որ Լեհաստանի նման մի նուաճուած երկրում մարդիկ կարող են այսքան անհոգ ու զուարթ լինել: Նա էլ հաստատեց տեսարանի արտասովոր լինելը եւ կարծիք յայտնեց, թէ երեւի միւս նուաճուած երկրներում եւս քանակ-չութիւնը գոհ է իր միճակից: Դա, ի հարկէ, վիճելի կարծիք էր երկուսիս համար, մանաւանդ այդ պահին: Բայց հաստատ էր, որ նա եւս տպագրուած է տեսարանից ու այդ տպագրութեան ազդեցութեան տակ է «ժողովուրդ» միւս բոլոր հնարաւոր բացասական երեւոյթները:

Գնացքը հեռացաւ կայարանից, բայց կայարանամերձ պատկերը չհեռացաւ իմ յիշողութիւնից: Տարիներ շարունակ այդ պատկերը ժամանակ առ ժամանակ արթնանում էր իմ մէջ ու բացարձակութիւն պահանջում: Ի վերջոյ թուաց, թէ պտայ: Տարուայ այդ եղանակին իրար են յաջորդում կաթոլիկ եկեղեցու գանազան կրօնական տօներ: Իսկ յայտնի է, թէ լեհերը որքան են կապուած իրենց հաւատին ու ծէսերին: Ուստի, 1942ի Յունիսի 7ի տեսարանը տօնական քայլերթ էր՝ անպայման:

Գիշեր էր, երբ մեր վաղոնները կանգ առան մի անյայտ կայարանում: Առաւօտեան տեսանք, որ դրանք անջատուած են: Ապա մեր ուղեկիցները

յայտնեցին, որ տեղ ենք Հասել, վայրը կոչուում է Աուչուից, այդ շրջանը ժամանակին պատկանել է Լեհաստանին, իսկ այժմ Գերմանիայի մաս է կազմում: Կայարանից դուրս գալով, ճանապարհով քայլեցինք ձախ ուղղութեամբ, Հասանք մի բազմալարկ շէնքի:

Յայտարարու եց, որ պիտի գնանք բաղնիք, ախտահանման եւ շորափոխութեան: Բաղնիքը համակենտրոնացման ճամբարում էր, որտեղ Հասնելու համար բաւական պիտի քայլէինք: Պիտի մտնէինք տիրահոշակ դարպասով, որի վրայ գրուած էր «Արքայտ մախտ Փրայ» (Աշխատանքը դարձնում է ազատ), ապա թեքուէինք աջ: Բաղնիքը բարաքներէից մէկում էր, բաւական պարզունակ: Որոշ ժամանակ սպասեցինք, մինչեւ որ ի վերջոյ բաղնիք մտնելու կարգադրութիւն եղաւ:

Այդ ընթացքում, բարաքի առջեւ, ոմանք զրոյցի բռնուեցին մի յաղթամարմին կայանաւորի Հետ, որը կարող էր բացատրուել որսերէն: Նա ասաց, որ փնջը չէ՛ է, կան նաեւ ուրիշ չե՛հեր, բայց ճամբարի բնակչութեան մեծ մասը հրեաներ են: Երեւի նաեւ ուրիշ բաներ պատմեց, որոնց անտեղեակ մնացի:

Բաղնիք մտնելուց առաջ յայտարարու եց, որ մեր վրայի Հազուստն ու իրերը պէտք է թողնենք մի սենեակում, յետոյ ուրիշ Հազուստ ստատանալու համար: Եւ որ միտմամանակ Հնարաւորութիւն կը լինի Հին Հազուստի միջից, յետոյ, ջուկը յասկապէս կարեւոր իրերը ու վերջնել: Բայց ճիշտ նոյն ժամանակ լաւ տարածուեց, թէ Հին Հազուստը այլեւս չենք տեսնելու: Նաեւ ուսապարկները, որոնց մէջ գանազան պիտոյքներ կային: Ի՞նչ անել: Անելուանելի վիճակ էր: Անհնարին էր այդ ուսապարկերը բաղնիք տանել: Եւ ամէն մարդ կողմնորոշուեց իր Հայեցողութեամբ: Ես կարողացայ վերջնել միայն այնքան բան, ինչ որ կարելի էր փաթեթել ու ամփոփել թաշկիտակներէ մէջ: Մնացածը կորաւ սոսաւտ, մի շաքթ յիշատակի իրերով ու պիտոյքներով, մօրս Հիւսած գուլպաներով, եւ այլնով:

Շատերն էին դժգոհ իրերի նման դասաւորումից: Քանզի, գինուորական համազգեստից բացի, ունէին նաեւ անձնական կարեւորութիւն ունեցող ստարկաներ: Ոմանք մտաղիբ էին նոյնիսկ համազգեստի ինչ-որ մասեր պահպանելու: Նման բողոքների առթիւ ու շեկից վարիչներն ասում էին. «Այլեւս ոչ մի բանի պէտք չեն այդ հագուստները: Մոռացէ՛ք, հրաժարուեցէ՛ք դրանցից, ընդմիջտ»: Յունիսի ծի առաջին կէտը այդպէս անցաւ, բաղնիքի եւ շորափոխութեան ընթացիկ հոգեբերով: Միտմամանակ յայտնեցին, որ տեղ Հասած խմբից որոշ թուով մարդիկ անմիջապէս պիտի մեկնեն Բեռլին: Պարզու եց, որ մեզից 100 հոգի մնում են կայանում, իսկ մեկնողները 30 հոգի են՝ ապիստաները:

Բեռլին նոյն օրը գնացինք 30 տեղանի հանրակառքով, կատովից-Օպպպէն-Բրեդ գծով, կողանցելով Բրեւյաւր, կարելով անտատները: Անցնում էինք նաեւ փոքր բնակավայրերով՝ գիւղերով, որոնց ծայրին հասնելու էին սպասում կաթով լի փակ ու փայլուն ամանները: Շատ բնակիչներ չէին երեւում: Մի տեղ՝ կարծեմ խալմերու կում՝ կանգ առանք բենդին վերջնելու համար: Առհասարակ, ինքնաշարժային երթեւեկութիւնը բաւական ախոյժ եւ աչքի էր ընկնում մայրուղիներում, զարմացնելու աստիճան:

Արդէն մութն էր, երբ հասանք Բեռլին: Հանրակառքը որոշ ժամանակ կանգ առաւ արուարձանային խաղափոփողներից մէկի վրայ: Պարզու եց, որ փողոցի տներից մէկում է մեր վարորդի թէ ուղեկցողի բնակարանը: Մեծաքանակ ճամպրուկներ ու արկղներ էին հանում մեքենայի կողի համապատասխան պահարանից եւ բնակարան տեղափոխում: Տեղեկացանք, որ արկղների մէջ կենդանի հաւեր ու տարբեր տեսակի մթերքներ էին տեղաւորուել եւ Աուչուիցից Բեռլին բերուել:



Ճանապարհը շարունակեցինք: Հասանք մի դարպասաւոր մուտքի: Եղան համապատասխան ձեւակերպութիւններ՝ յանձնուժ-ընդունում: Ապա քայլեցինք ուղիղ գծով, մտանք մի բնդարձակ ճամբարային բակ, տեղաւոր-ւելով փայտաշէն բարաքներից մէկում:

2

Առաւօտեան տեղեկացանք, որ դռն ու մէնք ղնչանաւ որ Զաքարիան-ուզէնի համակենտրոնացման ճամբարում», Բեռլինից շուրջ 30 կիլոմետր հեւ-սիս-արեւմուտք ընկած Օրանիենրուրգի մօտ: Այդ կայանը եւս լեցուն էր նախկին Կարմիր բանակայիններով: Նրանցից 100 հոգի պէտք է մեկնէին նոյն օրը: Առհասարակ, մեծ մասամբ, բուսական հասարակութիւն էր: Աստիճա-նարար վարժուեցինք միջավայրին: (Աւելորդ չէ նշել, որ այդ ճամբարը հետա-զայում, 45ից մինչեւ 50 թուականը, ծառայեց մոսկովեան իշխանաւորներին ու նրանց արհեստ-գերմանական արբանեակներին, քանի որ դրա կարծքը նրանք աւելի շատ ունէին՝ մա՛նաւանդ՝ այն ժամանակ: 50ին յուծարքուեց եւ չգիտեմ ինչի վերածուեց):

Եկողներս ստացանք նորատեսակ հանդերձաւորում: Առհասարակ, դրան յարողած ամիսներին, դանազան կարգի հազուատներ հագնելու պա-տեհութիւններ շատ ու նեցանք, որոնք ժամանակին ուրիշների համազգեստ-ներ էին եղել: Դրանք ռազմավարային ապրանքներ էին՝ հարաւարական, շե-խտողովակեան, լեհական: Չգիտեմ, թէ մեր հագածն ինչ է: Անընդհատ ստանում-յանձնում էինք:

Այդ կայանում ընդունուած էր հարաւարական համարուող զգեստը, որքան կարելի էր ենթադրել ասուածներից: Սպայական խմբինը տարբերուժ էր միսներէից, աւելի ներկայանայի տեսք ու գոյն ու ներ:

Բակը քառանկիւն էր եւ երկար: Մուտքը ծայրից էր: Միւս ծայրը ճամ-բարի թիկունքում էր: Մեր արածադրութեան տակ գտնուող բարաքները մէկ կողմից էին: Իսկ միւս կողմը փակ էր, խուռ: Միայն մի փոքրիկ հատուած իրիւ-րու մարան էր ծառայում: Մենք գտնուժ էինք Յէրզ բարաքում: Կար ճաշա-արահ, լուսացարան, հաւաքոյթների ու պարապմունքների համապատասխան վայր:

Առաջին օրն իսկ ձեռքս ընկան ուսներէն լրագրեր,- Բեռլինի եռօրեայ ու բազմաթիւ «Լոպոյէ սլովո»ն («Նոր խօսք»), ռազմագերիների «Կիլիշը» («Կանչը») եւ «Լոպա Դարբա» անուանով սլաւոնական մի այլ թերթ: Տեղեկացայ նաեւ, որ գրադարան կայ, խորհրդային եւ արտասահմանեան ուսներէն հրա-տարակութիւններով: Նախ վերցրի Ալբրեխտի գրքոյկները, որոնք վերաբե-րում էին խորհրդային կեանքին: Ալբրեխտը խորհրդային երկրում երկար ապ-րած գերմանացի մանագէտ էր: Աշխատել էր ծանր՝ արցի նարերութեան ժողովոժատում, մօտիկից ծանօթ էր Սրբոնիիիձէին եւ համակրանքով էր ար-տայայտում նրա մասին: Չգիտեմ, թէ ինչ պայմաններում էր նորից Գերմանիա ընկել եւ գրքեր գրելու: Գործն ստանձնել: Այդ գիրքերը հետաքրքրական էին մի շարք առումներով:

Մեզ յայտնեցին, որ յաստիկայում մի շարք խմբական շրջագայու-թիւններ պիտի կատարենք: Առաջին անգամ հանրակատրով շրջեցինք Բեռլին-նի կենտրոնական շրջանում, Յունիսի 11ին, դիտելով դանազան յիշարժան կէտեր: Անցանք Ալբրեխտի հրահրական հրապարակով, տեսանք Վիլհելմ շտրասսեի կատապարական շէնքերը, հրկիզուած Թայխատտոյր, մարզահրապարակը, եւ այլն: Դրանց էլ կարելի էր տեսնել, որ մթերքների ու առաջին անհրաժեշտու-թեան իրերի՝ պատերազմի պայմաններում ոչ-սովորական առատութիւն կայ:

Ճամբար վերադառնալուց յիսոյ կայանու մ գրունցման ենթարկու եցինք:

Տեղեկացանք նաև, որ շարախը մէկ անգամ, Ռ. բրաթ օրերին, բազմեք  
և: կինս պնայր պարտողի կարգ է: Իսկ Շարախ օրը ամէն ինչ կարգի բերելու  
օր էր: Կիրակին էլ՝ Կիրակի, իր իսկական իմաստով: Այսպէս, Յու նիսի 12ին,  
եղանք արուարձանում՝ կիրոթատրոնում եւ բազմեքում, նաև լուսանկար-  
ւեցինք: Կիրոթատրոնում ցուցադրուեցին (ոուսերէն բացատրադրերով)  
«Նրեխաները մեր ապագան են», «Ամուրիների դրախտը» Փիլմերն ու մի  
ընթացիկ ամփոփանկար: Յաջորդ շարախ ցուցադրուեցին «ԼՄԻՄՄ-ի անկախ  
սէրը» Փիլմը եւ մի գիտա-հանրամատչելի փաստանկար:

Յու նիսի 16ին եղանք մերձակայ մի բանու որական աւանում եւ յարա-  
կից գիւղում, ծանօթանալով այնտեղի կեանքի պայմաններին:

Ազգրից եւեթ պարզ էր, որ կայանը մնայուն բնակչութիւն չուներ, այլ  
նրա կազմը խիստ փոփոխական է: Երբ ամսի 9ին՝ Հարիւր ուսուներ դեսպին,  
17ին՝ մի այլ Հարիւրեակ եկաւ: Իսկ յաջորդ օրը՝ մեզ հետ եկած կովկասցիներ-  
րից 15 հոգի ճեպարձայ գնացքով նորից Աուշուից ուղարկուեցին, քանզի հա-  
մեծատարար քիչ էին ծանօթ առդիտողներին: Եւ մեզ՝ միւս առդիտաներին՝  
միացնելով նոյն կայանում արդէն գտնուող ուրիշ կովկասցիների հետ, կազ-  
մեցին 32 հոգեանոց Երզ խումբը: Զբաղուած էինք մարզի բանալու վրայ,  
մարմնամարզութեամբ, շարային պարապմունքներով, որոնք ղ ժգոհութիւն  
էին յարուցում շատերի մօտ՝ որոշ նկատառումներով:

Այդ օրերի գրոտու մներէ մէջ ասուում է. «Ազգաօրէն կարդում եմ»,  
«Առիթը չեմ փախցնում կարևոր բաներ ընթերցելու», կամ էլ, Յու նիսի  
21ին. «Այս մի քանի ժամանակներում երեւի հնարաւորութիւն կ'ունենամ  
աւելի ընդարձակ չափի գրականութիւն ընթերցելու: Ռուսները բնիտ-  
րիստիքային բացի այլ բան չեն կարդում, այնպէս որ, մնացած գրքերը ըն-  
թերցողի կարիք ունեն. սակայն հիմա յանձնարարած կարգով մշակուած են  
պարապմունքների համար — գրադեցում են»:

Ընդհանրապէս, կայանի բնակչութիւնը միատարր ու միազին չէր, այլ՝  
խիստ խառնաբղետ՝ մասնագիտութեամբ, մակարդակով, մտայնութեամբ: Ոչ  
ոքի չէին Հարցրի, թէ ինչ աշխարհայեացք ունէր, հետազայում էլ չհարցրին:  
Այլ՝ մարդկանց ջոկել էին ըստ այս կամ այն գրադիտուների: Ինձ եւ ինձ նման-  
ներին այդտեղ էր հասցրել բանակում առդիտ եղած լինելը: Ռ. բրեյներին էլ՝  
ուրիշ հանդամանքներ էին այդտեղ հասցրել: Դրանով հանդերձ, սկզբից եւեթ  
տեղեկացայ, որ այդտեղ գտնուողները, եկող-դնացողները, համախառն ձե-  
ւով «սակախիտ» են համարուած ղեկավարութեան կողմից:

Բնակիչների շարքում քիչ չէին նաև ուղղակի հակադրմանական շեշ-  
տըւած տրամադրութիւն ունեցողները: Այսպէս, յիշում եմ մի շուրաւերցի  
երիտասարդի, որն ամէն մի հայի հանդիպելիս, բարեւի փոխարէն, միշտ նոյն  
խօսքն էր կրկնում. «Գերմանիան չի՛ յաղթելու»: Առանց յայտնելու բացատր-  
ութեան: Մէկ ուրիշը՝ Շիրակի կամ մերձակայ կողմերից, Օռլան էր  
ասում, հետեւեալ հիմնաւորումով. «Եղբայր, այսօր ճանապարհ կտրե-  
ցիմք եւ յանսանք մէկի, որ գերմանացիներից գոն յիմի»: Եւ, մեզմ' ասած,  
այդ Հարցում շափազանցում էր, քանզի անձամբ ոչ մի ուրիշ չեզու չգիտէր եւ  
չէր կարող ունէ այլազգու հետ յատակ մտքեր փոխանակել: Բացի այդ, մենք  
աչքով շատ բան կարող էինք տեսնել, բայց մարդկանց հետ շփուելու հնարա-  
ւորութիւնը խիստ սահմանափակ էր: Իսկ նուաճուած երկրների մարդկանց  
ղ ժգոհութիւնը շատ բնական ու ինքնին հասկանալի էր, բայց ոչ՝ նուաճողի  
պարսութեան վճռական նախապայման: Եթէ բնակչութեան ղ ժգոհութիւնը  
բաւարար հիմք լինէր, հենց խորհրդային իշխանութիւնն առհասարակ գոտու-  
թիւն չպիտի ունենար, քանի որ իր ծննդեան օրից նա ուղեկցուել է համաժո-

զոմբոգական դժգոհութեամբ եւ, հակառակ դրան, տեսում է մինչեւ հիմա՝ ամբողջ աշխարհին ու մարդ յու թեանը մարտահրաւիր կարողալով: Գերմանացիները հանդէպ արուող ք: նադատութիւնը երբեմն տարօրինակ շափազանցութեան էր հասնում: Այսպէս, կայանի օրու այ ճաշը մեծ ամաններով բերում էր մի ամբակազմ ու կարմրաթուշ կայանաւոր, զերմանացի, որին «Գերման» էին կոչում եւ որն ասում էր, թէ ինքը կոմունիստ է: Եւ ահա հայերից սոմանք ասում էին. «Այսօր Գն էլ ազգամուշ ա՞զգ...: Ազգի անուր մարդուն եմ տըւել»: Նրանք պարզապէս ի վիճակի չէին անդրադառնալու, որ նրա իրական անունը «Հերման» է եւ միայն ուռեսներն են «Գերման» կոչում: Բացի այդ, զերմանացիներն իրենք իրենց «Գերման» կամ «Գերմանիս» չեն կոչում եւ որ դա զուտ պատմական ու ժառանգարար մնացած անուն է: Յետոյ՝ կոմունիստ «Գերմանը» կամ նրա անունն ընտրած ծնողները չէին կարող «ազգամուշ» լինել: Եւ վերջապէս, մի՞թէ ազգամուտութեան նշան է, որ հայերը յաճախ նախընտրում են Հայկ ու Արմէն, Հայկուհի ու Արմէնուհի եւ յարակից միւս անունները:

Այսպէս թէ այնպէս, այսօրու այ դիրքերից նայելով, Գերմանիայի ապագայի վերաբերեալ նրանց ասածը իսկական «մարգարէութիւն» էր: Սակայն այդ կանխատեսութիւնը բխում էր նրանց ո՛չ թէ խելքից ու հեռատեսութիւնից, այլ՝ պարզ ցանկութիւնից, որը, իրերի բերմամբ, ի վերջոյ համընկաւ պատերազմի բուն ելքին: Բայց այն ժամանակ զէպերը կարող էին եւ այլ կերպ դասաւորուել, նոյնիսկ հակառակ ուղղութեամբ:

Կայանի ղեկավարութիւն ասուածը հետեւեալն էր: Կար գերմանացի համազգեստաւոր պարեաւ, նախ՝ Եննյոկերը, իսկ յետոյ՝ դ-ր Վուլֆէն: Առաջինը զուարճալիութեան չափ ձեւապաշտ էր, ճաշի եւ այլ ժամանակ ճնահապետական» ծիսեր գործադրող, իսկ երկրորդը՝ համեմատաբար սակաւախօս ու վերապահ, մեր ներքին գործերին շատ շփոթմտող, կարծեա իր պաշտօնն ու զերբ յուրջ չէր ընդունում: Նա շատ չէր երեւում կայանում, այլ միայն՝ հրահանգներ հաղորդելու համար: Կար ուսներից կազմուած «սպայակալ խումբ», որ երեւի մնայուն էր կայանում, զէթ՝ ուրիշներից աւելի երկար ժամանակով: Այդ խումբը կազմակերպում էր դասախօսութիւններ, գեղարուեստական ելոյթներ: Մի տեսակ միջնորդի դեր էր կատարում մեր եւ պարեպի միջև: Գեղարուեստական ելոյթները մաս էին կազմում ընտրական, ժողովրդական ու զինուորական՝ ապացուցարկական երգերը, պարերը, եւ այլն: Յիշում եմ, թէ բարու եջի մի պատանի (մայրը ուս) ինչպիսի յուզումով ու ջերմութեամբ էր երգում «Սիմիլի պլատոնիկ» («կապոյտ քաշկիմակ») երգը: Գոմորով ազգանունով մի բարձրահասակ սպայ՝ մեծ հմտութեամբ երգում էր ուսական ու ու կրթնական ժողովրդական երգեր եւ նոյն հմտութեամբ երգչախումբ վարում: Երեւում էր, որ մասնագիտական մակարդակ ունի: Ձինուորական քայլերգներից աւելի յաճախ լսում էին «Տաշալկա» եւ նման տարածուած երգեր՝ թէ՛ շարքով քայլելիս եւ թէ՛ բուն կայանում:

Արդ, այդ ուսական ղեկավարութեան նախաձեռնութեամբ ստեղծուել էր «Ռուսաստանի ժողովուրդների ազատագրութեան մարտական միութիւն» (ՌՓԱՄՄ) անունով մի կազմակերպութիւն: Եւ առաջադիւում էր, որպէսզի կայանի մարդիկ, առանց ազգային խորութեան, անգամազրուեն: Գոյութիւն ունէր նոյնիսկ մշակուած ծրագիր: Տրուում էր համապատասխան տպագիր վկայական: Անկարելի է պատկերացնել, որ դա ստեղծուած լինէր առանց գերմանացիների դիտութեան, համաձայնութեան ու, թերեւ էլ, թեւադրութեան: Այնպէս որ, ՌՓԱՄՄի գոյութիւնը հանրայնա իրողութիւն էր:

Նկատի ունենալով խմբերի յաճախակի տեղափոխութիւնները, մի անգամ ուսներից մէկը կայանի բնակչութիւնը բնութագրեց տարածուած գործըւածքով՝ «Նրանք, որ գալիս եւ գնում են»: Եւ ահա Յունիսի 23ին եւս մեկ-

նեցին 25 հոգի, որոնցից ութը միջին-ստիպանցիներ էին եւ Վարչաւայի իրենց յատուկ կայանն էին գնում: Յաջորդ օրն էլ մեր խմբից 10 հոգի՝ Աուշուից: Նրանց մեկնելու նախորդ երեկոյեան կազմակերպուեց ինքնագործունեութեան երեկոյթ, երկու անգամ, եւ գնացողներն ստացան ՌԺԱՄԻ անդամութեան վկայականներ: Այդ Հանգամանքը բուն խօսակցութիւններ յարուցեց մեր խմբում:

Վրացիները կտրականապէս յայտարարեցին, որ իրենք նման մի կազմակերպութեան մէջ երբեք չեն մտնի: Նրանց առարկութեան հիմնական կէտն այն էր, որ զառուսական կազմակերպութիւն է, իսկ վրացիները ոչ մի դէպքում չեն ստատանի ժողովուրդներէջ չեն: Նրանց փաստարկումը, ի Հարկէ, շատ էր վրացազարբ՝ բուն, անզիջում եւ չափազանցուած: Բայց ես իմ կողմից մտածեցի, որ սկզբունքով ճիշտ են ասում: Միաժամանակ մտորմունքի մէջ ընկայ, թէ ինչո՞ւ նոյն տարիքի վրացիները գլխով այդպիսի ազգազրահ միտք է անցնում, իսկ ուրիշները չեն էլ անդրադառնում այդ կարգի կենսական կամ ձեւական Հարցերին, թէ եւ նոյն պայմաններում են մեծացել ու այժմ էլ նոյն պայմաններում են գտնուում:

Ի Հարկէ, ամէնից առաջ զառիսում էր վրացիների որոշ խափ բնածին այլամերժութիւնից, միս ու արիւն դարձած Հաւաքական աւանդութիւնից, այլ ոչ թէ տուեալ պահի կշռադատուած վերլուծութիւններից ու եզրակացութեաններից: Նրանք ամէնից աւելի այլամերժ էին Հենց Հայերի Հանդէպ: Ամէն տեսակետից: Նրանք թւում էր, թէ իրենք ամէն ինչ են, Հայերը՝ ոչինչ: Այնքան էին Համոզուած, որ անկարելի էր գոհել մասամբ տարճամոզել: Մի անգամ իրար մէջ շօշուփատում էին Հայ երաժշտութիւնը: Մի այլ վրացի, Մայսուրաձէն, որը կիրթ մարդ էր եւ երաժշտութիւնից տեղեակ, նոյնիսկ դաշնամուր էր նուազում, մեղմօրէն գիտողութիւն արեց, թէ Հայդպէս մի՛ առէք, Հայերը լաւ երաժշտութիւն ունեն: Անմիջապէս ամբողջ խմբով աղմուկ բարձրացրին, թէ նա ինչպէ՞ս կարող է այդպիսի անհեթեթ միտք արտայայտել: Ընդ վրացի չե՛ս, դու հա՛յ ես, — գրունցին ամէն կողմից: Պարզ է, որ նրանց մտքում վրացի լինելը յատուկ աստուածային շնորհ էր, իսկ Հայ լինելը՝ կատարեալ անարգանք:

Այդ ժամանակ էր, որ ինձ Հետ խօսակցութեան բունուց թիֆլիսեցի Ռաֆիկը: Նա ծնունդով նուիսցի էր, փոքր տարիքում թիֆլիսում ապաստանած: Մենք տարբեր խմոր ու մտայնութիւն ունեցող մարդիկ էինք, բայց իրար Հետ յաճախ էինք զրուցում արեւելի-թիւրքի շուրջ: Ռաֆիկը կենքի փորձառութիւն եւ Հոտատութիւն ունէր, ղեկավարի միջք: Նաեւ՝ ասելիք: Այնպէս որ, անտեղի չէին անցնում մեր զրոյցները, ո՛չ ինձ, ոչ էլ նրա Համար:

Նա ուզեց իմանալ իմ կարծիքը ՌԺԱՄԻ մասին: Ասացի, որ տեղեակ եմ գործին ու, մա՛նաւանդ՝ վրացիների դիրքին: Որ՝ մեր անորոշ ու կախեալ վիճակում, ի Հարկէ, իմաստ չունի նման կապերով կաշկանդուելը: Բայց եւ այնպէս, չենք կարող ասել, թէ անողուտ բան է ամէն մի կազմակերպութիւն: Եթէ կան մարդիկ, որոնք ինքնարեքարար արձանագրում են՝ անպայման սխալ չեն վարում: Ես անձամբ չեմ ձգտում գրան կամ նման բաների, իսկ եթէ մի անգամ Հաւաքարար նպատակայարմար գտնեն՝ բացառութիւն չեմ կազմի ու չեմ խոստար: Վերջի վերջոյ, ամէն ինչ անվնաս ձեւականութիւն է: Ռաֆիկը խտորէն միջամտեց. «Ինչի՞դ է պէտք: Ուզում ես անպայման հինգ քուի կուսակցական լինել»: Յարձակուեց այնպէս, որ կարծես թէ գիմումը մեղքիս Հերթի եմ սպասում: Մինչդեռ իմ ասածներից բնաւ չէր բխում, թէ այլընտրուած եմ նման մի ցանկութեամբ: Ինքն էլ, իր Հերթին, լաւ էր Հասկանում: Բայց զրոյցը բորբոքելու եւ խթանելու Համար դիտարկեալ սրտում էր գրոյթները, մտքերս պեղելու նպատակով: Այդպէս է, որ «դուրս մնացինք» ՌԺԱՄԻ շարքերից:

Մենք, որդի ն ծանօթ թեր ժերից բացի, ստանում էինք նաև Ռիկայու մ տպու ողճնովի պուտ» («նոր ո ղի») հանդէսի համարներ: Կար Յանւ Աա- զիորնդուենիչ, որով իրեկոյեւ Ս, Ժ. 22ին, աուսերէն հաղորդումներ էինք լսում Բրատիսլաւայից: Ես, իմ կարգին, մա՛նաւանդ որապատի թեան ժամանակ, կարողում էի Տրիմեանովի, Արկաղի, Աւերյեմկոյի, Գոգոյի եւ ուրիշների գրեթէ: Ազարեկովի «Չեկան գործի վրայ» գիրքը ձեռքից ձեռք էր անցնում եւ ինձ հերթ չէր հասնում: Ուստի՝ որոշեցինք խմբական ընթերց- ման դիմել: Մէկը՝ այսինքն / ա՛՛ կարողում, միւսները չըթապատած լսում էին: Հայերի մասին է խօսքը:

Դաշտաղ նացու թիւն էինք կատարում մերձակայ լճափ, որտեղ եղանք մի քանի անգամ: Այնտեղ նկատեցի, թէ՛ գերմանական բնակչու թիւ նը որքա՞ն է կապում ան ջրին եւ արեւի որքա՞ն կարօտ ու նի: Այդ իրողու թիւ նը հաստա- տւեց շատ անգամ՝ հետազայում:

Յունիսի 26ին կինոթատրոնում դիտեցինք «Օպերետկա» Ֆիլմը եւ յաւելու ածներ՝ «Երգ գերմանական ժողովրդի մասին», պատկերներ պա- տերագմական կեանքից եւ Հայդրիսի թաղման արարողու թիւ նից: Յու լիսի 3ին՝ Ֆիլմ՝ հրէութեան մասին, պատկերներ նիւրնբերդեան ցոյցերից եւ պա- տերագմական առօրեայից:

Մենք ստանում էինք մեր սննդարժեքը՝ ամէնօրեայ տաք կերակուր- ներ, հաց եւ այլ շէր» մթերքներ: Բայց լինում էին եւ ընթացիկ գողութիւն- ներ: Աւելի յաճախ՝ գլխատակի պայուսակում իրբեւ պաշար պահուող հացի կտորներն էին գողանում: Այս առթիւ քանիցս ընդհանուր ազգարարու- թիւները եղան, խնդրուեց շարժանալ ընկերոջ բաժինը»: Բայց՝ ապարդիւն: Եւ ահա մի անգամ, շարք կանգնած ժամանակ, բոլորին հրահանգուեց մէկ առ մէկ լեզուները հանել ու ցոյց տայ: Այդ ձեւով էլ բռնուեց գողը՝ մի ոտս պա- տանի: Հացի կտորը նախապէս ճեղքել եւ թանաքով ներկել էին ներսից: Գողը անպիտարար ծածկել, կերել էր մէկ շնչով եւ նրա լեզուն ու բերանը ներսից թա- նաքով էին ծածկուել: Ու հիմա, ի տես ամէնքի՝ մերկացուել էր բոլորի առջեւ, շամաժի, համրի ու ապուշի նման կանգնել, շհասկանալով, թէ՛ ինչ է կատար- ւում շուրջը:

Այդ ժամանակ, ամէն բանից անկախ, ինձ անհանդիստ էի գգում ըն- թացիկ սննդի պատճառով: Ախորժակս փակուեց: Դեմքիս մաշկը որոշ շափով դեղնեց: Մնու նղը բերում էր ճամբարի խոհանոցից, որը հիմնականում բնա- կանոն էր՝ ու բիշներ չէր վնասում, բայց ինձ համար ահա՛ն էր եւ տրամադրու- թիւնս փշաքրեց: Հայ տղաների հետ վիճակս վերլուծելով եզրակացրինք, որ երեւի դա գեղնախոտ (մելուխա) է եւ պէտք է բուժարան դիմել: Բուժարանը դիմացի բարաբու մ էր: Յու լիսի 5ին մտայ եւ 16ին արձակուեցի:

Այնտեղ կային շարեշար մահճակալներ, բոլոր յարմարու թիւ ններով: Կային եւ մի քանի հիւանդներ: Ապաստակողները մերոնցից էին, իսկ ժիշկը՝ գերմանացի կալանաւոր, հանրայայտ զոյաւոր հայու ստով: Մի յաղթանակում ու արաղաշարժ մարդ: Որոշակ ժամին մտնում էր, ստուգում, կարգադրու- թիւ ններ անում, առանց կողմնակի բնոյթ կրող որեւէ խօսքի ու շարժման, ապա շեշտակի արագութեամբ հեռանում, երեւի նաեւ ուրիշների այցելելու ծրագրով:

Սկզբից եւ եթ, շատ շանցած, սահմանուեց յատուկ սննդակարգ (դիէտ), որն անմիջապէս բարերար հետեւանքներ ունեցաւ: Վերականգնուեց առող- ջու թիւ նս: Միս հիւանդները մէկ առ մէկ մեկնեցին, այնպէս որ, վերջում հիւնդ օր բոլորովին մեծակ էի բուժարանում: Ետտ յարմար վիճակ, ընթերցանու- թեամբ զբաղուելու համար:

Բուժարանից գուրս գալուց յետոյ մէկ օր անց յայտարարեցին, թէ՛ կա-

յան է այցելելու: Հիմնադրել: Յանձնարարեցին՝ ամէն ինչ շատուկ խնամաբար կարգի բերել: Իսկ զա նշանակում էր՝ այլաձև նորից աւելի եւ մաքրածը նորից մաքրել: Հիմնադրել այցը արտասովոր շքուայ, քանի որ նրա տնօրինութեան տակ էին երկրի բոլոր ճամբարները, այդ թւում եւ մերը: Սակայն նա չիկաւ ու վերջին պահին ասուեց, որ ուզում է մեզ տեսնել ո՛չ թէ կայանում, այլ՝ դրսում՝ ճամբարում, մեր շարքով քայլելու ժամանակ: Եւ արդէն կինս զնայու օրն էր: Երբ շարքով դուրս եկանք մեր բաժանմունքից, ՚րապարակում կանգնած էին մօտ 20 համազգեսաւոր մարդիկ, այնպիսի՝ դիտքով, որ կարծես խմբանկար են ու զուժ ու նենայ: Անցանք առջեւից, նայեցինք նրանց, բայց բոլորն էլ համազգեսաով շատ նման էին իրար: Առանց այն էլ՝ էինք կարող իմանալ, թէ ով ով է: Լուսանկար չէինք տեսել: Այնպէս որ, Հիմնադրել էլ ե՛ւ տեսանք, ե՛ւ շտեմանք:

Առհասարակ՝ այդ հրապարակը տղ ու ծախ ու զոտ թեւամբ շատ էր ընդարձակ: Երբեմն, այնտեղով անցնելիս, տեսնում էինք կալանաւորների փոքր խմբեր քայլելիս՝ աշխատանքի թէ ինչի համար: Երբեմն էլ տեսնում էինք մի որոշ կէտում կանգնած միայնակ մարդիկ, որոնք այդ ձեւով էին պատմում մորեւէ զանցանքի համար, ի տես ուրիշների:

Այդ օրերին, առաջին անգամ, մի տեսակ «գրպանի դրամ» ստացանք՝ օրական 25 պֆենիգի հաշուով, որը սովորութիւն դարձաւ այնուհետեւ: Պատահական մանր-մունր ծախսերի համար:

Յուլիսի 24ին ուղիտաներիս ստուգեցին մորդէի գործիքի վրայ աշխատելու դժով: Իսկ կինս թատրոնում դիտեցինք՝ «Վիեննական մեղեդիներ» Ֆրիժը, նաև ընթացիկ ամփոփանկարներ: Կայանում մնայուն սովորութիւն էր դարձել այստեղից-այնտեղից ուղիտաների լսելը, օրուայ տարբեր պահերի:

Յուլիսի 26ին գի. զազնացութիւն էր: Բայեցինք բնի հանուր հաշուով 18 կիլոմետր: Իրա համար հարկաւոր էր դուրս գալ ճամբարից, թեքուել ծախ, պատի կողքով ու ճանապարհով շարժուել մինչեւ անկիւն, նորից ծախ թեքուել եւ ճամբարի թիկուղքով անցնող խնուղով շարու նակել ճանապարհը, որի աջ կողմում անտառներ էին, վայրի հասապտուղներով: Այցելեցինք գի. զազնական շրջան տեսնութիւններ:

Նախապէս կատակով ասուեց, թէ գերմանական դարձուածք է, որ եթէ ուզում ես ծանօթանալ որեւէ տնտեսութեան, պէտք է արտաքննուից սկսել, քանի որ այն արտապայտում է տնտեսութեան տէրերի մակարդակն ու քաղաքակրթական աստիճանը: Այդպէս էլ արեցինք, դիտելով ամէն մի անկիւն: Բայց յետոյ անձրեւ տեղաց: Պատսպարուեցինք գի. զական գարեջրատան շէնքում, «Համտեսելու» մուգ եւ բաց գոյնի գարեջուրը, մի քանի բաժակով: Ամբողջ երթը տեսց ու թ ժամ:

Կայան վերադառնալուց յետոյ պատրաստութիւններ տեսանք Աուշուից մեկնելու համար: Յանձնեցինք Յուլիսի 9ին ստացած հագուստները, ընդունում կարգով:

Այսպիսով, Զարսենհաուզենում մնացինք 49 օր, մինչեւ Յուլիսի 27ը: Վերադառնում էինք 17 հոգի- մեկ ադրբեյջանցի, մեկ կարաչայ, 11 վրացի եւ չորս հայ: Ինձ ու Ռաֆիկի հետ էին Բարկէնը եւ Վանիկը, երկուսն էլ լենինականացի:

27ի առաւօտեան «Կենդանաբանական այգի» կայարանից ուղեւորուեցինք եւ, Օդերի Փրանկֆուրտի վրայով, գնացքով հասանք Կատտվից, այնտեղ էլ գնացքը փոխելով՝ Աուշուից մտանք:

Աուշուիցի ծանօթ շէնքում տեղաւորուած էինք ամենավերին 4րդ շարքում: Թէ ինչ էր եղել այդ շէնքը ժամանակին՝ չգիտեմ: Բնակավայրի ծայրում

էր, համարեա՛ միայնակ: Մէկ կողմից բնդարձակ բակ—հրուպարակ ու նէր, մի օ կողմից՝ փողոցն էր, ճանապարհը: Փողոցի կողմի ոչ-լայն մուտքից վերեւ՝ քարի վրայ փորագրուած արձանագրութիւն կար, թուականով, Պիլուսոսի անուան յիշատակումով եւ այլնով: Մի քանի անգամ «կարդալուց» յետոյ մօտաւորապէս կուահեցի, որ զա հանդիսաւ որսպէս բացուած կարեւոր հաստատութիւններից մէկը կարող է եղած լինել:

Շէնքի մեր բաժնի բնակիչները Ղրիմ էին վերադարձել: Այնպէս որ, սակայն աթիւ էին բնութիւնք եկածներս ու մի քանի սպաներ: Մտադուր թիւն էր: Շրջում էի միջանցքներում, տեսողւմ անկիւնում դրուած խարխուլ դաշնամուրը, ծանօթանում միջավայրին: Երկրորդ յարկում արհեստաւորներ էին աշխատում: Կար մի կրպակ, որտեղ գարեջուր, նաեւ այլ պիտոյքներ էին վաճառում: Գնեցի տետրեր:

Կայանի բուն պարեալը դր հուհուն էր: Պարեալ էր կոչուում եւ մայրը Գրիգորեանը, փաստօրէն՝ «ակտիվիստներէ» աւագ ներկայացուցիչը: Մայրի կողքին էր լինում Գրիգորը: Չոր ժամանակ երբեմն նստում էինք բակի կանաչ խոտի վրայ ու խօսում զէսից-դէնից, պատմում մեր տեսածն ու լսածը:

Չգիտեմ, թէ որտեղացի էր մայրը: Խօսում էր ընթացիկ գրական լեզուով, մեզմ ու պուսպ եղանակով: Չգիտեմ նաեւ, թէ բանակում ինչ էր արել, շաբաթի՞ն, թէ՞ այլ բաժնիներում էլ պաշտօնավարել: Երբ պատմեցի Հայկական զօրարժանի վերջին օրերի կացութեան մասին եւ թէ ինչ պայմաններում տեսայ հրամանատար Բարայեանին, նա անմիջապէս յարեց. «Այո՛, այո՛, շատ լա՛ւ եմ ճանաչում. դարաբաղցի է»: Ուրեմն, զինուորական որչափ ծանօթութիւններ ունէր:

Մի անգամ, բակում նստած ժամանակ, հետուից լսեցի ինչ-որ յաճախ կրկնուող մայրն, որոնք կարելի էր շատ բաների նմանցնել՝ մրճահորման, սողոցման, գնդակոծման եւ այլնի: Ականջներս սրեցինք եւ ամէն մէկն իր ենթագրութիւնն արեց: Վերջապէս մէկն ասաց, թէ «սչինչ էլ չկայ, տախտակ եմ ամրացնում»: Մայրն իր կողմից տիրութեամբ յարեց. «Մըսնց համար էլ ամրացնում եմ տախտակը»: «Մըսնք», ի հարկէ, գերմանացիներն էին:

Կայան հասնելու պէս տեղեկացայ, որ այնտեղ հայերէն գրքերի զգալի պաշար կայ: Մայրը բացատրեց, որ այդ գրքերը Բեռլինից են ուղարկուել, Կարմիր Խաչի միջոցով եւ դր Ծրուհեանի կողմից: Շատ տարիներ անց առիթներ ունեցայ հանդիպելու Ծրուհեան եղբայրներից մէկին՝ քիմիկոս ու բառարանագիր Տիրայրին: Բայց մտքովս այնպէս էլ չանցաւ հարցուփորձ անել ու իմանալ, թէ այդ գրքերը յատկապէս ում կողմից ու ինչպէս էին Աուշուիցի կայան հասել:

Այդ գրքերը սպուել էին Փարիզում, Բոստոնում, Կահիրէում եւ այլուր: Թէ՛ գեղարուեստական եւ թէ պատմա-հասարակագիտական բովանդակութեամբ: Առաջին օրն իսկ ձեռքս առայ «Մայիս 28» ժողովածու, «Է.Յ.Ի.» պատկերամատենը (1936 թ.) եւ Ահարոնեանի «Կարօտ հայրենիք»: Ապա՛ չբանա փաստաբանականի «Լեռնային պատերազմը»: Ու այդպէս շարունակ:

Յուլիսի 29ին առաջին անգամ մեզ հանդիպեց պարեալը եւ խօսեց ընթացիկ նիւթերի շուրջ: Այդ ժամանակ, ինչ-որ հիւանդութեան պատճառով, քաղաքում կարամտին էր մտցուած: Մեզ հետ տեսնուեց նաեւ մայրը: Բայց նրա խօսքն աւելի շուտ ներքին կարգապահութեանը, մաքրապահութեանն ու յաճախ խափանուող արտաքինների հետ խնամքով վարուելուն էր վերաբերում, որպէսզի գերմանացիները մեզ անկիրթ վայրենու տեղ չղնեն: Եւ նրա այդ գիտողութիւններն իսկապէ՛ս որ լուրջ հիմքեր ունէին...

Օգոստոսի 2ին Ղրիմից նոր խումբ հասաւ.՝ վաղածանօթներ եւ նորեր: Այդ կապակցութեամբ, յաջորդ օրը պարեալը բակում երկար պարզուեց մեզ

հետ: Հարցաթերթիկներ տուին յրացնելու համար: Շէնքի մի մասը ժամանակաորայն գրադեցնում էին գերմանացի գինու որները, երեսի կարունտերի պատճառով: Բակի ծայրում, պարզունակ եւ բնագարձակ՝ տախտակապատ չրացուցիչ արտաքնոցից ոչ-հետու, կար մի տնակ, որտեղ շատ շանցած ուսուցիչներին պարապմունքներն էին լինում: Դրանք վարում էր մի բարձրահասակ բեռնիցի աստիճանաւոր, սեւաթույր մազերով ու աչքերով: Երբ խօսք էր լինում, թէ երեսի մեր խումբը շուտով ցրուի, անմիջապէս յարում էր կատակով ու ժպտալով. «Ի՞նչ էք ասում: Հապա ես իմչո՞վ պիտի գրադունեմ»:

Իսկ ես ինձ համար կարգում ու կարգում էի: «Փետրուար 18» ժողովածուն (1927, Պրագա), «Հայ մշակոյթի օրը» (1932), Ահարոնեանի «Իմ գիրքը», Կրկու մտերմով, ԲաժՖու «Զարիումարը», «Երազագողի յիշատակարանը», Լարդուեու «Մեղեղիճե՛ր. մեղեղիճե՛ր», Բախի իշխանեանի «Երկու ամիս բոլշեիկեան բանում»: Դրա համար ժամանակ կար: Ձեռքով գրելու էլ՝ գտնում էի:

Օգոստոսի միջ միջին 7ը, կայանի շէնքը ախտահանման ենթարկելու պատճառով, ամբողջ կազմով տեղաւորուեցինք համակենտրոնացման ճամբարի ծայրի մի բարձրում: Եոյն ձեւով, մեղեղից ոչ-հետու, տեղաւորուեցին եւ գերմանացի գինու որներ: Բարձրները նորակառոյց էին, մեծ մասամբ դատարկ: Միայն գիմացի բարձրներից մէկում աշխատունակ կայանաւորներ կային, որոնք ամէն առաւօտ խումբ-խումբ աշխատանքի էին տարւում՝ նոյն-պէս կայանաւոր վերակացուների առաջնորդութեամբ: Այդ վերակացուներն ունէին կարճ դաշանակներ, որոնցով ուզած ժամանակ խփում էին միւսներին: Եւ առհասարակ՝ միշտ էլ ազմուկ ու կոխ էր լինում կայանաւորների շարքում: Պատկերը, պարզ է, գեղեցիկ չէր: Բայց մեղեղից ունք էլ չէին խորանում հարցի մէջ ու խօսակցութեան բնթացքում միայն կայանաւորներին էին մեղադրում, որ «միմեանց ծնծում են», ուրեմն՝ «արժանի են իրենց վիճակին»: Միեւնո այդ ամէնը առաջին հերթին պայմանաւորում էր ճամբարային բուն կացութեամբ, կայանաւորների անհեթեթ ու անորոշ ճակատագրով, եւ այլնով, երբ նոյնիսկ ամէնից առաքինները չեն կարող չլպպալել:

Այդ ժամանակ Վայմարից կայան հասան 110 հոգի, որոնցից 45ը հայեր էին, հիմնականում երիտասարդներ: Երանք անցել էին իսկական գերիական ճամբարներից, միայն տիւր ու անմիջական յիշողութիւններ ունէին եւ ուստի, ընդհանուր առմամբ, սկզբունքով աւելի գերմանամերձ էին, քան ուրիշները:

Եւ այդպիսով, կայանի բնակիչներին թիւն այդ պահին 173 էր ու Օգոստոսի ծին պարետը շատ զործ ունէր բոլոր խմբերին ծանօթանալու համար: Բնակչութիւնը բաժնուեց չորս խմբի, ըստ ազգութիւնների, - վրացական, հայկական, ադրբեջանական եւ հիւսիս-կովկասեան: Այդ կարգը շարունակուեց նաեւ այնուհետեւ, անկախ կայանի բնակիչների շատ կամ քիչ լինելուց, իբրեւ անխախտ սկզբունք:

Կայանի սնունդը բերում էր համակենտրոնացման ճամբարի իտհանոցից: Եւ, առհասարակ, մենք պարբերաբար ճամբար մտնելու առիթներ ունէինք, հիմնականում բաղնիքի կապակցութեամբ: Դրա համար պէտք է քալէինք քաւական երկար ճանապարհ ձախ ուղղութեամբ: Իսկ այ՞՝ կայարանի կողմից, պէտք է անցնէինք քաղաքով: Վերջինս կապուած էր երեկոյթների հետ, որոնք գիշերն էին լինում, ճամբարի ծայրի այն շէնքում, որը ցերեկը ճաշարան էր ծառայում ճամբարի գերմանական անձնակազմի համար, իսկ երեկոները շատկացու ու մայիս այլ մշակութային ձեռնարկներին, իբրեւ սկումբ՝ իբր բեմով: Եւ, շնայած մեր պարբերական այցերին, շատ աղօտ էինք պատկերացնում ճամբարի յատակագիծը ու շրջակայքի բնակավայրերի դիրքը: Մեզ յա-



ճախ էին տանում նաև մարդական հրապարակ: Տեղին է յիշել, որ համակերպ-  
րունացման ճամբարը ընդամենը մեկ-երկու տարուայ պատմութիւն ունէր, իր  
սաղմնաւորումից ի վեր: Այդ ժամանակ փաստօրէն նոր էր ձեւաւորում եւ  
զրահիներին արտաբուստ թւում էր, թէ կայանաւորները, անկախ իրենց  
բնոյթից, առաւելապէս սոսկ աշխատանքային պարհակ են կատարում: Մարդ-  
կանց բնաջնջման հանդամանքը տակաւին աչքի չէր բնկնում: Բայց պարզ  
երեւում էր, որ ճամբարն անընդհատ ընդարձակուում է:

Այդ օրերին կայանում բաղմաթիւ կինոնկարահանումներ կատարուե-  
ցին՝ ղեկավարութեան նախաձեռնութեամբ: Ասում էին, թէ դունաւոր Ֆիլմ է  
պատրաստուում: Այդ կապակցութեամբ, մի անգամ, նկարահանողները տար-  
րեր ազգերի շարքերից առանձին մարդկանց հանում ու գործիքի առջև էին  
կանգնեցնում, իրենք, իրենց կարծիքով, «չատկանշական նմոյշներ»: Բայց  
այդ բնաբուծիւնը այնքան էլ առարկայական ու յատկանշական չէր: Յատկա-  
պէս ներկայանելի արտաքին տեսք ունեցող վրացիները — իսկ վրացիները մի-  
ջին հաշուով առանց այդ էլ գեղեցիկագոյն են առհասարակ — հրաւերի չսպա-  
սելով վազում էին գործիքի մօտ: Իսկ միւսները պարզապէս հեռու եւ կրաւոր-  
ական զիրքում էին մնում:

Ահա թէ ինչու վերջում այսպիսի խօսակցութիւն ծագեց Ռաֆիկի ու  
ժայռի միջև: Առաջինը պնդում էր, թէ այդ լուսանկարումները ի միջի այլոց  
ու աննպատակ չեն կատարում, այլ գերմանացիներն ամէն տեղ ցոյց պիտի  
տան՝ իրենց ցեղային մեկնարանութեամբ: Ուստի՝ հայերս էլ ու բիշներին նման  
մեր ուժեղ, այլ ոչ թույլ կողմերը պիտի ցոյց տանք: Մա՛նաւանդ՝ որ հայերի  
շարքում եւս ներկայանալի արտաքին տեսք ունեցողներ չառ կան: Մինչդեռ,  
նրա ասելով, ժայռն այդ ուղղութեամբ ոչինչ չնախաձեռնեց իր կողմից: Այդ  
խօսքերին ժայռը պատասխանեց կարճ բառերով ու թախծալի ձայնով: «Ը՛րբ  
քէ ես շտ՞տ եմ ուզում, որ ինձ նկարեն»...: Դա բխում էր նրա ներքին վերա-  
բերմունքից՝ առհասարակ:

Յայտարարուեց նաև, թէ պէտք է պատրաստուել երեկոյթի: Ենթոք ու-  
նեցողները՝ գործի անցան: Մեր մէջ էր դառնում թիֆլիսեցի երիտասարդ քե-  
մանչաւար Ստեփան: Նա ո՛չ միայն իր գործի վարպետն էր, իրրեւ նուազող,  
այլևս կարող էր սեփական ձեռքերով երաժշտական գործիքներ պատրաստել:  
Ուստի՝ գերմանացիներից խնդրեց համապատասխան նիւթեր՝ քեմանչա սար-  
քելու համար: Դրանից յետոյ էլ, նոյն կարգով, թառ պատրաստեց: Իսկ զսփ  
պատրաստելը հասարակ բան էր նրա համար: Այդ պիտով, ի վերջոյ, կազմուեց  
ամբողջական նուազախումբ: Ստեփանն հյանուած էր իր արուեստով եւ ուրիշ  
ոչ մի բանով համարեա՛ չէր հետաքրքրուում, գոնէ արտաբուստ: Ուստի՝ Ռա-  
ֆիկը երբևէն քեմադատարար յիշեցնում էր եւ հեղձում այդ ապաքաղաքու-  
կան ու ջաւհանափակչ մտայնութիւնը: Ստեփանն լսում եւ ժպտում էր...  
քթի տակ:

Նրա հետ էր լինում, միշտ, առաջնակարգ պարող սկիբովականցի Աշո-  
տը: Նա հիմնականում պարում էր մենապարեր՝ կիկոտաուրի, Եայայիսօ,  
եւ այլն, բայց արտակարգ վարպետութեամբ ու նկունութեամբ, շատ բարդ  
«համարներով»: Ասում էր, թէ պատերազմից առաջ էլ մասնակցեց է այլևս այլ  
մրցութիւնների: Դա արդէն ինքնին հաստատու հասկանալի էր թւում:

Օգոստոսի 13ին պարետը յայտնեց, որ ինքը պարերարար գրոյցներ է  
ու նենայտ մեզ հետ, դասախօսութիւններ կարգով: Եւ, խկապէս, այդ գրոյց-  
ները կայանի գրադոմուսների հիմնական ասպարէզներից մէկն էին կազմում  
հետագայում՝ ամիսներ շարունակ: Պարետը խօսում էր բնդ հատումներով,  
ձեւակերպում էր մի միտք եւ սպասում, որ թարգմանիլը՝ չեփազդէ չիլը, ու-  
սերէն թարգմանի: Սկսոյ մի այլ միտք էր ձեւակերպում ու սպասում: Ու այդ-

պէս՝ մինչեւ վերջ: Նրա գրոյցները վերաբերում էին գերմանական ու եւրոպական շարքերի, նաեւ խորհրդային իրականութեան ինչ-ինչ կողմերի:

Յրինակ, պատմում էր, թէ Հիտլերն ինչպէս աշխատանք օտեղծեց աւելի քան վեց միլիոն գործազուրկների համար: «Անգլո-ամերիկեան պլուտոկրատները» հակառակութիւնը Գերմանիայի հանդէպ բացատրում էր նաեւ նրանով, որ ոսկու պաշար ու արժեզրամ շուկաները Գերմանիան միայն սեփական աշխատանքով ուղի կանչեց ու տնտեսապէս անկախ դարձաւ, ինչ որ ձեռնտու չէր պլուտոկրատներին: Մի ամբողջ գրոյց նուիրեց Ֆրանսիայի պատմութեանն ու ներկային, իւրապատուկ մեկնարանութեամբ: Այդ գրոյցի ընթացքում ուշագրութիւնս գրաւեց այն, որ Ֆրանսիայի համար այնչափ մեծ թերութիւն էր համարուում բնակչութեան աճի դադարումը վերջին 100 տարում, թէն զա իրականում ձեռնտու էր Գերմանիային: Կամ՝ նապոլէոն Բոնապարտը համարուում էր այն միակ ողջամիտ ղեկավար, որը Ֆրանսիայի վերելքի շահերն էր հետապնդում: Եւ առհասարակ քարկոծուում էր Ֆրանսիական պատմութեան յեղաշրջական ընթացքի միտումը: Իսկ վրացի Գարթվելաշվիլին իր կողմէց յիշեց Ֆրանսիական արձանագրութեամբ պոռնիկատների ու պոռնիկաների մի մեծ թիւ, ասելով, թէ այդ վիճակում գտնուող մի երկիր ինչպէ՞ս կարող է առողջ մնալ ու առաջադիմել:

Զրոյցից յետոյ նկատեցի մի աշխոյժ խօսակցութիւն երկու օսերի միջեւ: Մի արհեստավ գերմանկ ոգեւորում էր պարետի վկայակոչած զգայացու նց տեղեկութիւններից եւ տրտնջում էր, որ խորհրդային երկրում «մեզ այդ մասին ոչինչ չեն ասել, թաքցրել են»: Իսկ միւսը, բարձր կրթութիւն ունեցող մէկը, ներողամտօրար ժպտալով բացատրում էր, թէ պարետի ասածի մէջ ոչ մի նորութիւն չկայ, խորհրդային երկրում ոչինչ էլ չի թաքցուել, «միայն թէ, շարունակում էր նա, - այն, ինչ որ մեզ մօտ համարուում էր օգտակար մարդկային յարազդիմութեան համար, այստեղ վնասակար է յայտարարում: Տարբերութիւնը մեկնարանութեան մէջ է»:

Պարետը մի անգամ պատմեց, որ արդէն պատրաստ է գերմանական իշխանութիւնների կազմած կանոնադրութիւնը՝ կովկասի կապակցութեամբ, որով ծրագրային կարգով ապահովուում է արհեստների եւ առեւտրի ազատութիւնը, եւ այլն: Այդ հաղորդումը ինձ խիստ զարմացրեց նրանով, որ ոչ մի քաղաքական ու յարակից տարր չի պարու նակում: Եւ զա ինքնին արդէն մտածելու նիւթ էր: Թօտում էր նաեւ խորհրդային բանտերի ու ճամբարների մասին: Մեզանից ոմանց ջղայնացնում էր այդ կէտը եւ նրանք առում էին ընթացիկ խօսակցութեան ընթացքում. «Մի ասող լինի, որ եթէ նրանք բանտ ու ճամբար ունեն, դրանից զու՛՛ւ է՛լ ունէ՛ք, այն էլ շատ ու շատ: Ուրեմն, էլ ի՞նչ կարիք կայ նրանց ունեցածը յիշել ու սեփականը մոռանալ»: Այդ կարգի անհամար նիւթեր էին շօշափում գրոյցների ընթացքում:

Մինչ այդ՝ Օգոստոսի 14ին այցելեցինք Նոյ Բերուս գիւղը, շրջապայական կարգով: Երեք օր անց՝ Դրիմից եկած ռադիստներից ութ հոգի վերադարձան այնտեղ: 17ին՝ կայանը տեղափոխուեց մօտ երկու կիլոմետր հեռու գտնուող մի կիսաւեր ու պարտէզներով շրջապատուած գիւղի երկյարկանի աղիւսաշէն տուն: Շուրջը կանաչ էր, պտուղներով ծածրաբունուած ծառեր: Անհասկանալի էր այդ գիւղի վիճակը: Տներ կային, պարտէզներ կային, բայց բնակիչները շատ քիչ էին, այն էլ՝ խիստ ինքնամփոփ ու լռակեաց:

Շէնքը գիւղի ծայրում էր եւ իր մեծութեամբ տարրերում էր մի օտերից: Դատելով սենեակների կառուցութեամբից, զա կարող էր այդ փոքր գիւղին սպասարկած լինել՝ իրրեւ գրասենեակ, մանկապարտէզ ու դպրոց կամ նման մի բան: Ու նէր մի ընդարձակ դահլիճ, որը պիտանի էր երկկոյթների համար: Շէնքի առջեւ ընդարձակ բաց տարածութիւն էր՝ կիսաւեր ցանկապատ-

տերով: Զախ կողմից, մօտ 200 մետր հեռու, խճուղին էր: Այլ կողմից մի պարզուսակ ճանապարհ էր անցնում, որտեղ անցորդներ չէին տեսնում: Այն էլի հեռու կիսաեր տնակներ էին, ազա ծառատաններ ու դաշտեր: Սրուայ որոշ ժամերի, մանաւանդ իրիկնադէմին, սովորութիւն ունէինք գրօսնելու գիւղավայրում, մենակ կամ փոքր խմբերով, մտածելու եւ գատողութիւններ անելու:

Եւ շարունակում էի հայերէն գրքերի ընթերցումը, մանաւանդ փոքրիկնաւ Վեհապետի գրադեաներու բարեկամներ» մատենաշարի հրատարակութիւններէ,— Արփիարեան, Սահան Կարօ, Էւայն: Նաեւ՝ Զօհրապի, Հայաստանի Գեորգեանի, Ահարոնեանի այլ գրքերի: Կարգացի Վարանդեանի «ՄՈՐԱՍԱՆ»-ը, Սահակեանի եւ Տ. Բաղդասարեանի միացեալ գիրքը հանրապետական բանակի վերաբերեալ, Էւայն:

Տեղեկացայ նաեւ, որ կայանում ուսերէն գրքերի պաշար, թերթերն ու Հանդէսները ստացւում են պարբերաբար: Այնուհետեւ շեշտը դրի այդ կողմի վրայ: Օգոստոսի 19ից վերսկսուեցին կինոդիտումները՝ քաղաքի կինոթատրոններում, որոնք հետեւողականօրէն «քննարկման էին դրուում» կայանում՝ պարետի նախաձեռնութեամբ:

Օգոստոսի 19ից գրատու միջ. «... Ամէն ինչ նախկինի նման է — վեր կաց ժ. հին, ապա՝ առաւօտեան լիցք, ստուգում, նախաճաշ (7ի6), պարապմունք-գրադուներ, ճաշ (12ի6), հոծաշեայ իւրաքանչիւր, գրադուներ-ներ, ընթրիք (18ի6), ազատ ժամանակ, քուն»:

Նոյն օրու անից վերսկսեցինք եւ ռադիօտների պարապմունքները: Այլ կողմի կիսաեր շեշտերից կրկու աննակ վերանորոգեցինք ու տեղադրուեցինք: Պարապմունքները դարձեալ պարզ ու միակողմանի էին, մորզէի ազանչանները լսողութեամբ ընդունելու զմով: Մէկը նստում էր կոնակի մօտ եւ ազգանշաններ հաղորդում, իսկ մի աները լսում եւ գրանցում էին: Ժամանակ առ ժամանակ ստուգուում էր ընկալման արագութիւնը: Բայց մտէն ինչ գրեթէ անազարի էր անցնում: Ամբի կազմը մեծանում կամ փոքրանում էր անընդհատ:

172 - 200

Այդ ժամանակ շրջակայ հողամասերում այնատու էին ամէն կտրդի կապանաւորներ, կրքեմն՝ մեր աշխատասենեակից ոչ-հեռու: Կարելի էր տեսնել մեզմ ու ընկնուած հրեաների: Տեսանք նաեւ առողջ կանանց մի խումբ, որոնք, ըստ կիսատ-պոստ լուրերի, հարաւայաւական բանակի կրքեմնի սպանների կանայք էին: Եղևքի մախ ուղղութեամբ, քաւական հեռու, դաշտում լըջում եւ աշխատում էին երիտասարդ կանայք: Նոյնիսկ ներուից կարելի էր նկատել, որ նրանց մազերը կարճ են խուզուած, արհեստականօրէն աղեղցուած: Գերմանացի տարեց պահակը հրացանը ձեռքին կանգնում էր շեշտի առջեւ ծառի տակ եւ այգերով հակում: Թափիկը, մի քանի ուրիշների հետ, որոշ խօսակցութեան էր բռնուել պահակի նետ: Զարմանքով պատմում էր, որ պահակն առհասարակ հրեաներին մարդ չի համարում եւ նրանց ճակատագիրը նրա վրայ մազալափ չի ազդում: Հարց էր տրուել, թէ ինչու են կանանց մազերը կտրել: «Որպէսզի պահակները չհրապուրուեն ու զիջուվեն չանցն», — Էղև էր պատասխանը:

Աւելի ուշ, նոյն Թափիկը աշուկողման ճանապարհին պատահաբար հանդիպել էր մի լեւ աղջկայ, որը պատմել էր, որ ինքը դիտի, թէ որտեղ են սպաննում ու հորում հրեաների դիակները, ընդամին աւելացնելով՝ «Հապաղա խի՞ղճ է, պարոն»: Այդ իրողութիւնները երկար գրոցների առիթ եղան մեր միջեւ: Անկարելի էր քաջատարել, որքան էլ մարդ իր միտքը լարէր, որ ուրիշ ասպարէզներում այնքան կազմակերպուած գերմանացիները այդքան անհնթեթ դիրք բռնեն յատկապէս ցեղային հարցում, մարդկանց մասին գատեն ըստ նրանց ատամների, շրթու նշանների, թթի ձևի, այգերի գոյնի, Էւայնի, դա

Հիմք դարձնելով սույն հասարականութեան բնամղնջման համար:

Կայանի մեծ դաշինում կար մի ռադիկոնդու նիշ: Օգոստոսի վերջերին սովորու թիւն դարձրինք նրանով լսել մոսկովեան հաղորդումներ, ըստ ցանկութեան, պարզ հետաքրքրութեան համար: Օգոստոսի 26ին շէնքի առջև մի բացօթեայ երեկոյթ կազմակերպուեց, նուազով, պարով, երգով ու այլնով: Դա մի սոսակ փորձնական երեկոյթ եղաւ՝ զա իք իսկական երեկոյթի նախորեակին:

Այդ ժամանակ նկատելի դարձաւ, ո՛ր կայանի թարգմանիչների թիւը մեծացել է: Դա պայմանաւորուած էր վայրէջ վայր անրնդհատ խմբեր տանել-բերելու հետ, որոնց ուղեկից էր պէտք: Երեքը թեւի վրայ «էս-իէ» տատերը կրող համազգեատու որներ էին, որոնց սու սերէնի իմացութիւնը բարձր չէր, բայց բաւարար էր մեր պայմաններում: Միւս կրկուսը քաղաքացիական հագուստով էին: Դրանցից մէկը վրացի Բարթովլաշվիլին էր, Բելգիայից: Հին տարազներ էր:

Վրացու թարգմանիչ լինելը պարապ խօսք էր: Նա գիտէր միայն վրացերէն, սուսերէն եւ, քիչ թէ շատ, Փրանսերէն: Գերմաներէն բնաւ չգիտէր: Պարզապէս նա կայան էր խցկուել վրացանպատ դեր կատարելու համար: Հայերը սկիզբից եւեթ ծուռ էին նայում նրան եւ Վերպիլի Մատուր չկողում, ըստ Վերպիլի վանդազէի յայտնի երկի՝ «ՆԱՄՆԱՍ»ի բնակիչներից մէկի անուան: Հաւանաբար նկատի առնելով նրա նիւար ու ճղճիմ մարմնակազմը: Բայց Վերպիլի Մատուրը փորձառու աղուէս էր: Եկած-չեկած՝ կազմակերպեց վրացիներին, հաւանալ տրամադրու թիւններ սրակեց, սկսեց փորել մայրը Գրիգորեանի ոտքերի տակի հողը, ու ժողացնել վրացիներ, մա՛նաւանդ քաղաքական կազմի» գիրքն ու ազգեցութիւնը, ի վնաս միւս ազգերի ներկայացուցիչների:

Իսկ նոյնիսկ մեր կայանի նման մի աննշան հաստատութեան շրջանակում ազգեցութիւն ու նենալն ու գերմանացիներ չովանաւ որու թիւնը վայելելը քիչ բան չէր նշանակում ենթակաների համար: Անեւու շատ բան կար: Կեւրակի շերտից ու հագուստի պահեստից սկսած մինչեւ ազգամիջեան յարարերու թիւններ զծով այլեւ այլ տրամադրութիւններ հրահրելու: Սրինակ, վրացիների աչքում աւելի քան էական էր համարուած գերմանացիներին հաւատացնել, թէ վրացիներն ի սկզբանէ գերմանաւորներ են, իսկ հայերը՝ անուղղելի ոտ սաւերներ: Աւելորդ է նշել, թէ ինչ հետեւ անքներ կարող էր ունենալ այդ ուղեկիծը, եթէ լրիւ յաջողուէր որեւէ ժամանակ: Բայց դա յաջողուում էր միայն քայլ առ քայլ, աստիճանաբար, ոչ-լիովին:

Հայերն զգում էին հակազգում էին հայափարի՝ կարեւորութիւն շտալով վրացիներին ու իրենց ուզած ճանապարհով ընթանալով: Բայց այդ ճանապարհը ինքնաբար ու կրաւորական էր, այլ ոչ թէ ներդրածու: Դրան նպաստում էր այն իրողութիւնը, որ հայերն այդ պահին ի վիճակի չէին արամայրելու գերմանացիների ճաշակին յարմար քաղաներ: Վրացիների ինքնազմուտան ու տիրական հայեցողքը, խնամուած բեղերը, եւայլն, աւելի՛ էին սպաւորում գերմանացիներին, քան հայերի ինքնամփոփ եւ ուսանողատեսք կերպարանքները:

Հայերի յարաբերութիւնները շատ լաւ էին հիւսիսային կովկասցիներին, նոյնիսկ ազգրեւնացիներին հետ, որոնք համեմատաբար քիչ էին, մեծ մասամբ իրենց մէջ քաշուած ու լուռ էին մնում, իսկ հարկ եղած դէպքում էլ խուսափում վաւուստ վրացիներից, հայերի թեւի տակ մտնելով: Յիշում եմ մի երիտասարդ բուժակի, որը վրացիների սենեակից սարաւաճաւար փախաւ ու հայերի մօտ անցաւ, սրտառուչ կերպով պատմելով, թէ իր ապրած քաղաքում որքա՞ն հայ ընկերներ ունէր պատերազմից առաջ...

Հայերն էլ, միւսներին նման, իրենք իրենց մէջ մտքերի փոխանակութիւն

էին կատարուի, նկզ կամ լայն շրջանակու մ, ինքնուրոյն գրոյցներ կագմակերպուի մ, փոխադարձարար ծանօթ յնու մ, հւ այլն:

Մի անգամ Նաւիկի մ, երիտասարդ, Արտուշու տնու նով, ինձ յանձնեց բանաստեղծութիւններ յի ծոցատուար՝ ինչոքեղով կարգալ ու իմ խօսքն ասել: Զգիտեմ՝ որտեղի՛ց էր իմացել, որ ես էլ որոշ շափով անդեակ եմ գրականութիւն ինչ: Կարդացի: Երես ու մ էր, որ միջնակարգ դպրոցն ասարտելուց յետոյ անմիջապէս գորակոչուել է: Բանաստեղծութիւնները նուիրուած էին զիւղին, զպրոցին, հրաժեշտին, ինկերներին, հւ այլն: Քնարական շունչ կար հւ հասուն գրեկածին: Դրանից շո՛ւ էի: Բայց ահա մի տեղ, առանց այլեւայլութեան, Ստալինի գովքն էր արուած: Որտեղից՝ որտեղ: Յանձնելիս ջանացի կանչ առնել միայն լաւ կողմերի վրայ, իսկ ստալինեան կէտու միայն հարեւուանցիորէն ականարկել, որ զոյս սոսկ անհատական համոզման հարց է, բուք բանաստեղծութեան հետ կապ չուցի: Հաւատալն ու չհաւատալն իր դործն էր:

Քանի որ մենք լիովին ազատ էինք, առանց պահանջների, ջանում էինք լրիւ օգտագործել այդ հանդամանքը, ըստ հնարաւորին ընդլայնել գրօսանքները շրջագիծը, թէեւ յանձնարարուել էր, որ խնուզուց այն կողմ շանցնենք: Բայց ո՞՞՞նք ակնյայտօրէն ասելի հետո էին գնում: Այնու ու Ստեռնան, օրինակ, մի անգամ պատմեցին, որ երկար ճանապարհ են կտրել մինչեւ դեռ, կամենալով ձուկ որսալ: Եւ յաճախ կրկնում էին այդ ճամբորդութիւնը: Միայն նրանք չէին: Նաեւ ուրիշներ էին այդպէս վարուած: Եւ այդ մասին, ըստ հրեւոյթին, տեղեկացուել էր պարեմին:

Պարետը հերթական հասարակի ժամանակ ընդ հանուր կարգով նորից զգուշացրեց, որ այդ պիտի բան չանեն: Ասաց, որ ճանապարհների վրայ գիշեր-ցերեկ շրջում են գիւնուած ոտտիկաններ եւ պատահական մարդկանց անմիջապէս համակենտրոնացման ճամբար տանում: Այդ պիտի բան պատահելու գէպտու մ՝ կայանի զեկապարութիւնը ոչ մի իրաւասութիւն եւ հնարաւորութիւն չունի աստեղծներին օգնելու: «Զպէտք է մոռանալ, չէտեց նա, որ ճամբար բնկնելը շատ հեշտ է, իսկ այնտեղից դուրս գալն անկարելի»:

Նոյն կապակցութեամբ պարետը նշեց, որ կայանի բնակիչները չպէտք է իրենց գերու պէս ու իրաւագութիւն հողերանութեամբ պահեն: «Ինչ ալ այլեւս գերիներ չէ՛ք, այլ մեր դաշնակիցները», - Եզրափակեց նա:

Այդ զգալիակցութեան, սուտերէն ժայռազնիկ թաղը զուարճալի մեկնարանութիւններէ նիւթ գարձաւ շատերի համար: Դժուար էր պատկերացնել, թէ մենք մեր ինչո՞վն ենք զաշնակից: Իմ մերձաւ որ հարեւան Բարկէնն, օրինակ, Վանիկին հետուից իր մօտ հրախրելու ժամանակ՝ նրան անուծով չէր կանչուած, այլ՝ «ե՛՛յ, սայո՛՛ գնիկ, այստե՛ղ արի»: Նա Վանիկին կատակով գրգռելու նաեւ ուրիշ պատճառ ուներ: Երբ մեր մէջ խօսում էինք մեր ազգագրի, գերմանական ծառայութեան կանչուելու հաւանականութեան մասին, Վանիկը բորբոքում բացակայում էր. «Ինչո՞ւ, ինչի՞» համար պիտի ծառայել Գերմանիային: Գերմանացու մայրիկը... Ամերիկա՞ն: Ամերիկան ուրի՛շ բան է: Իսկ այդ ամերիկայիցութիւնը բխում էր նրանից, որ Վանիկը որբանոցների միջով էր անցել ու ամերիկեան հաց կերել:

Սեպտեմբերի 3ին 22 հոգու Վարչաւաս ու զարկեցին եւ առաջին անգամ իմացանք, որ նրանք պիտի ծառայեն ազգային լեզուներում: Դրանք համեմատարար ցածրակ, անկարգապահ տարրեր էին, որոնցից զեկապարութիւնն ու գում էր ազատուել:

Երկու օր անց դիտեցինք Պրուսիայի թագաւոր Ֆրիտցի Երկրորդի գործու նկութեան զբուսակներից մէկին նուիրուած «Մեծ Թագաւորը» կինոնկարը, պատրաստուած որոշակի տեսանկիւնից: Իսկ 9ին՝ «Կարլ Պետերսը»,

1883-90 թուականներին՝ արևմտաֆրիկեան երկրամասի գերմանական նուստան վերաբերեալ: 17ին՝ արդէն տեսած մի ֆիլմ ու գիտատիեմեկական է, ընթացիկ փաստանկարներ:

Ժամանակի որոշ մի մաս էր յատկացուած եւ ընդարձակ դահլիճին, որտեղ բարձրասուն էր տեղաւորուած: Պատերից կախուած էին մի քանի նկարներ եւ հինգ քարտէսներ, - Գերմանիայի, սլոնաբոցի քաղաքական, Աֆրիկա, ՅԱՄ եւրոպական մաս եւ Միջերկրածովեան երկրներ: Եւ երբեմն կանգ էի առնում քարտէսների առջեւ ու զետու մտնում տեսնել Հայկական Բարձրասունը զակը ներկայացնող մասը: Զարմանալի բարձր, որակ քարտէս էր դա ամէն տեսակէտից, որպէսին ոչ առաջ էի տեսնել, ոչ էլ յետոյ տեսայ: Կարելի է ասել, որ երկրամասի աշխարհագրական անունները ներկայացուած էին կարծես թէ Հայկական ձեռքերով ու նոյնպիսի աչքերով, միանգամայն օրինաշարի արամարանութեամբ: Թէ ինչպէս էր ստեղծուել նման մի քարտէս՝ անբացատրելի էր: Քարտէսը մնաց էր տեղը, իսկ նրա յիշատակը՝ թարմ ու անջնջելի մնաց իմ մէջ:

Շարունակում էի լիարուսն օգտուել կայանի ռուսերէն գրքերից: Գրադարանը վարում էր պատանի Լուիսին, որը ուսուցչուհի ռուս մօր Հևա Գանձակում էր ապրել եւ միայն ոտ սերէն գիտէր ու իր արիւթից ասելի բարձր Հասունութիւն ունէր: Բազմազան էին Հեղինակներն ու երկերը: Նրանց թըլումն էր եւ Դմիտրի Մերեժկովսկին: Աչքի անցկացրի նրա «Նժժի քաղաւորութիւնը», Պօզոս աստեղային ու Երանելի Օգոստինոսին նուիրուած խոնարհիւն ուսումնասիրութիւնները, կարդացի մէջընդմէջ, որովհետեւ ինձ Համար խիստ անմտաչելի էր գրանց նիւթն ու շարադրանքը: Բայց միտմամանակ՝ նաեւ հրապուրելի ու զրազեցնող:

Մեկտեմբերի 11ի երեկոյեան Նոյ Բերուս գիւղի դահլիճում տեղի ունեցաւ այսպէս ասած ընկերական երեկոյթ: Կայանի մարդկանցից բացի կային նաեւ հիւրեր՝ գիտնորականներ ու քաղաքացիներ, 30 հոգի: Պարետը խօսեց այլեւայլ հարցերի շուրջ: Ապա, նախապէս կազմուած ծրագրի համաձայն, Հանդես եկան Հայկական, ազգայնական, գրացական եւ օտական ինքնագործ խմբերը, իրաքանչիւրն իր ատանձնայատուկ կողմերով:

Օտական խմբում աչքի էր ընկնում Դուլաիի փոթորկալի պարը: Դա գրաւեց յատկապէս զինուորականներին ու կանանց ուշադրութիւնը: Կամեցան ասելի մօտիկից ծանօթանալ հիւսիսային կովկասցիների հետ: Մի տարեց զինուորական հրճուապին ու բախութեամբ պատմում էր, թէ ինքը նրանց ճանաչում է դեռեւս Առաջին աշխարհամարտի օրերից, յիշում նրանց հեծնայններին՝ խոշոր փափախներով: «Լա՛ւ կոռուզներ էին», - եզրու կարկանդակութիւնը: Նրան էլ ամէնից առաջ այդ էր հետաքրքրում «լա՛ւ կոռուզներ էին», քանի որ կարող էր ամփոփուել իր հարազատ սեսադաշտում:

Մի անկիւ նում Միսլի Մատուր խնամքով «մշակում» էր մի համազգեստաւոր գերմանացու, թարգմանչի օգնութեամբ եւ չըջապատող միւսների ներկայութեամբ: Գովում էր Գերմանիան, Հիւսիսի քաղաքականութիւնը: «Հիւսիսը երկրորդ Քրիստոսն է», - իրար ետեւից կրկնում էր նա, առանց այլեւայլութեան: «Կոմունիստական չարիքի դէմ ուղղուած նրա պայքարը փրկութիւն է մարդկութեան համար, որը չի մոռացուի երբեք»: Դա, ի հարկէ, ոչ թէ նրանից էր, որ զուտը տաքացել էր խմբիցից, այլ՝ որովհետեւ շրտում էր հաճոյանալու եւ հաճոյախօսելու ներքին վարժութիւնից, թէեւ ինքն այնքան յիմար չէր, որ հաւատար սեփական գեղումներին:

Յաջորդ օրը, շէնքի առջեւ ի ծառի տակ, բացօթեայ դրոյց ու նեցաւ Բեռլինից եկած մի այլ վտարանդի վրացի՝ Ասետիանին: Ինձ բաւական զուր եկաւ նրա դրոյցը, որը զերծ էր ամբողջապարական որեւէ տարրից: Լուրջ, ծանրազը-

նաց, փաստարկուած, լոյսն ու ստուկերը միաժամանակ ներկայացնող կենդանի խօսք էր դա, եւ օգտակար՝ ընթացիկ հարցերում կողմնորոշուելու համար: Բանախօսի շատ արտայայտութիւնները զամուսնցին յիշողութեանս մէջ եւ հետագայում շատ անգամ զգացնել տուին իրենց: Ուշագրաւը նիւթը մի շարք կողմերից ներկայացնելու նրա եզանակն էր, այլ ոչ թէ յարակից եզրակացութիւնները, որոնք մասամբ վիճելի էին իմ աչքում: Օրինակ, պատմելուց յետոյ, թէ նացիոնալ-սոցիալիստական Գերմանիայում այս կամ այն հարցը ինչպէս է լուծուել, Աստիանին յայտարարեց, թէ, ի հարկէ, գերմանական փորձը բոլոր ազգերի համար օգտակար ու ընդունելի չէ: Բայց կովկասեան ժողովուրդները, — ասաց նա, — մտահոգուելու հիմք չունեն, «չէ՞ որ իր ժամանակ կովկասում դրամը ավօք էր համարուում»: Ի հարկէ, ոչ ոք չի կարող ապացուցել, թէ կովկասում տեւէ մէկի կողմից դրամը իսկապէս ավօք է համարուել կամ համարուում: Բայց զեկուցողի խօսքում կամայականայն արտացոլում էին աւատական կարգերի կարօտախտով տառապող վրաց ազնուականութեան որոշ խաւերի տրամադրութիւնները: Այդ կարգի մարդիկ իբր թէ «դրամ չեն սիրում», բայց լայն, ապահով ու փարթամ ապրուստն անպայման սիրում են, անկախ նրանից, թէ ինչ ճանապարհով է երաշխաւորուում այդ ապրուստը կամ ինչպէս կարող է երաշխաւորուել:

Այդ օրերին աչքի անցկացրի Ռուրէն Գերու մեանի «Հայաստան» (թէ՛ «Հայերը») Ֆրանսերէն գիրքը (1921, Փարիզ): Ծրանսերէն, ի հարկէ, չգիտէի, բայց եւ այնպէս բաւական ծանօթացայ գրքին՝ յատուկ անուններով, վիճակագրական տուեալներով, զեռնգում նկարներով, միջազգային բառերով, յաճախ կրկնուող կապերով, եւ այլնի օգնութեամբ: Բայց Աւագանքերի 21ի առաւօտեան լանկարծ մի քանի հոգի գիտեցին ինձ եւ յայտնեցին, որ մայրն ու դու՛մ է այդ գիրքը, որն անձամբ իրեն է պատկանում: Նոյն ժամանակ իմացայ, որ վերջնականապէս պաշտօնադրուել է: Այդ մասին վաղուց էր խօսուում, բայց բուն վճիռը նոր էր իրականութիւն դառնում: Այնուհետեւ մայրն ինչ այլեւս չտեսայ, որովհետեւ նա պիտի մեկնէր Վարչաւ գնացողների հետ: Ինքն էլ նոյն օրը մի այլ խմբի հետ Բեռլին մեկնեցի ժամը 14ին՝ գնացքով եւ արդէն ծանօթ երթուղով: Մեկնողներս 29 հոգի էինք: Յաջորդ օրը ժամը 7ին Օրանիներու բոլորում էինք, Քին էլ՝ ճամբարում:

Հետագայում պատահարք լսեցի, որ մայրը ի վերջոյ տեղաւորուել է Հայկական Լեզնիսին աւերթեր աշխատանքային գումարտակում, ապա իբր թէ փախելու փորձ անելիս սպանուել: Մի լուր, որի ճշտութիւնը ուղղակի անկարելի է ստուգել: Եւ առհասարակ, մայրի վերաբերեալ, քանի որ նա շատերի համար ծանօթ գէճք էր, ժամանակին այլեւայլ պատմութիւններ են հիշուել, որոնք անտեղի չէ այստեղ յիշատակել: Այսպէս, ասում էր, թէ գերմանացիները նրան առաջարկել են հայկական զորաջոկատներ ստեղծել ու գլխաւորել, իսկ նա մերժել է՝ ասելով, թէ ինքը նաեւ Առաջին աշխարհամարտի ժամանակ է կռուել գերմանացիների գէճ, նոյն հողի վրայ, իսկ այժմ գերի է եւ ու դու՛մ է միայն այդպիսին մնայ: Կամ՝ գերմանացիներն առաջարկել են հայ ազգային կազմակերպութիւն հիմնել, իսկ մայրը դա էլ է մերժել, ասելով, որ եթէ իրենց ուղարկել իսկապէս ազգային կազմակերպութիւն է, ապա հայերը վաղուց ունեն այդպիսի կազմակերպութիւն, իսկ եթէ ուրիշ բան է՝ ապա այդ գէպտու՛մ էլ ինքը անելիք չունի:

ԱՆԻՍ ԿՐՏՏԵԱՆ

(Շար. 1)

Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ**ՄԵԹՐՈՓՈԼԻՍ**

Եօթնանկիւն պարիսպներով ֆազաֆին զոնները գոց են:  
 Հոփը, կոյր ցուլի մը պէս, կը զարնուի ֆարերուն  
 Ու սուլելով բիրտ ու բարբարոս եզանակ մը,  
 Կը սուրայ փոզոցներուն մէջ լիրբ ստահակի մը պէս:

Ու հրապարակներու վրայ՝ լեռած սիրուհիներ  
 Խաւարին կը յանձնեն իրենց անասելի զազտնիքները,  
 Մինչ բարձրագոյն աշտարակին խուցերէն մէկուն մէջ՝  
 Բանտարկուած իշխանուհին կ'երգէ տխուր երգ մը:

Մշուշ կը տեղայ մուշուս զորշ երկինքէն,  
 Անճրեւը լալով կը բաժնուի ամպերու տամուկ գիրկէն:  
 Ռ՞ւք էք գիշերներու բուրումնաւէտ մակնոյխաներ,  
 Ռ՞ւք ես իրիկուններու՝ ֆազցր մեյամազոտութիւն:

Կը ֆալէֆ ֆազաֆի մուք փոզոցներուն մէջ,  
 Կը ֆալէֆ աշխարհի բոլոր պողոտաններուն վրայ,  
 Ճամբաներուն եզերքը, մարդակեր տատասկներ  
 Կը գիրկընդխառնուին կիսամերկ դիակներու հետ:

Մինչեւ ե՞րբ պիտի սպասէք Արդարութեան դարպասին առջեւ,  
 Մինչեւ ե՞րբ ատեանէ ատեան պիտի փոխադրէք թղթածրարը,  
 Որուն վրայ ճեղք արիւնով գրուած է զահիճիմ ամուսնը,  
 Մինչեւ ե՞րբ պիտի շալկէք անապատէն հաւաքուած ռակարները:

Կը ֆալես օտար ֆազաֆներու պողոտաններուն վրայ,  
 Ուսերուդ վրայ կրելով երեսուն դար անձկութիւն,  
 Հայ ըլլալու ֆազցր օւ գարհուրելի ճակատագիրը,  
 Որ Նեսուսի մորթին պէս կը հրկիզէ մարմինդ:

Հագիիդ թելերուն կառչած է եօթազկեան հրէշ մը,  
 Զոր կ'ուզես խեղդել արեանդ ճապաղիքներուն մէջ:  
 Եւ ամէն անգամ, որ կը նայես անտաքքեր աստղերուն,  
 Հրեշտակ մը կը մեռնի ամօթէն եւ վիշտէն:



Քարճրագոյն աշտարակին վրայ կ'երգէ իշխանուհին,  
Եւ դուն կը թափառիս օտար հրապարակներուն վրայ,  
Եւ շայկած մեր ճակատագրին ծանր թղթածրարը՝  
Կը սպասես, որ բացուի Արդարութեան արշալոյսը:

Ոսկի շղթաներով կապուած ո՛վ իշխանուհիս,  
Անդեմականին վրայ բացուած ո՛վ լուսամուտս,  
Յիշատակներուս ովկիանոսին վրայ պատկերդ կը ծփայ՝  
Հնդկաստանէն վերադարձող առագաստանաւուն պէս:

Եւ երբ անցրպետք փռէ իր աստղագարդ սաւանը,  
Տիեզերքի անծայրածիր տախտակամածին վրայ,  
Ռտնածայնիդ կշռոյթը կ'արթնցէ մեռած յոյսերս,  
Հպարտ ճակատով եւ մութ աչքերով ո՛վ ամազոնս:

Քարճրագոյն աշտարակի պատշգամբն վրայ ճեմող ո՛վ եղնիկս,  
Գիշերուան հսկումի եւ առանձնութեան պահերուս,  
Յաճախ կու գաս մատնահարելու սպասումիս պատուհանը,  
Մինչ պատկերդ կը ծփայ ժամանակի ովկիանոսին վրայ:

••

Եօթնանկիւն պարիսպներով քաղաքին փողոցները լուռ են,  
Աշտարակին ժամացոյցը համր է մեռեալի մը բերնին պէս,  
Իշխանուհին կ'երգէ Քարճրագոյն պատշգամբն վրայ,  
Մինչ հրապարակին վրայ կը ճեմեն սգաւոր այրիներ:

Հովր, խանգարելէ ետք անտառներու անդորրութիւնը,  
Խենթ սիրահարի մը պէս կը զարնուի պարիսպներուն,  
Կը խուժէ դարպասին գլխաւոր կամարէն ներս  
Ու կը իսկայ վերէն կախուած շղթային հետ:

Մետաղեայ օճը կ'երթեւեկէ, կ'օրօրուի,  
Աւելի ճկուն, քան կոյս մէջքդ, ո՛վ Սալուէ:  
Պահ մը կ'անշարժացայ, յետոյ իր անզուսպ սլաքով  
Կը շափէ յալտենականութեան երկվայրկեանները:

Քարճրագոյն աշտարակին վրայ կանգնած ո՛վ իշխանուհիս,  
Նայէ՛ որ տե՛ս սիրտս՝ ծակուած վայրագ կեռով մը,  
Քաղաքի հինաւուրց կամարներէն մէկուն տակ,  
Ուրկէ հպարտօրէն կ'անցնէիր փառքի օրերուդ:

Սակայն խույ է հովր, եւ անճրելք, եւ մշուշը:  
Եւ խույ է ան, որուն համար սիրտս կ'արիւնջի:  
Ինչո՞ւ տարիք գիս միջի սիրոյ ճահինները,  
Ինչո՞ւ մամբոս վրայ ցանեցիր թունաւոր վարդեր:

\* \*

Պատրանքներու ծաղկաստամը վռնցի ոտքերուդ տակ,  
Բայց անձրեր կը թափանցէ մինչեւ հոգիիս խորերը,  
Իրաբանչիւր կաթիլ իրեն հետ կը տանի պատկերդ:  
Լսէ՛. ինչպէ՛ս անձրեր կը հեկեկայ՝ յոյսիս լաքերուն զարնուելով:

Իւրաբանչիւր կաթիլ իրեն հետ կը տանի աշխարհ մը,  
Միխոնուոր էակներ կը ծնին ու կ'ապրին անոր մէջ,  
Կ'ազազակեն իրենց ցաւը նաւաբեկեալներու պէս  
Ու կ'ոգրան՝ կառչելով մեռնող երկվայրկեաններուն:

Կաթիլներ կը շարունակեն ծնիլ շոայլ ամպրոպներէն:  
Աշխարհներ կը կազմուին մշուշներէն ու կ'անէանան:  
Եւ վայրկեան առ վայրկեան ժամանակը կը սպաննէ մեզ  
Եւ մենք կ'երագեմք մեր յոյսերուն օրօրացին մէջ:

Իւրաբանչիւր հիւշէ կը պարունակէ տիեզերք մը ամբողջ՝  
Իր արեւներով, իր լուսիններով, իր մոլորակներով,  
Իւրաբանչիւր պահ կը խորտակէ գիսատրներու հոյեր,  
Իւրաբանչիւր ակնթարթ կը ստեղծէ դժոխք եւ արքայութիւն:

Բայց դուք, ի՞նչ կը պահես հոգիիդ ծայրերուն մէջ.  
Ի՞նչ հրեշտակային վերացում, ի՞նչ եթերային թռիչք,  
Ի՞նչ վառ իզներ կը պատրաստէ աշխարհի լինելը,  
Երբ կայծակը իր հրեզէն սուրով կը հարուածէ անջրպետը:

Դուն գեհեմի հրեշտակն ես, անբային Լիլիթը,  
Դուն ուշացող հրնուամբն ես, չսպասուած վերքը,  
Դուն հեշտաբեր կասկածն ես, անձկագին բերկրամբը,  
Դիւրաբեկ յոյսերուս անտարբեր մայրը եւ դահիճը:

Երբ շրթներդ առի, ձմեռը դարձաւ զարուն:  
Բայց ո՞վ էր սիրածս արդեօք՝ Լիլիթը, թէ Եւան:  
Հագարաւոր դէմքեր կ'իյնային կաթիլներուն հետ,  
Հագարաւոր անուններ կը լուսագրուէին երկինքի մուրին վրայ:

Արդեօք գո՞ւն ես տիպարը այն ազգիկներուն,  
Որոնց եզունգները ակօսներ բացին սրտիս վրայ:  
Դո՞ւն ես արդեօք ազբիւրը այն բուրբ կայծերուն,  
Որոնք զարգարեցին մռայլ գիշերներս:

Դուն երկնակամարին վրայ նեմոզ անարատ կոյսն ես,  
Մայքերուն վրայ սպասող աննուանելի պերճազինը,  
Դուն ոգորմութիւնն ես, իսկ ես՝ մարացկանը,  
Ովկիանոսներուն վրայ ծաղկած տարաշխարհիկ կզգին:

Եթէ կ'ուզես՝ սիրէ զիս, ինչպէս մագնիսը կը սիրէ երկաթը:  
Ինչպէս զեփիւռը, որ կը շոյէ ՝ որեւի՛ հասկերը:  
Ես մամուռէ զորզն եմ քայլեցի ու զ տակ փռուած,  
Խոտը՝ որ կը համբուրէ ստփերուդ կոյս ներբանները:

Կիրճերուս ալիքները վախով կը մտնենան  
Սպիտակ մարմնիդ անպաշտ պան ափերուն:  
Բայց ինչպէս արեւը կ'ողորչ կակաչնէրու դաշտ մը,  
Յիշատակդ կը զանդաղեցնէ տենչանքիս քարախումները:

Կը սպասեմ, որ ժամացոյցին սլաքը վերսկսի թաւալի  
Եւ վայրկեանները կաթին լոյսի բաժակին մէջ,  
Այն ատեն սիրտդ պիտի յարգի անգապիլի գուրգուրանքով  
Եւ սիրոյ հաւրը պիտի հրդեհէ զէմփիզ դալկութիւնը:

Բարձրագոյն աշտարակէն պիտի կանչես իմ անունս  
Եւ եօթնանկիւն պարիսպներով քաղաքի գուռները պիտի բացուին  
Եւ վարդեր շալկած ազգիկներ, վազելով փողոցներուն մէջ,  
Պիտի դիմաւորեն մութ նամբաներէն եկող իրենց սիրահարները:

Այն ատեն աստղերը պիտի գարգարեն երկնակամարը,  
Եւ բիբերուդ անդունդին մէջ բանտարկուած պատկերս  
Պիտի յայտնուի բարձրագոյն աշտարակի պատշգամբին վրայ  
Եւ մեր գոյութիւնը պիտի լեցնէ անջրպետին պարապութիւնը:

Ամէն առտու կ'անցնէիր կախարդուած շղթային տակէն,  
Կ'անցնէիր երգելով խորհրդաւոր ու անհասկնալի երգ մը,  
Կու գայիր հպարտ ու անտարբեր հին կամուրջին կողմէն  
Եւ արեւը կը համբուրէր քմայնտ շրթներդ:

Կ'անցնէիր երգելով կախարդուած շղթայիդ տակէն  
Ու կը ժպտէիր տեսնելով սիրտս վայրագ կեռով ծակուած,  
Ո՛վ սեւ վարսերով աղբիկ, որուն անգութ նայուածքը  
Կը դաշունահարէր շղթային ծայրը արիւնդ սիրտս:

Կ'անցնէիր խնդալով այդ դարաւոր կամարին տակէն:  
Յաղթական քայլերդ կը ցնցէին երկրագունտը:  
Եւ ինչպէս հովին զէմ հաւարկոյց առագաստանաւ մը,  
Սպիտակ շրջագգեստդ կը պարզուէր լոյսին մէջ:

Եւ ամէն անգամ, որ կ'անցնէիր կախարդուած շղթային տակէն,  
Կաթիլ մը արիւն կ'իյնար յօշոտուած սիրտէս՝  
Զարդարելու համար մետաքսէ շրջագգեստիդ սպիտակութիւնը,  
Որ կը ծածկէր անգութ գահիճի սառն անտարբերութիւնդ:

Եւ իրիկունը դարձեալ կ'անցնէիր կամարին տակէն,  
Ու տեսնելով խոցուած սրտիս տառապանքը,  
Կրկին կ'երգէիր հեթանոս ու տարօրինակ երգ մը,  
Մինչ կարմիր յակիթ մը կ'աւելնար շրջագգեստիդ վրայ:

Երկու անգամ կոքոսուած ու վերագտնուած ո՛վ Եւրիդիկէ,  
Քեզի համար ծովուն աւազները տորուկներու վերածեցի,  
Քեզի համար ծովուն ջուրերը աղամանդի վերածեցի  
նւ ժամանակը խտացուցի երկվայրկեանի մը մէջ:

Ո՛ր ե՛ն այն գիշերները, երբ երկնամարին լոյսերը  
կը խտանային բիբերուդ անցրպետին մէջ,  
Երբ սեւ մագեթոզ կ'աւլէին համաստեղութի՝ ճներու փոշիները,  
Բարձրագոյն աշտարակին վրայ ճեմող ո՛վ իշխանուհիս:

Ես ցնջեցի արեւը, լուսինն ու լուսընթացը,  
Ու մատներովս մէկիկ-մէկիկ մարեցի աստղերը,  
Վարագոյր մը փաշեցի բեւեռային արշալոյսներուն առջեւ,  
Որպէսզի տիեզերքին միակ արեւը դուն ըլլաս:

Ո՛վ ազաւնիի պէս ճկուն ու փափուկ ձեռքերով աղջիկ,  
Ահա սսիկ սիրտս՝ կախուած անգութ շղթայի մը ծայրը,  
Արեւելեան փառաքի մը այս հիմաւորց դրան կամարին,  
Որուն տակէն կ'անցնիս ամէն օր, ծիծաղը շրթներուդ:

Անա՛ յիշատակներս, անա՛ երազներս եւ անա սիրտս՝  
Կեռով մը ծակուած, սպաննուած թռչունի մը պէս:  
Այսպէս կը մահանան չհասկցուած հոգիները,  
Այսպէս կը տառապին մերժուած ու խոցուած սրտերը:

Սիրտս մեռած է Եւայի եւ Ադամի օրերէն ի վեր,  
Երբ Եդեմի պարտէզը վերածուեցաւ տատակներու դաշտի մը:  
Բայց ինչո՞ւ ան կ'երեւի դեռ, կը ցնցուի, կը բաբախէ,  
Ամէն անգամ, որ երգելով կ'անցնիս կամարին տակէն:

\* \*

Գուցէ օր մը, ո՛վ իմ անմեղ ու անգութ սիրուհիս,  
Թաքթիչներուդ վրայ գգաս արցունքներու ծորումը,  
Ու կանգնելով կամարէն կախուած շղթային տակ,  
Ինծի համար երգես հին ու փաղթ երգերէդ մէկը:

Այն ատեն, հովը պիտի դադրի զարնուելէ դրան ճակտին,  
Ան պիտի շորնայ՝ խուժելով կամարին տակ,  
Ան պիտի շշարժէ յաւիտենականութեան շղթան,  
Որուն երբեւեկը կը գուարճացնէր անցորդները:

Ու սիրտս, վերակենդանոջ թռչունի մը պէս,  
Պիտի ցնցուի ու բաժնուելով արիւնաբբու կեռէն՝  
Պիտի իյնայ սպիտակ շրջագցեստիդ ծայրերուն մէջ,  
Ուր ամէն ինչ անդորրութիւն է ու հեշտանք:

Միրտս պիտի իյնա՞յ արդեօք շ . ցազգեստիդ ծախերուն մէջ,  
 Արեամս կարիւններով գարդայ ուած սպիտակ մետաքսին մէջ,  
 Միրտս պիտի հանգչի՞ արդեօք՝ փափուկ ձեռներուդ մէջ,  
 Սեւ մազերուդ այլիքներուն փայփայտմէն տակ:

Սակայն ես վանեցի վախն ու մղձաւանջը,  
 Խորտակելով գարիւրանքը գիշերներուն,  
 Ես բռնաբարեցի մահուան ջագատը ու թիւնը  
 Եւ համատեղութիւններ փոստի տոբերուդ տակ:

Քեզի համար ստեղծեցի եղեմի նոյն պարտէզ մը,  
 Որուն ծառերուն վրայ պիտի բուսնին աստղի կտորներ:  
 Անոր լիճներուն մէջ պիտի հայելիանայ գեղեցկութիւնդ,  
 Մինչեւ որ պատուօրի աստուածային գաղտնիքներուն խորը:

Որքա՞ն միջոցներ կտրեցի եւ որքա՞ն ճամբայ փայցի  
 Հասնելու համար եօթնանկիւն պարիսպներով ֆաղափն,  
 Որքա՞ն ժամանակ փռչիացուցի՝ տեսնելու համար դէմքդ,  
 Բարձրագոյն աշտարակից վանդակապատ լուսամուտի ետին:

Մի՞թէ աստղ մը չեմ կապած մազերուդ իւրաքանչիւր թելին,  
 Մի՞թէ սիրտս չեմ կախած սերովդ կախարդուած շրթային:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՍԵԱՆՆ

ՆԻՔՈՍ ՔԱԶԱՆՁԱԳԻՍ



...Առաջինը հարուստը առաջը մենք պիտի չըր-  
լանք, բայց էթի զարնեն մեզի, պետք չի մտնալ, որ  
Աստուած ինչի ալ մեռք տուած է, ու փոխադար-  
ձարար մենք նա պիտի զարնենք: Ինչ կրնայ ընել  
արդարու թիւնք. ինչպէ՛ն կրնայ անիկա ինքզինք  
պարտազրկել անարդար ու անպարկեշտ աշխարհի  
մը մէջ: Գարզ է ուրեմն, որ արդարու թիւնք ոչինչ  
կրնայ ընել, էթի զինուած չըլլայ:

ՆԻՔՈՍ ՔԱԶԱՆՁԱԳԻՍ



ՎԵՐԱԽԱԶՈՒԱԾ ՔՐԻՍՏՈՍԱԸ



ՀԱՅԱՅՈՒԹ՝  
ՍԱՐԳԻՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՍ (ուծգիմ).— Այո՛, ժանտախար: Կորսուած ենք: Օտարները  
սարսափելի համանարակ մը բերին մեր գիւղը:  
ՓՈԹՈՐԻԿ (կը պոռայ ինքն իր մէջ վիրաւոր).— Սուտեր, կը սաէ, չըխտուն-  
եանե՛ք: (ՏԵՐ ԳՐԻԳՈՐԻՍԻՆ): Ստորին արարած, փչեցիր, ինչո՞՞՞ օտար  
քահանային: Ժանտախար: Ձե՛ն ամչնար, սրիկայ: Սպասեցէք, վար  
կ'իջնեմ ահա: Սպասեցէք:

(Կ'ուզէ իջնել, բայց, գինով ըլլալով, սխալ բայլ մը կը նետէ, աստիճաններուն կ'առկախուի եւ կ'արձակէ սուր ճիչ մը: Աղան եւ Եւսուփափին, որոնք խոր բունի մէջ են, քիչ մը կը շարժուին աղմուկէն, բայց դարձեալ բունի կ'անցնին: Միւսները, իրենց իրարանցումին, մէջ ոչինչ կը լսեն):

**ՍԻՄՎՐԻՍԵՏԻ Բ. ԿԻՆԸ.**— *Հեռացէք այս տեղէն... Զաւակներ եւ թոռներ ունիմ:*

**ՏԻՄՈՍ.**— *Գժրախտութիւն մի բերէք մեր տուները:*

**Տէր ԳՐԻԳՈՐԻՍ.**— *Հանդարտ, հանդարտ, Գրիստոնեաներ: (ձիչերը կը մեղմանն): Աստուծո՛վ ետք, թող ինքս ալ պատասխանեմ Տէր Ֆոթիսին: Տէր հայր, դուն մեզի պատմեցիր ձեր տառապանքները եւ յուզեցիր մեր սրտերը: Տեսար, որ արցունքոտեցան ձեր աչքերը: Մեր սրտերը պատրաստ էին ընդունելու ձեզ, բայց այս վայրկեանիս, Աստուած զՔաց մեզի եւ զրկեց սոսկալի նշան մը: Դուք համաճարակ մը բերիք, եղբայրներս, համաճարակ մը...: Հեռացէք, ի սէր Աստուծոյ, մի մխրճէք մեր դիւզը գժրախտութեան մէջ:*

**ՔՐԻՍ.**— *Թող կորսուին, թող կորսուին: Հեռացէք, զացէք այս տեղերէն:*

**Տէր ՖՈԹԻՍ** (մէքտեղ կը նետուի, անգուսպ).— *Ճիշդ չէ, մտիկ մի ընէք զինք: Մենք համաճարակ չենք բերած մեզի հետ: Մենք անօթի ենք: Եւ այս մանկամարդ աղջիկը անօթութենէն մեռաւ: Կ'երզնում...: (Կ'ուզէ զրի գէպի Տէր Գրիգորիս): Ճարպակալած տէրտէր, երկկզակ տէրտէր: Թող Աստուած ներէ քեզի, որովհետեւ ատկեա վեր է իմ կարողութենէն:*

**ՔՐԻՍ.**— *Հեռացէք, Հեռացէք: (Լիքովիսեցիները կ'ընկրկին սարսափաբար):*

**Տէր ԳՐԻԳՈՐԻՍ** (պոռալով՝ Տէր Ֆոթիսին).— *Փողովուրդին ժայնը Աստուծոյ ձայնն է: Գացէք, եւ Աստուած հետեւնիդ: (Կը հեռանայ):*

**Տէր ՖՈԹԻՍ.**— *Թող այս ոճերը ձեր զխուսն պայթի, Տէր Գրիգորիս, վերջին Դատաստանին կը տեսնուինք: (Կը դառնայ գաղթականներուն կողմը): Ոտքի ելէք, դասակներս: Քաջ եղէք: Աշխարհը լայն է եւ մենք կրնաք աւելի հեռուն երթալ...:*

**ՄԱՆՈՒԻՍ** (ամօքահար՝ կը մօտենայ Տէր Ֆոթիսին: Անոնք՝ որոնք գետին էին, ոտի կ'ելլեն եւ կը պատրաստուին մեկնելու): *Յոյսերնիդ Աստուծոյ վրայ գրէք, Տէր հայր, Ան ձեզ չի լքեր:*

**Տէր ՖՈԹԻՍ.**— *Անկասկած, Աստուծոյ վրայ յոյս ունինք: Հապա կ'ուզէք որ մարդոց վրայ վստահութիւն ունենայինք:*

**ՔԱՔԷՐԻՆԱ** (շալը կը հանէ եւ կ'երկարէ Տէր Ֆոթիսին).— *Այս շալէն զատ ուրիշ ոչինչ ունիմ ձեզի ապիք: Առէք, գեւ նոր հիտուած է:*

**ՄԱՆՈՒԻՍ.**— *Տէր Ֆոթիս, մենք միւսներս պիտի օգնենք ձեզի: Մեր կարողութեան աստիճաններուն մէջ ամէն ինչ պիտի ընենք ձեզի համար:*

**Տէր ՖՈԹԻՍ.**— *Ենորհակալ եմ, աղաս: Աղքատ ենք, բայց սիրով զեզու ն. ներկայիս ատկեա չերիք է ձեզի: Անունդ ի՞նչ է, աղաս:*

**ՄԱՆՈՒԻՍ.**— *Մանոյիս:*

**ԵԱՆԱՔՈՍ.**— *Բռնեցէք այս ճամբան եւ ուզիդ շարունակեցէք: Եւ պիտի հանիք ուղղակի Սարաքինա լեռը, որ լեցուն է քարայրներով:*

**ԿՈՍՏԱՆԴԻՍ.**— *Ջուր ալ կայ հին:*

**ՄԱՆՈՒԻՍ.**— *Լեռը ծածկուած է մացառներով: Կրնաք կրակ ալ վառել:*

**Տէր ՖՈԹԻՍ.**— *Մարդիկ ամէն տեղ կը հալածեն մեզ: Ուստի՝ դադաններուն հետ պիտի ապրինք քարայրներուն մէջ: (Կը բարձրացնէ Աւետա-*

ըսնր եւ, կ'օրհնէ յեռը): *Լեռ, ձեռակերտ Ամենակարողին, ո՞վ քա-  
րեզէն Հսկայ գանդուած եւ գուն, ջուր, որ շես գիտեր զազարին ինչ  
ըլլալը եւ կը ժայթքէս քարէն, յազեցնելու Համար վայրի ծիծառներու  
եւ բազմներու ծարաւը, եւ գուն, կրակ, որ կը ներհն աւտառներուն  
մէջ եւ կը սպասեն, որ մարդ արթնցնէ քեզ, որպէսզի ծառայես իրեն:*  
*Օրհնեալ ըլլաք դուք: Մենք մարդեր ենք՝ հալածուած մարդերը:  
Միծառներ, բազմներ, գիշատիչ թռչուններ՝ նուազ վայրազ, քան  
մարդը, ընդունեցէք մեզ սիրով (Մանդիլոսի ու ընկերներուն դա-  
նալով): Քրիստոսը յարեաւ, զաւակներս, երջանկութիւն եւ բարգա-  
ւաճ կեանք բոլորիդ:*

**ՄԱՆՈՒԹՅՈՒ ԸՆԿԵՐՆԵՐ.—** Արդարեւ, Քրիստոս յարեաւ ի մեռելոց, Տէր Տո-  
թիւ:

**ՄԱՆՈՒԹՅՈՒ—** Մըշէլիս, Հիմա է, որ կատարուեցաւ մեր գատառանքը: Դու ն  
միակն ես մեր մէջ, որ կրնաս օգնել մեր հալածուած եղբայրներուն:

**ՄԻՇԷԼԻՎ.—** Մեզի երթանք:

(Մեծ իայերով կ'առաջանայ: Երեք ընկերները կը հետեւին անոր):

**ՔԱՔԷՐԻՆԱ** (որ կը հետեւի վերջինին).— *Մանդիլոս:* (Մանդիլոս տագնա-  
պահար կը նայի անոր: Փաթերինա կը մօտեցայ Մանդիլոսին):  
*Ես ի՞նչ կրնամ ընել, կրնամ՞ մեզի օգնել:*

**ՄԱՆՈՒԹՅՈՒ—** Ո՛չ, շես կրնար:

(Կը հեռանայ: Փաթերինա կը մնայ վայրկեան մը, ապա կը մտնէ  
իր տունը):

**ԱՂԱ** (ապշահար՝ տեղէն ցատկելով).— *Ալլա՛հ: Այս ո՞ր եմ: Երա՞զ է արդ-  
եօք: Ո՞ր են սա մարդիկը: Նաւապետը փախա՞ւ: (Կը պոռայ): Նա-  
ւապետ...: (Սրերայէն կը մօտենայ պատշգամին ծայրը եւ կը  
նկատէ գետին փռուած նաւապետը): Ալլա՛հ: Գացեր գետինը կը  
պատկի: Նաւապետ: Տեղէն չի շարժիր: Նաւապետ...  
(Աստիճաններէն դանդաղօրէն կ'իջնէ՝ յենելով բազրիկին: Ղա-  
ւա անքա կը մտնէ):*

**ՂԱՌԱՍ.—** Ի՞նչ ունիս, Աղաս, Եռաս: Փաթիին բա՞ն մը պատահեցաւ:

**ԱՂԱ.—** Ո՛չ, իմար: Դժբախտութեան մասին մի՛ խօսիր: Նաւապետին բան մը  
պատահեր է: (Ցաւով կը մօտենայ նաւապետին, կը ցնցէ գայն): Ի  
սէր Ալլահին, ի՞նչ ունիս, նաւապետ, չըլլա՞յ թէ մեռար: Այդ մէ՞կը  
բոլոր էնծի, նաւապետ: Ո՞ր գացիր այդ պէս:

(Նաւապետը կը բանայ այժերը եւ կը խօսի նուազ ձայնով):

**ՓՈԹՈՐԻԿ.—** Պարզեցի առաջաստները, Աղաս: Այս անգամ հովը ճիշդ կողմէն  
կը փչէ: Մնաս բարով:

**ԱՂԱ** (կը խնդայ).— Ո՞ր կ'երթաս, օրհնեալ նաւապետ: Քիչ մը սպասէ:

**ՓՈԹՈՐԻԿ.—** Ո՛չ: Մնաս բարով ըսի քեզի, Աղաս: Խարխիւր արդէն վերջուցի եւ  
պարզեցի առաջաստները: Ամէն ինչ վերջացաւ:

**ԱՂԱ.—** Եւ ո՞ր կ'երթաս այսպէս, գիտե՞ս թէ ուր կ'երթաս:

**ՓՈԹՈՐԻԿ.—** Սատանան գիտէ, թէ ուր կ'երթամ: Եթէ կրօնքիս հաւատք ըն-  
ծայեմ՝ ուղղակի՛ գժոխք:

**ԱՂԱ.—** Ի դէպ, շե՞ս կարծիր, որ մեր կրօնքները մեր վրայ կը խնդան: Կ'ու-  
ղե՞ս, որ կանչել տամ օրհնեալ քահանան, որ հաղորդութիւն տայ  
քեզի:

**ՓՈԹՈՐԻԿ.—** Ի՞նչ քահանայ, խո՞ ֆաժին մէկը: Միայն թէ մեղքերս կարենայի  
յիշել: Ինչ մեղք, որ արձանագրուած է իմ անունիս գիմաց՝ եթէ կա-  
մենայ թող Աստուած ինք ջնջէ: (Մենք մըջիւններ ենք: Մեր մեղքը՝  
ուրիշներէն ցորենի հատիկ մը աւելի կ'երած ըլլալն է): Սատկած մըր-



Ղիւն ծրն ալ: Աքանչիւի է, չէ՞: Եթէ կ'ուզէ՝ թող ինք ջնջէ այդ բոլորը, այդ մէծ փիղը:

ԱՂԱ.— Նաւ ապետ, կը տադականան:

ՓՈԹՈՐԻԿ.— Ռաքիի շիւս քեզի կը ձգեմ, Աղաս, կը խմես իմ կենացո: Կտակս գրելու ժամանակ չունիմ, բայց... յիշէ, Աղաս: Տանս բոլոր առարկանքը կը կտակեմ քիչ առաջու ան զաղթականներու ն, այդ խեղճերու ն... բացի տաւը քիչո յարդէն: Տարը քիչո յարդը կը կտակեմ Եանաքոսի աւանակին: Եւ երեք կտոր օսկիս ալ՝ քահանային, որպէսզի նեխելէս առաջ թաղէ գիս, որովհետեւ առանց դրամի ան թաղու մ չի կատարեր:

ԱՂԱ.— Ետու եկուր, Եուսուֆաքի: Օդի բեր նաւապետին, որպէսզի ճնկենք միասին: Եկուր եւ երգէ քու երգդ՝ «Աշխարհը երազ մըն է: Ռաքիմ է կեանքը»:

ՓՈԹՈՐԻԿ.— Կեանքն ու մահը մէկ երազ են: Քիչ առաջ կ'երագէի, թէ նաևու մը վրայ դարձեալ նաւապետ էի, եւ դու ն ալ, Աղա... կըր արթնցայ:

ԱՂԱ (աւելի գորաւոր ձայնով).— Նաւապետը կ'արթննա՛յ: Ղաուա՛ս, Հնչեցուր փողդ, Հնչեցուր գարթնումի եղանակը, որպէսզի նաւապետը արթննայ: Ամբողջ ու ժողով, մինչեւ վերջին շունչ, Հնչեցուր գարթնումի եղանակը: (Ղաուաս կը հնչեցնէ փողը):

ՓՈԹՈՐԻԿ.— Աշխարհ եւ երազը մէկ ամբողջութիւն են...: Կը յիշեմ Պաթումի մէկ ծովափը: Երեք ընկերներ էինք... Կը ճնկէինք միասին... Յանկարծ սկսաւ տեղալ գաղջ աւճրեւ մը... Յամաքն ու ծովը անուշ կը բուրէին...: Բարի գիշեր, Աղա, բարի գիշեր... (Աղան Եուսուֆաքիի ձեռքէն կ'առնէ ռաքիի շիւրը):

ԱՂԱ.— Նաւապետ: Մենք բարեկամներ չե՞նք միմե: Միասին երջանիկ չի՞նք: Խմէ ինծի Հետ: Հաւազոյն ռաքիս է, սեւ շամբէլ պատրաստը՝ ած: (Կը փորձէ խմել տալ նաւապետին, բայց կ'անցրազանցայ, որ ան մեռած է եւ, յանկարծ, գետին կը նետուի): Նաւապետ...: (Արասփախար կը հեռանայ): Ղաուաս, վա՛ր իջիր, շո՛ւա: Զինք Հոս մի՛ ձգեր, ուր կ'ուզես՝ Հոն տար, որպէսզի շտեմնեմ: Իջեցո՛ւր նկուզը: Եո՛ւա, ապո՛ւշ: Ներս անցնի՛նք, Եուսուֆաքիս... (Ղաուաս դժկամութեամբ վար կ'իջնէ):

ՂԱՌԻԱՍ.— Սատանան տանի գինք: (Մինչ կը փորձէ վերցնել նաւապետը, Եուսուֆաքիին կը քնած՝ Աղան վեր կը բարձրանայ): Ծանր է, անխճեալ: Տիկին Մարթա՛... սիկին Մարթա՛: (Կուզ Մարթան մտնանէն դուրս կու գայ):

ՄԱՐԹԱ.— Ի՞նչ կայ: Մեռա՞ծ է: Ա՛հ, գթա՛ ինծի, Տէ՛ր: Այս գործին մէջ ես մաս չունիմ: (Կը տանին նաւապետին դիակը եւ տպա կը դառնան: Ղաուաս կը մրմռայ նախատական քանի մը քառեր: Փաթրիարչէասի տունէն դուս կու գան շորս երիտասարդները, բեռնաւորուած շորս կողովներով):

ՄԻՇԷԼԻՍ.— Աճապարեցէ՛ք, տղաք: Հայրս շարթննայ, այլապէս կորուած ենք:

ԿՈՍՏԱՆԴԻՍ.— Պա՛հ: Զէի՞ր յսեր, թէ ինչպէս կը խոկար: ԵԱՆԱՔՈՍ.— Կը խոկար եւ կ'երագէր, թէ զբախտ կը մտնէ: Իր առջեւ, իրեն ճամբայ բանելու համար ո՛չ թէ շորս հրեշտակներու պէտք կայ, այլ՝ շորս ազոսներու: (Կը խնդան): Աւելի արագ հասնելու համար լաւ չէ՞ր ըլլար, որ իշուս վրայ բեռցնէինք:

- ՄԻՇԷԼԻՍ**.— *Հաւ զաղափար է, Եանաբո՛ւս...: Իչո՛ւն վրայ:*  
(Անոնք կը բեռցնեն էշը որքան որ կընան):
- ՄԱՆՈՒԹՈՍ**.— *Աճապարեցէ՛ք, որպէսզի Տէր Ծոթիսին Հասնինք:*  
(Կ'երեւի Փանայոզարոս, բայց անոնք չեն նկատեր զինք):
- ՄԻՇԷԼԻՍ** (Մարիորիին, որ միշտ կը մնայ իր պատուհանը): *Աստուած պիտի ներէ ձեզի մեր գողութեան համար, Մարիորի՛, քանի որ զաղթականներուն պիտի օգնենք:*
- ՄԱՐԻՈՐԻ**.— *Աստուած պիտի օգնէ ձեզի:*
- ՄԱՆՈՒԹՈՍ**.— *Աճապարեցէ՛ք, սղաք, աճապարեցէ՛ք: (Այնպէս կ'ընեն զաղթականներուն եւ Տէր Ծոթիսի նամբամ: Քաթերիմա տունէն դուրս կ'ելլէ):*
- ՔԱՅԷՐԻՆԱ**.— *Մանուկոս, գտնո՛ւկս ալ առէք: Զայն կը նուիրեմ զաղթականներուն: Ես ինչ պիտի բնեմ գտնուկը: Տարէք:*  
(Մանուկոս կ'անապարէ՝ որպէսզի հետանայ Քաթերիմայէն, որ սատանայ մը ըլլար կարծէք: Կ'աներեսութեամբ: Փանայոզարոս, որ պահուրտած է անոնցմէ շնկատուելու համար՝ կը յառաջանայ բեմին կեդրոնը: Մթնշաղ է: Հետզետէ գիշերը կը քանձրանայ):
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Յուդա՛, Յուդա՛. Քաթերիման զիս Յուդա կոչեց, ամէնքը կ'ուզեն, որ ես Յուդան ըլլամ: (Կը վազէ դէպի Տէր Գրիգորիսին տունը եւ կատարօրէն կը թափէ զուռը): Դուրբ բաց, տէր Հայր, ես եմ, Փանայոզարոսը, պէտք է անպայման խօսիմ Հետոյ: Ես եմ, Յուդան:*
- Տէր ԳՐԻԳՈՐԻՍ** (Կը բացուի դուռը, կ'երեւի Տէր Գրիգորիս).— *Ի՛նչ կ'ուզես, առանձի՞ն ես:*
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Առանձին...: Մի՛ն ոճիր մը գործուցաւ եւ զու՛ն պէտք է տեղակի ըլլաս անոր՝ արգիլելու համար աւելի մեծ յանցագործութիւնները: Փաթրիարչեանի մտանը կողոպտեցին:*
- Տէր ԳՐԻԳՈՐԻՍ**.— *Վարակուածնե՛րը:*
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Ոչ, Մանուկոսը եւ առաքելները մարմնացնելու համար մեր նշանակած մարդերը: Պէտք է տեսնէիք, թէ իր վարպետին ապրանքները ուսին առնելով Մանուկոս ինչպէ՛ս Սարաքինա բարձրացաւ, Հետեւելով Տէր Ծոթիսի բունած նամբուն:*
- Տէր ԳՐԻԳՈՐԻՍ**.— *Մանուկո՞ս այդպէս ըրաւ: Եւ զու՛ն շարգիլեցի՞ր:*  
(Մարիորի կ'երեւի իր տան պատուհանին մէջ):
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Առանձինը չէր, Միշէլիսն ալ Հետն էր: Ան իր վարպետին ղէմ Հանեց անոր Հարազատ զաւակը: Զաւակին սորվեցուց, թէ ինչպէս պէտք է կողոպտէ իր Հայրը:*
- Տէր ԳՐԻԳՈՐԻՍ**.— *Հա՛յրը ի՛նչ ըրաւ:*
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Կը քնանար:*
- Տէր ԳՐԻԳՈՐԻՍ**.— *Ես անձամբ պիտի երթամ եւ արթնցնեմ զինք: Եւ ցոյց տամ իրեն, թէ տունը կարգի չգրած՝ պէտք չէ քնանալ: (Տակնու վրայ եղած՝ ան կ'ուղղուի դէպի Փաթրիարչեանի տունը: Փանայոզարոս ինք եւս կը պատրաստուի մեկնելու): Դուն Հոս կեցիր, սատանայ՝ քեզի պէտք ունիմ...:*
- ՓԱՆԱՅՈՒԹՈՍ**.— *Ի՛մ գործս վերջացաւ: Ես Յուդան եմ, զու՛ք՝ սուրբերդ այդպէս ուզեցիք: Զմոռնաւ ասիկա:*  
(Կը խնդայ եւ բեմին խորքէն դուրս կ'ելլէ: Մարիորի մտահոգ՝ կ'երեւի բեմի յառաջամասին վրայ):
- ՄԱՐԻՈՐԻ** (հազիւ իմբզիմբ ասիք վրայ պահելով).— *Հայրի՛կ, Հայրի՛կ:*  
(Տէր Գրիգորիս ետ կը դառնայ):

**ՄԱՐԻՈՐԻ.**— Հայրի՛կ, հայրի՛կ, կո վախճամ, որ բան մը պատահի Մանուկոսին:

**Տէր ԳՐԻԳՈՐԻՍ** (սարսափահաւ ը).— **Լսեցի՞ր ըրածը:** Նշանածդ հոյակա՛ւ պտղայ է եղեր:

**ՄԱՐԻՈՐԻ** (լալով).— Հայրի՛կ:

**Տէր ԳՐԻԳՈՐԻՍ.**— Այլեւ ոչ մէկ խօսք...: Գնա՛ պտուկէ: (Կը հեռանայ անկէ եւ կ'երթայ ու կը թօկէ Փաթրիարշէասի դուռը): **Ոտքի էլ, տիար Փաթրիարշէաս, արթ'ցի՛ր՝ որպէսզի իմանաս զաւկիդ սիրազործութիւնը:** Դուն կրնաս հպարտանա՛լ անով:

(Կը հրէ դուռը եւ ներս կը մտնէ: Մարիորի լալէն շնչափնդ կ'ըլլայ: Լեճիօ ցատկելով վար կ'իջնէ):

**ԼԵՆԻՕ** (Յշմարելով Մարիորին).— **Մարիոր:** (Կը մօտենայ անոր): Ի՞նչ ունիս, **Մարիոր:** (Մարիորի կու լայ): **Գեղի կ'ըսեմ, ի՞նչ ունիս, Մարիոր:**

**ՄԱՐԻՈՐԻ.**— **Պիտի մեռնիմ:**

**ԼԵՆԻՕ.**— **Պիտի մեռնի՛ա:** Դժբախտութեան մասին մի՛ խօսիր: Կը կարծես, որ մեռնիր այդքան դիւրի՛ն է: Ինչքը կորսնցուցած ես, ի՛նչ է: Ետևով կ'առողջանաս եւ կ'ամուսնանաս:

**ՄԱՐԻՈՐԻ** (հեծկտալով).— **Ամուսնանալու համար ժամանակ պիտի չունենամ:**

**ԼԵՆԻՕ.**— Իսկապէ՛ս խելքդ թոցուցած ես: Ինչպէ՛ս թէ: Կարելի՞ է ամուսնութեան նախօրեակին լքել այդքան աղու որ երիտասարդ մը: Ես իմ Մանուկոսէս շեմ բամբուլի, միջին անգամ եթէ տասր մահ զիս տանիլ փորձեն: Դիտէ այս զեղեցիկ զիջերը, տես լուսնի լոյսը...

**ՄԱՐԻՈՐԻ.**— Ես արդէն չուտով մեռած կ'ըլլամ, **ԼԵՆԻՕ:** (Կը լսուի Փաթրիարշէասի ջրագար ձայնը: Զարհուրած): Այդ պոռացողը հա՛յրդ է:

**ԼԵՆԻՕ.**— Երեսի իմ պատճառովս է, որովհետեւ ուշացած եմ:

**ՄԱՐԻՈՐԻ.**— Ո՛չ, Միշէլիտի եւ Մանուկոսի պատճառով է, որ կը պտույ: Գաղթականներուն օգնելու համար՝ անոնք պարզեցին տիար Փաթրիարշէասի մտանը եւ Փանայողարուն այ ամէն ինչ պարզեց հօրս:

**ԼԵՆԻՕ.**— **Փանայողարո՞ւր:**

**ՄԱՐԻՈՐԻ.**— Այո: Գիշ տառջ մեր տունը նկաւ եւ ես պատուհանէս լսեցի ամէն ինչ: (Յազուած): Աստուած իմ: Արդեօք ի՛նչ պիտի պատահի հիմա:

**ԼԵՆԻՕ.**— Մի լար, Մարիորի: Ինքզինքիդ կը վնասես: Վեր ել եւ քնացիր: Երթամ Միշէլիտին լուր տամ:

(Բեմին միւս կողմէն միասին ներս կը մտնեն Մանուկոս, Կոստանդին, Եանաքոս ու իր էջը, եւ Միշէլիս):

**ՄԻՇԷԼԻՍ.**— **Լաւ պիտի ըլլար, եթէ զաղթականները Մարաքիտայի բարձունքը հաստատուէին:**

(Լեճիօ կ'անապարէ միանալ անոնց: Մարիորի հագիւ կը հետեւի իրեն):

**ԼԵՆԻՕ.**— **Մանուկոս, ի՛մ Մանուկոսս...** (Կը նետուի վիզին եւ գայն կ'անոնէ բազուկներուն մէջ): Գնա՛, գացէ՛ք բոլորդ, հեռացէ՛ք...

**ՄԱՆԱԻՐԻՍ.**— Ինչո՞ւ հեռանանք:

**ԼԵՆԻՕ.**— Վարպետդ ամէն ինչ իմացաւ: Փանայողարոս մատնեց բոլորդ:

**ԿՈՍՏԱՆԴԻՍ** (պոռթկալով).— **Յուգա՛...**

**ԵԱՆԱՔՈՍ.**— **Ձեզի չէի՞ ըսած, որ ան միշտ Յուզա եղած է:**

**ՄԱՐԻՈՐԻ** (շնչափնով կը մօտենայ Միշէլիսին).— **Կ'աղայեմ, մի երթար հիմա: Հայրս եւ հայրդ՝ երկուքն այ բարկացած են եւ եթէ երթաս, սարսափելի բաներ կրնան պատահիլ: Մեղքեր ինծի:**

ՄԻՇԷԼԻՍ.— Հա՞յրդ ալ գայրացած է: Բայց մենք ըրինք, ինչ որ պէտք է ընէինք:

ՄԱՆՈՒԻՌՈՍ (անհամբեր կը ժօտենայ Միշէլիսին).— Դե՛հ, երթանք, Միշէլիս: Լենի՛Ց.— Ո՛չ, ո՛չ դուն, իմ Մանուիլոս: Դուն միայն տիրոջ ծառայող պարզ հոգի մըն ես: Կրնան ամէն բան ուսերուդ բնօրհնել:

ՄԱՆՈՒԻՌՈՍ.— Ես չեմ կրնար Միշէլիսը բռն: Բոզին առանձին ձգել: (Վար կ'իջնեն: Փաթրիարշէասի ս ունէն դուրս կ'ելլէ Տէր Գրիգորիս, ապա՝ տան սեմին կ'երթի Վ արքիարշէաս):

Տէ՛ր ԳՐԻԳՈՐԻՍ.— Յաջորդ անգամ ուշադիր հղիբ, տեսր Փաթրիարշէաս: Քիչ կեր եւ քիչ պիտի քնանաս:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Գրո՛ղբ տանի: Ո՞վ կրնար հաւատալ նման արարքի մը: (Կը տեսնէ Մանուիլոսը եւ Միշէլիսը: Զարհուրած՝ միանները կեցած են անոնց ետին: Քաթրիիս իր տան դրան անցել կ'անգնած է: Բոլորը լուռ են: Փաթրիարշէաս կը յառաջանայ, կը նշմարէ զանոնք եւ ինքզինքնէն դուրս կ'ելլէ): Գողե՛ր, գողե՛ր: (Կը բռնէ Միշէլիսը եւ կը բաշէ): Հո՛ս եկուր, տեսնեմ դուն ասոնց հետ ինչ գործ ունիս: Դուն մեծամեծի մը զաւակն ես, մոռցա՞ր ատիկա:

ՄԻՇԷԼԻՍ (հանդարտօրէն).— Ես այլեւս չափահաս մարդ եմ եւ կրնամ ուղածս բնել:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Սատանան տանի: Դուն ինչպէ՞ս կը համարձակես այդպէս խօսիլ, ապուշ: Դուն հօրմէջ չե՞ս վախնար:

ՄԻՇԷԼԻՍ.— Ես միայն Աստուծմէ կը վախնամ:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ (զգային).— Եստ պիտի ուզէի գիտնալ, թէ ո՞վ սորվեցուց քեզի այս բոլորը: (Կը մտնումնէ Մանուիլոսը): Ի՞նչք, այս ծառայ: Ա՛ն զրդեց ձեզ, որ զիս կողոպտէք: Ահա՛ թէ ինչ: Եսնաբոսն ու կոստանդիսը եւս մաս կը կազմեն աւազակախումբին: Կը տեսնեմ, որ դուք իբրբոս հետ համաձայնէք էք՝ իսկական զողերու պէս: Եսորհաւորութիւննե՛րս: Ձեզ առաքեալ նշանակեցինք, որպէսզի գողու-թի՞ն բնէք: Ես առաջինը՝ Քրիստո՛սը: (Մանուիլոսին): Ինչո՞նչ չես խօսիր: Ի՞նչ ունիս ըսելիք: Քօսէ՛ տեսնեմ:

ՄԱՆՈՒԻՌՈՍ (մեղմ ձայնով).— Իմ խօսքս պարզապէս պիտի ըլլայ շնորհ մը խնդրել քեզմէ: Թոյլ տուր, որ լեռը բարձրանամ:

ԼԵՆԻՑ (ձեռքը բռնելով).— Լե՛ռը:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ (զարմացած).— Լե՛ռը բարձրանաս: Կ'ուզես մեկնիլ՝ մեզ հո՞նք ձգելով: Հապա ամուսնութիւնը: Ե՞րբ պիտի ամուսնանաս Լենիցի հետ, յիմար:

ՄԱՆՈՒԻՌՈՍ.— Դեռ պատրաստ չեմ, պարոն:

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Դուն դեռ պատրաստ չե՞ս: Ի՞նչ կը նշանակէ ատիկա:

ՄԱՆՈՒԻՌՈՍ.— Ես այ չեմ գիտեր, թէ ինչ կը նշանակէ ատիկա, միայն թէ կը զգամ, որ պատրաստ չեմ: Հողի՛ս...

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Ի՞նչ հողի, յիմար: Կը կարծեմ, որ կացութիւնը շատ փայլունն է: Գրո՛ղբ տանի, հիմա այ էլեր իր հողիին մասին կը խօսի: Միթէ դուն հողի ունի՞ս:

ՄԱՆՈՒԻՌՈՍ.— Ինչպէս բացատրեմ...: Ներքին ձայն մը...

ԼԵՆԻՑ.— Ի՞՞՞՞ Մանուիլոս...

ՓԱԹՐԻԱՐՇԷԱՍ.— Լենի՛Ց, ձգէ՛ որ երթայ...: Հեռացի՛ր այդտեղէն, գնա՛, քանի որ այդպէս կ'ուզես: Բայց անգամ մըն այ ոտք չդնես տունս, կը հասկնաս: Երբե՛ք: Միշէլիս, վերագարձիր տուն եւ խզէ հետը բոլոր կապերդ: Ես եմ, որ կը հրամայեմ հոս, չմոռնաս:

Տէ՛ր ԳՐԻԳՈՐԻՍ.— Եկուր, Մարիորի:

**ՄԱՐԻՈՐԻ.—** Հայրի՛կ:

**Տէ՛ր ԳՐԻԳՈՐԻՍ.—** Հո՛ւ, եւ հկու՛ :

(Դուրս կ'ելլեն: Փաթ լիարշէաս կը վերադառնայ զգայնացած: Միշէլիս, Մանոյիտի տեղը սեղմելէ ետք՝ կը հետեւի անոր: Լոռու-քիւն):

**ԿՈՍՏԱՆԴՆԻՍ.—** Գործերը լաւ չեն բնթանար այսօր: Ի՞նչ կընանք ընել: Գի- շեր բարի, Մանոյիտս եւ Քաջութիւն: Պանութս պիտի գոցեմ: (Կ'ուզողուի զէպի իր սրճարանը):

**ՄԱՆՈՒԻՏ.—** Գիշեր բարի:

**ԵԱՆԱԿՔՈՍ.—** Համբերութիւն: Կեանքը այսպէս է: Յոստութիւն...

(Յանաֆոս իշուն հետ կամաց-կամաց կը հեռանայ: Կոստանդիս ներս կ'անցընէ սրճարանին արձուցը: Գիշերը կը թանձրանայ: Լիալուսին է):

**ԼԵՆԻՍ.—** Մանոյիտս, ե՛րբ պիտի ամուսնանանք:

**ՄԱՆՈՒԻՏ.—** Ժամանակ կայ տակաւին, Լենիօ: Դեռ աւարտելիք կարգ մը գործեր ունիմ:

**ԼԵՆԻՍ.—** Ի՞նչ գործեր: Ոչխարներդ պահելէ զատ՝ զու՛ն ու բիշ գործ չունիս:

**ՄԱՆՈՒԻՏ.—** Բայց ոչ, ունիմ:

**ԼԵՆԻՍ.—** Մանոյիտս, աչքերուս նայէ: Ի՞նչ պատահած է չեզի: Ի՞նչ ըրած են չեզի: (Անձկութեամբ): Աչք դպած է չեզի, պէտք է դուրս հանենք մէջդ մտած գեւերը: Պառաւ Մանուպիքան կրնայ հեռացնել շար ոգիները ներսէջ: Երթամ ու խնդրեմ իրմէ բուժիչ բոյս մը: Սպասէ, Մանոյիտս, մի երթար:

(Լենիօ վազելէն կ'երթայ զէպի գիւղին կողմը: Երաժշտութիւն: Մանոյիտս աչքերը երկինք յառած է՝ ազօրազի ձեւ մը սուած: Ետ- ետ կ'երթայ եւ կ'ուզէ մեկնիլ: Քաթերիման, որ կամաց մը ներս մտած էր՝ կ'ուզողուի իր կողմը):

**ՔԱՔՆՆԻՆԱ (կիրճով քոնկած).—** Մանոյիտ՛ս, ես եկա՛յ ըսելով զու՛ն կը մեկ- նիս:

**ՄԱՆՈՒԻՏ.—** Ի՞նչ կ'ուզես ինձմէ, Քաթերիմա:

**ՔԱՔՆՆԻՆԱ.—** Ինձմէ՞ կը վախնաս: Սպասէ, ըսելիք ունիմ չեզի:

**ՄԱՆՈՒԻՏ.—** Հանդիստ ձգէ զիս, Քաթերիմա: Մի մոռնար, որ դայ ասորի զու՛ն պիտի ըլլաս Մարիամ Մազթաղենացին: Հանդիստ ձգէ զիս:

**ՔԱՔՆՆԻՆԱ.—** Ըլլալու պէտք չունիմ, արդէն եմ: Միայն զիպէն մազերուս համար չէ, որ Մազթաղենացի ընտրեցին զիս այդ փճացածները: Մա- նոյիտս, ամէն գիշեր երազիս մէջ չեզ կը աեսնեմ: Ամէն գիշեր կ'այցե- լիս ինձի: Լաւ մտիկ ըրէ զիս, գացանիք մը պիտի յայտնեմ չեզի, ամէն անձ, մինչեւ անգամ Փանայողարոսը, կ'աստուածանայ վայրկեանի մը համար: Ճշմարիտ աստուած մը, միտէ աստուած մը եւ ոչ թէ վե- րացական: (Կը խնդայ): Մանոյիտս, այս աստու ես երազեցի Քու մասիդ: Ձեռքիդ մէջ բռնած էիր լուսինը, կտոր-կտոր կ'ընէիր դայն եւ կու տայիր ինձի, որ ուտեմ: Որպէպի չեզ երազիս մէջ տեսնեմ, պէտք է, որ դու ն այ իմ մասիս մտածես: (Մանոյիտս աչքերը գետնին յառած կը մնայ): Ամօթէ՛դ կարճեցար, Մանոյիտս, խղիւղեցար: Ուրե- մըն՝ իրաւունք ունիմ: Կը մտածես իմ մասիս: Ես այ կը մտածեմ Քու մասիդ... Եւ երբ իմ մտածումներուս մէջ տեղ կը գրաւես՝ կ'ամչնամ: Ինձի այնպէս կը թուի, թէ մերկ եմ եւ զու՛ն զիս կը դիտես:

**ՄԱՆՈՒԻՏ.—** Այո, կը մտածեմ Քու մասիդ... Աւագ Եարթուան ամբողջ երկայնքին, զու՛ն իմ մտածումներէս անբաժան էիր: Կը մտածեմ Քու մասիդ եւ կը խղճամ:

ՔԱԹՔԻՐԻՆԱ.— Ատրկա ճիւղ չէ:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ճիւղ է, Քաթէրինա, կը խղճամ քեզի:

ՔԱԹՔԻՐԻՆԱ.— Ատրկա ճիւղ չէ', դու ն յես խղճար ինձի: Կը սիրես զիս: Գիտեմ, որ կը սիրես զիս: Լենինային հետ պիտի ամուսնանաս, բայց զիս է, որ կը սիրես: Գիտեմ, որ կը սիրես զիս, դու ն այ գիտես ատրկա: (Մանուիլոս կը փորձէ հետամալ)

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ձզէ' որ երթամ, երթայ կ'ու յեմ:

ՔԱԹՔԻՐԻՆԱ.— Կ'անապարես, կ'ու գես շեռչ բարձրանայ, պանիր ու տեղու եւ կաթ խմելու, ուժ ամբարիւու: Գիտի ամուսնանաս, Մանուիլոս, եւ Լենինոն պահանջկոտ է:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Ո՛չ, պիտի շամուսնանամ: Ձե՛մ ուզեր ամուսնանայ, երբեք պիտի շամուսնանամ: Կ'ու գե՛մ մեռնի՛ց... (Երկարօրէն եւ առանց վախի կը մայի Քաթէրինային):

ՔԱԹՔԻՐԻՆԱ (յուսարեկ ոնով մը).— Այլեւս ի՞՞մ մասին մի մտածեր, Մանուիլոս: Երագիս մէջ մի գար այցելելու զի: Մի գար հալածելու զիս: Ես զէ՛ ճամբան բռնեցի: Լքէ՛ զիս:

ՄԱՆՈՒԹՅՈՒՆ.— Կը խղճամ քեզի, չեմ ուզեր, որ մոլորիս: Կը խղճամ քեզի, Քաթէրինա:

(Քաթէրինան կը մնայ անշարժ: Մանուիլոս կը մեկնի դէպի լիւ: Մուր: Կը լսուի երգ մը՝ «Տէր, փրկէ ժողովուրդդ»: Արաբիանայի լեռը կը լուսաւորուի: Կ'երեւի գաղթականներու զանգուածը: Բոլորը, փայրերու վրայ ծնրադիր՝ կ'երգեն: Անոնց մէջ՝ Տէր Ֆոքսը, որ ոտի կ'ելլէ: Երգը կ'աւարտի):

Տէ՛ր Ֆոքս!— Ձաւակնե՛րս, Աստուծոյ օղնու թեամբ հոս է, որ արժատ պիտի նետենք. այս դժուան լիրան՝ Սարաքինայի վրայ: Մարդը՝ ինչպէս ծառը, հողի պէտք ունի: Այս գիշեր Ս. Գէորգը երեւցաւ երագիս մէջ: Ս. Գէորգ, պահապանը մեր գիւղին, բոլորովին նման այն պատկերին, զոր պատկերնք թուրքերուն ձեռքէն: Խարտիչահեր, գեղեցիկ երիտասարդ մը, դարնան պէս զուարթ, հեծած իր ճերմակ ձիուն՝ իր ծունկերուն ունէր գեղեցիկ իշխանուհին, զոր խլած էր գետի վիշապէն եւ որ ոսկիէ զաւթով մը ջուր կու տար սուրբին... Ո՛վ է այդ իշխանուհին, զաւակներս: Ան մեր բոլորիս հոգին է, հեյլեակահանութեան հոգին: Ս. Գէորգ իր ձիուն վրայ առնելով՝ մեզ առաջնորդեց մինչեւ այս վայրի լեռը: Եւ այս գիշեր, երագիս մէջ, իմ ափսոս դրաս գիւղի մը հունտը, շատ պզտիկ գիւղի մը, որ ունէր իր նկեղեցին, զպրոցը, սոււնիքը եւ պարտէզները: Ան ըսաւ ինձի. «Ծանկ այս հունտը»:

ԾՆՐՈՒՆԻ ՓԱՆՈՒԿՈՒՆ.— Արդէն երեք անգամ տեսած եմ մեր գիւղին մահը: Առաջին անգամ՝ համաճարակի մը պատճառով, երկրորդ անգամ՝ երկրաշարժի մը հետեւ անբով, իսկ այս անգամ թուրքերուն կողմէ: Բայց երեք անգամին ալ տեսայ մարդուն նետած հունտը, որ դարձեալ կը ծլարձակէր:

Ա. ՄԱՐԴԸ.— Կեցցե՛ս, Փանակոս հայրիկ:

Ա. ԿԻՆԸ.— Դու ն, մեծ հայր, դու ն աւելի զօրաւոր ես, քան մահը:

Տէ՛ր Ֆոքս!— Տէ՛ր, այս օրհնեալ ջուրով կը ճշգեմ մեր գիւղին սահմանները: Թող թուրքը երբեք չթափանցէ անկէ ներս, թող համաճարակը բնա՛ւ չհարուածէ ու երկրաշարժները չկործանեն զայն: Անոր համար մենք պիտի կատուցանենք շորս զարպասներ: Բու պահապան հրեշտակներէ՞ չորս հրեշտակ նշանակէ, Տէ՛ր որ հսկեն անոնց վրայ: Հոս, արեւելեան կողմը, պիտի կատուցենք Քրիստոսի դուռը: (Թագուկները

դէպի Երկիրն կը բարձրացնէ): Տէ՛ր, այս քու դուռը է: Դուն սակ  
 ներս պիտի մտնես ու պիտի փրկես մեզ, երբ որոշես վտանգի պա-  
 ճուն իջնել երկիր եւ օդնել մեզի: Լաւ Հասկցիր մեզ, Տէ՛ր, մենք Հողե-  
 ղէն կահկներ ենք, ձայն մը ու նիւնք քեզի ու զդուստը եւ պիտի աղաղա-  
 կենք. եւ եթէ նոյնիսկ աւելորդ բան մը ըսենք՝ մի նեղանար: Կենաքը  
 դժուար է, եւ եթէ Դու ն գոյութիւն չունենայիր, մենք ամէնքս, մար-  
 դիկ եւ կիներ, ձեռք ձեռքի տուած՝ մենք մեզ անդու նդ պիտի նետե-  
 ինք՝ այս ծանր բեռնն ազատելու համար: Բայց Դու ն կաս, Տէ՛ր, եւ  
 դու մեր երջանկութիւնն ես, մխիթարանքը, վրէժխնդրութիւնը:  
 Դու ն կաս եւ այս քու դուռը է: (Ար դառնայ եւ կ'ուղղուի դէպի  
 կեդրոն): Իսկ չոն պիտի կառուցենք Աստուածամօր դուռը, մարդ-  
 կային ցեղի փրկարարին դուռը, նշան մը գրէք քարին վրայ: (Ձեռնե-  
 րը տարածելով): Անհարսնացեալ մայր, անթառամ վարդ, Ծողկած  
 այծատերու, որ կը փաթթուիս կաղնին: Մենք քու Հայածական  
 ժողովուրդը ենք: Դու ն կը յսն մեր ազօթքը: Դու ն մայր ես եւ գի-  
 տես, է ինչ կը նշանակին տառապանքը, սովը եւ մահը: Ուրեմն, խո-  
 նարէ՛ք աչքերդ մեր գիւղին վրայ եւ տո՛ւր կիներուն համբերութիւն  
 ու սէր: Տո՛ւր մարդոց աշխատելու քաջութիւն: Մա՛յր բարեխօս,  
 տո՛ւր ծերերուն ու պառուներուն խաղաղ վախճան մը: Այս դուռը  
 քու դուռը է, Աստուածամօր դուռը: Մտիք անկէ ներս: (Ար դառ-  
 նայ արեւմուտք): Հոս մենք պիտի կառուցանենք Ս. Գէորգ աշխա-  
 տատէրի դուռը: Ո՛վ սուրբ, մենք կը հաւատանք քեզի, դու ն տէրն ես,  
 անցուցուր եւ բազմացուր մեր գառներն ու այծերը, որպէսզի կաթ  
 տան մեր մանուկներուն եւ գորացնեն անոնց ոսկորները: Օրհնէ՛  
 րդոր անասունները, որոնք կը սիրեն ու կը ծառային մարդոց:  
 Օրհնէ՛ Հողը: Միացուր Հողը, մարդերը եւ սուրբերը, որոնք բողբոջ  
 մէկ բանակ կը կազմեն: Աստուած կը հրամայէ անոր եւ ցոյց կու տայ  
 ճշմարիտ համբան: Ս. Գէորգ, այս գիւղը քո՛ւ գիւղը է, այս դուռը  
 քո՛ւ դուռը է: Մենք գայն բարձր պիտի կառուցենք, որպէսզի դու ն  
 ձիւղի կարենաս անկէ ներս մտնել: Մտիք: (Ար դառնայ դէպի Եր-  
 սիւ): Հոս, հիւսիսային կողմը մենք պիտի կառուցենք Կոստանդնու-  
 յոս կայսեր դուռը: Վստահ եմ, դաւակններս, որ այս դուռնէն օր մը  
 քրտնաթոր ներս պիտի մտնէ սուրհանդակը եւ ազազակէ՛. Ե՛րբայր-  
 ներ, մենք վերագրուիցինք Կոստանդնուսիսը: Բոլորը միասնաբար կ'երգեն. «Տէ՛ր, փրկէ ժողովուրդդ»: Մուք:  
 Բեմի՛ն աջ անկիւնը, երիտասարդ հովիւ մը, Նիկոլիօ, սրի՛նգ կը  
 նուագէ: Լուսարձակը կեդրոնացած է իր վրայ:

ՆԻՔՈՍ ՔԱՉԱՆՉԱԳԻՍ

(Շար. 2)

## Գ Ա Ջ Ե Լ Հ Ա Յ Ր Ե Ն Ա Կ Ա Ն

..... \* .....

Սղիշէ Զարեմցի ժողովարան  
Յուստիանի անունով

Փոքորկայոյց դարում հնչեց հնչեղ քնարդ բազմալիք,  
Տեմչացի դու երկրիդ համար լուսապայծառ, չքնաղ գալիք:

Նետուեցիր դու պայքարի դաշտ, յանուն երթի մի յաղթական.  
Պայքեց գլխիդ շանթ ու ամպրոպ, ահագնագոռ հողմի ալիք:

Երկրիդ պէս եղար տռչում եւ հողմաշունչ, խիզախ ու վեհ,  
Եւ տեսար դու որքա՛ն սաղարնք, որքա՛ն դու ցաւ ու արհաւիրք:

Տառապանքով եղար հարուստ, գրկուածի դէմ՝ փխրահողի,  
Ժողովրդիդ մե՛ան՝ բարի, երբ շուրջդ կար այնքա՛ն չարիք:

Արեւահամ ողկոյցի պէս քանցեցիր դու սիրտդ սիրող՝  
Հայրենակէզ հոգուդ գաւում, որպէս անհուն բերք ու բարիք:

Եւ բարձրունքից բոբբոք հոգուդ ժայթքե՛ց, յորդե՛ց, տեղա՛ց  
առատ՝  
Ս բզդ, հե՛ւեղ, տե՛նդդ բոսոր՝ սիրոյ բերդից քառանկի:

«Ժամանակիդ շունչը» եղար, չդաւեցիր քո քնարին,  
Զբաժանեց քեզ մեր ձամբից ո՛չ մի ճանկ ու «ո՛չ մի ժանիք»:

Ովկիանոսի մէջ դու արեան, արնոտ սիրտդ առած ափում,  
Հեզնեցիր դու մահ, կախաղան, ամէն դաւ ու սպառնալիք:

Զդաւեցիր քո նայիրեան ոգուն, երկրին հագարամեայ,  
Տուիր հոգուդ պարտքը լրիւ, երբեք չեղար շուր ղասալիք:

Հաւաքական մեր ուժի մէջ՝ ասիր ելքն է մեր փրկութեան,-  
— Նմցիր խաղաղ, չե՛նք գիշի մե՛նք ո՛չ մի պահանջ ու առնելիք:

Քո «մոռումեմտը հիւսեցիր երգերից քո խոսք ու խրթին»,  
Մեր քարաշատ Հայաստանում էլ շիրիմի չունե՛ս կարիք:

Թեհրան, 1987



Ա. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

**ՆԵՂԵԱԼՆԵՐԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆՆ  
ՈՒ ՄԷԿ ԴՈՒՍԱՐԸ**



Այդ ամառանոցն էի փախչում մագապուրծ՝ ու զեղի բջիջները ոչրմ-  
չացնող տօթից, ամբոխի սովորական վայրագութեանը ակեղ հզօրութիւն  
տուռոզ թանձր, տեսանելի խոնաւութիւնից մէջս մեծ ու փոքր անցքեր բա-  
ցող գործերից ու զարթոցիչի նեկզ անխափամուտիւնից: Մի խօսքով՝  
մաղ դարձած՝ ընկալ գիւղաբնակ, *սարսու* վարորդիմ ասացի ամառա-  
նոցի անուր, բայց մա, երեւի, իր այժեքիմ անելի հաւատ էր բնծայում,  
քան ակամբներին... ու տարաւ: Թափում ու կարծես խղիւղահարած հայե-  
լու մէջ ինձ էր թայում: Իրօ՛՛՛ք որ տանջահարի տեսք ունէի: Ճանապարհը  
ուղեգրեղկում մշուած երկու մղոնից երկար թուաց, բայց դա վերագրեցի  
աշխարհի բոլոր տափու վարորդների մշտնջենական դաւին՝ հնարաւո-  
րիմ չափ զարտուզի ճանապարհով գնալ: Նրանք բոլորը երկրաչափու-  
թիւն անելի լաւ գիտեմ, քան աշխարհագրութիւն եւ, առհասարակ, կոր  
զծերի սիրահար են:

Սրբ վերջապէս հասանք, վայրը կարծածիցս անելի տեղոյն թուաց, մի  
տեսակ ամայի, ոչ թէ միայն անդորր: Վարորդը մի անգամ էլ խղճահա-  
րութեամբ լի հայեացք գցեց վրաս ու մեկնեց, ինձ թողնելով մի փոքր,  
փայտաշէն շինութեան աոջեւ: Պարզուեց, որ գրասենեակիմ հասնելու  
համար մի տասը աստիճան պէտք էր բարձրանալ, բայց ճամպուրկիս մէջ  
չպտտասխանուած նամակները, չկաթղացուած գրքերը, կուտակուած  
ամսագրերը (սրանց շապիկները ցաւ պատճառելու չափ ծանօթ են, ցան-  
կերը, աւա՞ղ, հետաքրքրող, իսկ բովանդակութիւնը դեռ անծանօթ) գիր  
կրելու յոյսով լոյս, սիրուն, կարճագոյն լոյս պահած մափուր թղթերը վէճի  
մէջ էիմ, թէ որի՞՞ հերթն է առաջ գալու: Դրանք իմ ջղալիմ վիճակից անելի  
էիմ ծանրացել, իսկ ես նրանց հանդէպ մեղքս զգալուց անելի էի թուլացել,  
այնպէս որ, այդ մի տասնեակ աստիճաններն անյարտահարելի էիմ: Գլխիս  
ամպեր էիմ կուտակում: Այդպէս շուար, տնկուած, կարծես ծիծաղելի եւ  
անհրապոյր տեսարան էի ներկայացնում, որից ազատուելու համար էր,  
երեւի, որ մի գէր մարդ իր օգնութիւնն առաջարկեց խիստ անբարեացա-  
կամ մախարանով:

- Զէ՛՛ք կարող բարձրացնել, հա՛:
- Իմ քաջից անելի է,- անծպիտ կատակեցի: Կեղծ, կաշառքի պէս:

վերցրեց ու երկու աստիճան յետոյ՝ «Ոչիմչ, կ'անցնի, կը բուժուի՛ք» ասաց: Փափուկ նայանձի մէկը, այդ ո՞վ է, որ երբեւէ ուզեցել է նիւհարութիւնից բուժուիլ: Ու գում էի, որ այդ տակտը հենց որ վեր բարձրանար, մի քերթի կաթուած ստանար, այնպէս, ոչ լուրջ, գուցէ այդ կարմրատակած գէմէր մի քիչ գունատուէր, մարդամասն դառնայու մօտեմար: Բայց նամպրուկս կրողն ինքն էր, ուստի եւ՝ «կաշառք տայս» շարունակեցի ասելով, թէ չչուտով եմ, բայց բնութեամբ կանխորոշուած չափերս ինչպէ՞ս թէ կ'անցնեն»: Ես կէս-ետ նայեց ու թուաց, թէ վարորդի պէս խղճալով ուսումնասիրեց: Սրբ հասաւ վեր, էլի շիւտեցեց:

— Ձեր ամբողջ ունեցուածքը սրա մէջ է:

Ի տես գրասենական կանգնած կնոջ՝ ուրախացել էի, եւ ցրուած ասացի.

— Հա՛... չէ, տանը կատու ունեմ: Եւ մի տղայ:

Այս որ ասացի՝ փախաւ, ուղղակի ծլկեց: Լաւ էլ եղաւ, ստիպուած չեղայ շնորհակալութիւն յայտնելու, մէջս օձ ֆշշաց, թող ինքը շնորհակալ լինի, որ մի միլիոն ճարպագեղից 999 հազար 999 մնաց, իմ լա՛ւ, իմ ոչ թէ ծանր, այլ ծանրակշի՛ւ նամպրուկի շնորհիւ մի հատը հայուեցա՛մ: Օձերն, ինչպէս գիտեմք, իմաստուն են:

Հիմա թող սա գուարճալի չթուայ: Արդէն զգում էի գլխիս հաւաքուած անպերի շէ թէ ստուեր, այլ՝ քաշը: Ինչ-որ անսովոր ու վատ բան էր կատարուում ինձ հետ եւ չգիտէի, թէ ինչ, որպէսզի խուսափելու ճիգ գործադրէի: Գրասենեակից ապակէ կիսապատով էի բաժանուած, բայց մի փոքր բացուածք կար, որտեղից եւ ներս հրեցի մի անզգացմունք «Բարեւ ձեզ»: Աշխատող կիներ ներս հրածս ետ մղեց, շարունակելով լրիւ անձայն խօսել հեռախօսով, բայց աչքերով այնպէս էր ինձ զննում, որ նոր ծակեր էին բացուում մէջս...

Ամպերն այնքան խտացան ու իջան, որ սկսեցի աղօտ տեսնել: Վերջապէս, գրասենեակուհին բացեց մեր երկխօսութիւնը:

— Ինչո՞վ կարող եմ օգնել, — *փլասթիկ* ժպիտ՝ անտահանուած, *պոլիթիլէնի* մէջ ծրարուած:

— Ահա անուս, հեռախօսով ասել էի, որ այսօր եմ գալու: — Ան-ժպիտ:

— Իսկ ո՞ւմ կողմից էք ուղարկուած:

Քիւրակրատներից, ընդհանրապէս, ամէն ինչ կարելի է սպասել, բայց այս մէկը նոր խօսք էր ասում իբր բնագաւառում: Ամպերն արդէն նակատիցս իջնում էին թարթիչներին:

— Ե՛ս որոշեցի գալ, ի՛նքս, — *բմբժած* եմ տալիս, որպէսզի չգոռամ վրան:

— Ճիշտ էք արել: Այո, այո՛, ի հարկէ... *ինքներդ*, — հարիւր տոկոսով ամաւ մի ժպիտ եւս:

Ինչ-որ կասկածելիօրէն սերտուած խրատուսանք էր, որպիսին բուժաշխատողներն են գործածում, երբ մահուան դատապարտուած հիւանդն ասում է՝ «Այսօր լաւ եմ»: Զարմանում, բայց վրայ եմ տալիս.

— Կանխավճարս ստացել էք ու հաստատել, որ «Օդեսա» վիլլայում սննեակ էք յատկացրել երկու շաբաթով:

— «Ողիսե՛ւս»... ու գում էք «Ողիսակա՞ն» ասել:

Աչքերիս առաջ մթնեց: Սատանայի մատը (մատ ունի՞ որ այդ սմբակաւորը) խառն է սրա մէջ: Ես՝ անիրականի սիրահարն ու պաշտպանը, գոհ եմ գնում հենց դրա՛ն: Որոշեցի վերանայել համագմբեմներս, արեւի հաշտ նայել իրականիմ, բայց դրա համար նաեւ մտածելու տեղ էր

պէտք, էլ չեմ ասում, որ հանգստանալու նստատեղով էի եկել ու ահա ընկել այս մեխանիզացուած սարդի օստայնը:

— Լսէ՛ք, ես քաղաքից վախել եմ, ինձ հանգիստ է պէտք:— Փորձում եմ պահանջկոտ տոնով ասել, բայց ձայնս ամպերի միջից խուլ է գուրս գալիս: Նա սկսում է քղթերին նայել — «Ղզզզ, աչքերն աշխատեցնող լուրերը միանում են: Տեսնես սրա «կարդայ» կոնակն ո՞վ սեղմեց, եւ կարո՞ղ է միտժամանակ կարդալ ու խօսել: Թղթերը խլելու, արագ նայելու ու պատահողներու ցանկութիւնս գոպելու համար նայում եմ կողմիս պատին: Շնորհաւորագրեր, մահու մզային իրաւունք «Ա.Ա.»-ին, այցելուներին անունները շիրապարակելու խոստմնագիր:

— Ներեցէ՛ք, ես օրտե՞ղ եմ գտնում:

— Վիլյա «Վրոզան»-ում:

Այս անգամ իսկական զգուանքով, արհամարհանքով է ասում: Է՛հ, ես եկած տեղս էլ չգիտեմ, բայց ինձը չի կարող միտժամանակ կարդալ եւ խօսել, քէն ձայնը նոյնն է՝ նախապէս ձայնագրուած գրասենեակային ֆազաֆապարութեան մոտը:

Ես այստեղ ի՞նչ գործ ունեմ:

Այլեւայլ բառերի տարափի հետ դուրս նախքան նաեւ գնալի՛ք չարաբաստիկ մտաբանողի անունը: Փրկարար այդ բառը սաւառնե՛ց, աչքերիս մշուշի քաղը մի քիչ վեր հանեց ու գնաց, գրասենեակուհին (արտակարգ դէպք ու վախ) կոնակները միացրեց: Հասկանո՞ւմ է՛ք. Ա.Ա.՝ Անանուն Այնհոռի... «Անունները գազտնի պահել», Աստուած իմ...: Ինչպէս միշտ, երբ լարումը գերեզօր է, կայծակը միանգամից է խփում. առանց օրոտի: Ու խփեց ուղիղ նակատիս: Ոչ քէ ամպեր կուտակուած էին վրաս, այլ արդէն կուլ էի գնում քշնամական, դաւադիր, մթնակալով ամպերին: Գիրկայ անելով մի կերպ կարդացի մնացածը. այս ու այն արգելուած է, այցելուները անցաբու՞ղք պէտք է կրեն, եւ այլն:

Բայց ես էլ լաւ եմ գտնուցել, ես՛, «Կատու... Բազաֆից փախե՛լ եմ», տեսնո՞ւմ է՛ք ինչեր եմ դուրս տուել: Ահաւասիկ, իրապաշտութիւնից էի փախչում, ընկալ գերիքապաշտութեան ֆտմնելի շօշափուկների մէջ: Խուճապահար գրասենեակուհին սկսեց տախիկարի գրասենեակի հետ ցղային ու տհան, բայց զոնէ՛ մարդու պէս խօսել. գէթ ծրագրուած ժպիտը մէկ կողմ դրած: Կիսաուշաքափ կանգնել-մնացել էի: Միջանցում երկու սեւամորթ երիտասարդ յայտնուեցին, իրար «Հէ՛յ, մար ազդիկ եմ բերել» ասացին ու սկսեցին մօտենալ:

— Գալի՞ս ես, քէ՞ գնում:

— Ո՛չ մէկը:— Կատաղութիւնս սարսափիս գերակշռեց: Չայնս ձոյլ արճիճ էր անխառն:

— Օ՛հ, պրոպէ՛տ ունես:

— Հաստա՛տ:

Հեռացան: Երեւի, վտանգաւոր երեւացի: Գրասենեակուհին եզրափակում է իր անտեղիօրէն երկար հեռախօսային նախատական էլոյթը ու իմ կողմը շարտում:

— Տախին մի քանի բողբոջ կը գայ: Եւ մեղաւորն էլ ես չեմ, որ նա սխալուել է: Ռեզում է ասել՝ ե՛ս եմ, իմ քոտտ, օգորմելի տեսքը, իսկ աչքերով կշտամբում է, այսինքն՝ «Շնորհակալութիւն ասա՛, անկիրք եւ անհորժալ, քո պատճառով մեխանիզմս խանգարուեց»:

— Գնահատում եմ, — փսփսացի, աչքս նամարուկիս: Աստիճանների անից ուստ նախօրօք սկսեց ցաւել: Տարածամօրէն մտածում էի, որ միայն երկուսն զսլիս է, որ նամարուկներն իրենք իրենց լիցքով են տեղաշարժ-

ում-միանում ձեռքերիս ու գալիս, ճիշտ այն ֆայող տիկնիկների պէս, որոնցից ես չեմ ունեցել: Երեւի, գրանց փոխարէն...

Կամաց-կամաց մտնում եմ սանդխտաբարձի: Տակաւոր հեռա-խօսով խօսում էր (կաթում չէր ստացել):

— Ո՛չ մի կաթիլ... Ազօբում եմ... Ձէ՛, ազի՛ն ձեռք էլ չեմ տալիս... կարեւոր պաշտօնեաներ կան... ճնշումս... է, *հոգայի* ընդունողների կռիւները... վա՛յ ինձ, կոկայինազուրկ, բայց ոչ կոկայինագերծ արիւնով մէկը հիմա՝ որ եկաւ, ես ի՞նչ, ինչպէ՞ս, ո՞ր բ...: Ու այնպէս եմ կանգնում, որ Տակաւորի հետեւում մնամ: Ինչ լաւ է, որ լ սկայական փոք ունի: Երանի՛ր քօթուի: Ես հրէշ եմ, դեւ, պատժուելու եմ. սրա պէս ակոտիլիկ եմ դառնալու, մեծ փոք եմ ունենալու, աչ միայն երազումս եմ տեսնելու, դանթէ-կան ուղեւորութիւնս դէպի դժոխք անպայման կ'իրականանար, եթէ տախին յայտնուէր: Ես չեմ վառարդն էր: Տակաւս ափով լսափողը ծածկեց ու «Օգնե՛մ», փսփոսաց: Քրիստոնէութի՛ւն ֆառօզեց, ոչ թէ հարցրեց: Ի՛նձ ապտակեց՝ իր այտը զէմ տալով, չէ՛, ինձ ոչնչ՛ւցրեց: Աժօբից աչքերս ուզում էի ամուր փակել, ականջներս երդեհում էին ու այն է, ապուշի պէս «Ոչ, խնդրեմ, հարկ չկայ» ոկսեցի կմկմալ՝ վերջնականապէս ինձ գրկելով ֆառօզեան վերջին հնարաւարութիւնից, բայց խելս մի պահ գլուխս եկաւ ու «Եթէ դժուար չի, շատ եմ խնդրում» անխոսքի: Ես ճամպորուկս էր տանում, ես մտովի ուրախանում էի. որ ուսերէնում «Շնորհակալութիւն» բառը «Աստուած քեզ փրկի»-ից է առաջացել ու հազար-հազար անգամ նրա եամար կրկնում էի: Մեքենայի առջեւ կարողացայ «Մեղա՛յ» ասել բազմաթիւ մագրանգներով ու շնորհակալութեան խօսքերով, բայց ձեռքը չկարողացայ սեղմել — իրուումս չուներ, դեռ լիարժէք Յուդա չէի...

Վարորդն էլ իր հերթին էր ամաչում ինձ այդտեղ բերած լինելու համար: Աժօբից շաղակրատում էր, շարունակ կրկնում, որ շատ-շատ է ցաւել ինձ այդտեղ տանելիս: Ես ինչիս ստեց, որ առաջին անգամ էր այդքան «կարգին ու դուրեկան» մէկին տանում այդ վայրը: Լուսիւնից անելի վախեցած՝ որոշեց անձնակազմից անցնել սոցիալականի.

— Ձեզ պէս *կարգին* մարդկանցից տուրք եմ հաւաքում, որ դրանց պահեն: Ձեր հաշուին եմ ապրում փաստօրէն:

Այդ ե՛ս եմ «կարգին»ը. անշահախնդիր օգնութիւն տու ոգին արհամարհողը, դժբախտներից վախեցող փոքրօգին: Այո՛, երեւի ես եմ, որովհետեւ «կարգին»ը ինչ-որ գգուելի բան ունի իր մէջ, քուք պաշտօնեայի բանկարժէք գրասենեակի պէս:

Ուժ չունէի նոր մեղքի՝ ստի գնով թողութիւն տալու վարորդին: Թող ճիշտն ասէր, որ տեսնա մի բան չէր, որ, իր կարծիքով՝ ինձ պէտքերը բուժման կարիք եմ գգում եւ, ի վերջոյ, սխալուել է եւ վե՛րջ: Եր ստերի համար է, որ չէի կարողանում ներել, «ոչինչ, ի՞նչ կայ որ»ը գալիս-հասնում էր շքուններինս ու նորից կալ գնում:

— Աչքերս բացուեցին, — ասացի դառնութեամբ ու վարորդը դրական իմաստ տուեց դրան:

Երբ հասանք ամարանոցս, նա ուզեց անպայման մէկ դուրս վերադարձնել, քանի որ ճանապարհը ինքն էր երկարացրել: Այդ ահաւոր իրադարձութիւնների գիծը ինչ-որ մարդու համար մէկ դուրս էր: Ուրեմն, եթէ վերցրած լինէի, կարող էր մէկ դուրս լինել...

ԱՐԵՒԻԿ ԳԱՐԻԷԼԵԱՆ



# Իմացական Շարժում

## ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յոգու ամենը ու խմբադասականները շատ դժուար է են ի նպատակ հայ գիրքին, սակայն չեն եղած նաև. առ այդ սարքում հանդիսանալիքները, ջուշահանդեսներ այ կազմակերպում են անոր օգտին, լայն էմի փորձեր արտադրող առույթին և քրեյն — ես փաստերու, ուժը կը ստեղծ, որ գրքերը համեմատական կարևոր — խնայն պիտի հաստատանք, որ Ափիսոսի մէջ ոչ մէկ անգ եւ կրթիչը աշխարհ մեծարուած չլ անհկա, հայ գիրքը, որքան մեծարու կցու Գարեգին Բ. Վեհափառին նախաձեռնութեամբ Անթիպատի մէջ շատապատում շնայ գիրքի օրտան ընթացքին:

Երևի բառերեան արժէքը ի՞նչ է ու պէտք ու նմանութեամբ գուրգուրանքի, որպէսզի կարենայ համայն հոգիներու ու մասնակցի անհոյ լինելու մեան խորհուրդին...

Անթիպատի մէջ սկսած ու տանաձեռնել մքի վեր անդնջ միջաբար կրկնուող այս մեծարքի ինքնին կը բաւէ, համոզուելու չաճար, որ չհաւազային եւ ո եւ գարձնայ անդնջ միջաբար անգի պիտի ու եկնայ հայ գիրքին ու ժողովուրդին համակցումը, որուն, ի՞նչ խոսք, հակասադասականներն պէտք ու նին է՛ն մէկը, է՛ն միւրը...



## Հ Ա Յ Գ Ի Ր Ք Ը՝ «ՍՊԵՂԱՆԻՔ ԶՕՐԱԻՈՐՔ»

Տասներորդ այս հաւաքական ժամադրութեան, առաջին հերթին, իմ միտքը կ'երթայ այն օրուան, երբ Կաթողիկոսական ընտրութենէս եւ օծումէս մէկ ամիս ետք սկիզբ առաւ այս աւանդութիւնը եւ յաջորդող տարիներուն ծագկեցաւ ան, ճիւղեր ար-

ձակելով սփիւռքահայութեան այլ օճախներու մէջ եւ այստեղ, Լիբանանի մէջ, դառնալով ժողովուրդէն սպասուած եւ փնտռուած օր մը:

Մշակոյթի գաղափարով միջնորդուած Հոկտեմբեր այս ամսուան մէջ, դպրոցական-կրթական տարեշրջանի բացման այս օրերուն, թարգմանչաց Վարդապետաց յիշատակի, ոգիի եւ կտակի վերակենդանացման եւ վերանորոգիչ ազդուութեամբ պայծառացման այս ժամանակին, Հայ Գիւլքը ահա կու գայ հետեւողական յաճախութեամբ, տասներորդ անգամ ըլլալով, իր արժանի եւ արդար տեղը գրաւել մեր բոլորին գիտակցութեան, մտածողութեան եւ կեանքին մէջ:

Նախորդ ինը տարիներու ընթացքին բերուեցանք Հայ Գիրքի մասին խորհրդածելու եւ Հայ Գիրքին գաղափարովը մեր սպորումները դունաւորելու, Հայ Գիրքին մէջ տեսնելով «Փառք», «Պատիր», «Պարտք», «Ճանապարհը», «Ընկերը», «Զրահանդերձը», «Օնանը» հայուն, զայն ըմբռնելով իբրեւ՝ «հանգոյց յաւերժութեան եւ ժամանակի», քննելով նաեւ անոր շուրջ ստեղծուած «Տագնապը հայուն»: Ժամանակի թաւալքով գոյացած իննօղակեայ շրթային մէջ ջանացի պարզել խոհեր, վերակազմել փորձառութիւններ, վկայաբերել ըմբռնողութիւններ, մանաւանդ մեր պատմական անցեալէն, ձեռագիր մտտեաններու խորհրէն, թէ տպագիր գործերու հետզհետէ գորշացող էջերէն, առհասարակ Գիրի եւ Գիրքի, եւ յատկապէս Հայ Գիրի եւ Գիրքի մասին՝ ըմբռնումներ եւ հասկացողութիւններ, որոնք ներդիր եւ հայաբիր մաս կը կազմեն Հայ ժողովուրդի կեանքի ընդհանուր փիլիսոփայութեան: Այո՛, ինձի համար այ կայ Գիրքի փիլիսոփայութիւն մը (La Philosophie du livre), ինչպէս կան «Կրօնի փիլիսոփայութիւնը» (La Philosophie de la religion), «Պատմութեան փիլիսոփայութիւնը» (La Philosophie de l'histoire), «Արուեստի փիլիսոփայութիւնը» (La Philosophie de l'art) եւ ուրիշ նման «Փիլիսոփայութիւն»ներ:

Հայ Գիրքի փիլիսոփայութեան փնտռութիւն, վերբերումի եւ մեկնաբանումի ճիգիս մէջ այս տասներորդ փորձն է, զոր կ'ուզեմ այս տարի սեւեռել խորագրի մը տակ, որուն բառերը եւ անոնց մէջ խորհրդաստեղծեալ ճշմարտութիւնը կու գան հայութեան մատեաններուն մատեանը դաւանուած եւ վերջերս մանաւանդ՝ թէ՛ ազգային, թէ՛ միջազգային շրջանակներու մէջ բացառիկ վերարժեւորմամբ լոյսին բերուած Նարեկացիի «Մատեան ողբերգութեան»էն:

— Հայ Գիրքը՝ «Սպեղանի՛ք գօրաւորք»:

Անոնք՝ որոնք բացեր են Նարեկացիի «Մատեան ողբեր-

զուրբեանքը, գիրքի նակասին հաւանաբար չեն նշմարած այն նկարագրագեղ պատկերացումը, որ տրուած է Մատեանի բովանդակութեան եւ զօրութեան մասին: Շատ վերձանողներ չեն թարգմանած իսկ այդ հատուածը, զայն նկատելով ոչ նարեկացւոյն գրչին արտադրութիւն, այլ՝ անոր գրքի ոգիին, արժանիքի եւ ազգեցութեան մասին հինէն եկող մեկնաբանութիւն:

Այնտեղ, ի միջի այլ բնորոշիչ արտայայտութիւններու, կ'ըսուի «Մատեան ողբերգութեան» համար:

Սպեղանիք գօրաւորք՝ վիրաց անրժկականաց,  
Դեղք ազդողականք՝ ցաւոց անտեսականաց:

Նոյնիսկ եթէ այս բառերը իրենց այս ձեւի բանաւոր կարգաւորումին մէջ նարեկացիի գրչէն չեն արտահոսած, անոնք բոլորն ալ, սակայն, աւելի ուժգնութեամբ եւ հոգեցունց զօրեղութեամբ իր գրչին հարագատ եւ վայել բառերն են: Լսեցէ՛ք վինջը իր Գ. Բանի սա աղերսահայց ձայներով.

Թող ողբերգութեան մատեանն այս, Բարձրեա՛լ,  
Զոր սկսած եմ յանուն քո գրել,  
Կեանքի դեղ դառնայ՝ արարածներուդ  
Մարմնոյ եւ հոգւոյ վիշտն ու ցաւերը բուժելու համար:

Եւ դեռ մասնաւորելով իր ըմբռնումը իր գիրքի իմաստին մասին, այսպէս կը փխրիսոփայէ գերփխրիսոփայ, աստուածամերձ մտահայեցողութեան տաղանդաւոր վարպետը. (բնագիրը կը մէջբերեմ Վազգէն Գէորգեանի արեւելահայերէն սքանչելի թարգմանութեամբ):

Արա՛ այս մատեանն ընթերցողներին սրտերով յստակ  
Հոգով բժշկուած, յանցանքից մաքուր,  
Անպարտ, ազատուած մեղքի կապանքից:

.....  
Եթէ վշտերից լքուած, յոգնաբեկ, մէկը նուազի,  
Թող ամրապնդուած յանգի վերստին  
Հառաչանքների այս հաստարանով՝ յուսալով ի քեզ:  
Եթէ ամբարտակն ապահովութեան մեղքով  
Խորտակուի,

Թող որ քարերով այս, շնորհածիր  
Աջովդ յարմարուած, կառուցուի դարձեալ:  
Եթէ յանցանքի սուսերով հիւսքի յարը կտրուի,  
Ամենակալիդ բարեհաճութեամբ՝  
Ամուր պատուաստմամբ՝ թող կցուի նորէն:

Եթէ հոգեկան մահաբեր մի ցաւ պաշարի մէկիմ,  
Թող որ սրանով, ազօրեյով քեզ,  
Ատանայ կեանքի յոյս ու փրկութիւն:

Թէ տազնապահար ու տարակուսուած  
խոցոտուի մի սիրտ,  
Սրանով փրկուած՝ թող ապաքինուի՝ մեծիդ  
հաղցրութեամբ:

Թէ անբաւելի մեղանշումներից մէկը կործանուած՝  
Ընկզմուած լինի խորքն անդունդների,  
Թող որ այս կարթով դէպի լոյսն ելնի՝  
քո աջակցութեամբ:

Եթէ թմրութեամբ խաբեպատիր ու խաւար գործերի  
Մէկը թալկացած լինի կարեւր,  
Թող որ գօրանայ նորից քեզ համար,  
Միա՛կ գօրավիզ, ապաւինած քեզ:

Եթէ պահպանակն ապահովութեան լքի մի մարդու,  
Թող ձեռքդ նրան ընդունի նորէն  
Ու ամբապնդի այս միջնորդութեամբ:

Եթէ անտեսուած դեզերի մի մարդ, լքուած ու մոլոր,  
Թող որ սրանով յոյս առնի դարձեալ քո հոգածութեան:

Եթէ սարսուռը դիւային ջերմի  
Խռովի մէկին տենդով մոլեկան,  
Թող որ սքափուի այս նոյն նշանով՝  
Երկրպագութեամբ խոստովանելով խաչիդ խորհրդին:

Եթէ մըրիկը անօրէնութեան խորտակիչ հոգմի  
Աշխարհիս ծովում մարդու մարմնեղէն  
Շինուածքն հարուածի ալեբախութեամբ,  
Թող որ խաղաղուի կրկին այս գեկով՝ ուղղուած  
դէպի քեզ:

*Մարդկային մեր կեանքին մէջ գիրքը, վաւերական գիրքը,  
Եւ մարտութեան ազրբուրէն արտահոսած գիրքը «գօրաւոր սպեղա-  
նի» է, կակդիչ, մեղմիչ, դարմանիչ, բուժիչ գօրութեամբ «ազդո-  
ղական դեզ» է այնպիսի վէրքերու համար, որոնք «անբժշկելի» են  
նրաթեղէն ու մարդահնար միջոցներով եւ այնպիսի ցաւերու հա-  
մար, որոնք անտեսանելի են մարդուն աչքին: Նարեկեան ըմբո-  
նումով «Գիր կենդանի»ն, այսինքն՝ մարդու հոգիի աստուածա-  
շունչ բխումներուն, մարդկային հարազատ ապրումներուն ար-  
տաբխումն եղող վկայախօս գիրքը իր իսկ բառերով՝  
«Հաստարան» է, ամբակուռ յենարան, անխախտելի կա-  
ռոյց՝ յոյսէն կտրուած եւ վիշտէն ընկճուած մարդուն համար,*



«Պատուաստ» է ան, մարդուն մէջ հոգեկան կտրուածքները վերստին իրար միաշաղախելու համար,

«Կարք» է ան, մեղանչումի խաւարին մէջէն մարդը ազատող ու լոյսին վերբերող,

«Միջնորդութիւն» է, ապահովութեան զգացումէն հարուածուած մարդը Աստուծոյ ձեռքին վերակապելու համար,

«Ղեկ» է ան, աշխարհի ծովուն մէջ աշխատանքեան հարուածներէն տատանող մարդուն ողջ կազմուածքը գէպի ուղիղ նաւահանգիստ առաջնորդելու համար:

Հայր ո՛չ միայն նարեկացիին գիրքը, այլև՝ բոլոր գիրքերը, որոնք Աստուծոյ ճշմարտութեան, մարդկային կեանքի առողջութեան եւ երջանկութեան գաղտնիքն իրենց մէջ ունեցող հոգեւոր բարոյական, իմացական ու գեղեցկային սկզբունքներէն ու արժէքներէն կ'առնեն իրենց բովանդակութիւնը, մեծ հոգիներու եւ մեծ միտքերու աղբերացումն ըլլալով, կը նկատէ «սպեղանիք զօրաւորք» եւ «գեղք ազդողականք»:

Քանի՛-քանի՛ «բիւր բիւրոց» մարդիկ, քանի՛-քանի՛ «բիւր բիւրոց» տարիներու թաւալքին հետ Հայ Գիրքը ունեցան իրեն «սպեղանիք զօրաւոր», «գեղ ազդողական», «հաստարան», «պատուաստ», «կարթ», «միջնորդ» ու «ղեկ»:

Այդպէս շեղա՞ն Երգ դարուն, երբ գահ ու մական կորսնցուցեր էինք, երբ երկիրն Հայոց օտար իշխանութիւններու միջեւ երկու պատառի սակարկութեամբ ճեղքուած հող էր, երբ Հայոց եկեղեցին օտարահունչ լեզուներու եւ խեղդիչ ազդեցութիւններու գերութեան մէջ կը տազ նապէր:

Այդպէս շեղա՞ն ան, ամէն անգամ, երբ փորձուեցաւ հայութեան մէջ հայութիւնը մեռցնել՝ ձեռագիրները այրելով, լեզուն խափանելով, դպրոցները փակելով, գիրի եւ գիրին մէջ խօսող հոգիին սպասաւորները՝ դրազէտներն ու մտաւորականները, գիրի պահակներն ու գիրքի մշակները ջարդելով:

Բայց ինչո՞ւ վերակոչենք անցեալը, երբ այսօր, ներկայ մեր ժամանակներուն, մեր աչքերովն իսկ կը տեսնենք — ու տեսնելով կը տառապինք — թէ կը գունաթափի հայութիւնը այն տան մէջ, ուր Հայ Գիրքը եւ Հայ Գիրքը չեն այնպէս ներկայ, ինչպէս են լոյսն ու հացը, աղն ու ջուրը...

Գիտեմ, սիրելի՛ բարեկամներ, շատ ցաւեր ունինք ամէն տեղ, բայց մա՛նաւանդ անպարագիծ այս Սփիւռքին չորս ծագերուն վրայ, ուր ցաւերը շատ աւելի սուր հանգամանք եւ խոցիչ ուժ ունին: Ճաւեր ունինք, գրեթէ անտանելի, մա՛նաւանդ այստեղ,

լիրանանեան հայրենիքին մէջ: Ամէն օր կը խոցոտուիւք եւ կը տրորուինք մանաւանդ այժմ, այս օրերուն, երբ երկրին ամբողջ տնտեսական գրուածքը ահաւորագոյն ցնցումներով կը խախտի ու իր խախտելովը կը խախտէ այնքան բան մեր կեանքին մէջ առօրեայ ապրուստի կալուածէն մինչեւ դպրոցական մեր կարիքները եւ հայ ժողովուրդի հաւաքականութեան սպասաւորութեան կոչուած հաստատութիւններն ու կազմակերպութիւնները: Շատեր հաւանաբար տարուին մտածելու, թէ ինչպէ՞ս գիրքը իրրեւ «սպեղանի» եւ «դեղ» կրնանք ըմբռնել, երբ Ֆիզիքական մեր ցաւերուն համար կը դժուարանաք նիւթեղէն դեղ եւ սպեղանի գտնելու...

Մեր ժողովուրդի պատասխանատու բոլոր եկեղեցական, ազգային, քաղաքական իշխանութիւնները եւ կրթական, բարեսիրական, ընկերային հաստատութիւններն ու միութիւնները իրենց կարելիութեան գերագոյն աստիճանով, ամէն ինչ կ'ընեն եւ պիտի շարունակեն ընել, գարման բերելու մեր բոլոր տեսակի կարիքներուն: Դարձանումի, զօրացումի, վերականգնումի եւ պայքարի մեր հասարակաց եւ բազմաճիւղ սպասաւորութեանց շարքին, էս ձեր առջեւ կը բանամ այս սեղանատունն ու դեզատունը Անթիլիասի Մայրավանքին մէջ այսօր սփռուած, եւ միշտ բաց մնալու կոչուած մեր գրատուններուն մէջ: Հոգեւոր հացի սեղան է այս, անբժշկելի եւ անտեսանելի ցաւերու դեղատուն:

Որոպէս կը հաւատամ այն ճշմարտութեան, որ կրօնական եւ բարոյական, հոգեկան եւ իմացական, ազգային եւ մարդկային մեր կեցուածքը, մտածելու եւ ապրելու, յարաբերելու եւ աշխատելու մեր ըմբռնումը եւ ճաշակն ու ոճը խոր ազդեցութիւն կը դրօժեն տազնապին մեզմացումին եւ անկէ չընկճուելու մեր ձգտումին վրայ: Արտաքին ազդակներու՝ տնտեսական, ընկերային, քաղաքական պայմաններու ճնշոց եւ լլկող ազդեցութիւնը չեմ ուզեր — եւ չեմ կրնար — անտեսել կամ թերազնահատել: Այնքան՝ բացայայտ իրողութիւն է. ես այլ, իբրեւ Կաթողիկոս, իբրեւ Պետր այս Տանն Կիլիկիոյ, ձեզի հետ միասին եւ ձեր տուներուն պէս կը բաժնեմ անոնց պատճառած ցաւն ու անդոհանքը: Իսկ կը զգամ, պատմութեան դասերէն ժառանգուած իմաստութեամբը կը հաստատեմ, որ արտաքին պայմաններուն դիմաց նոյնքան եւ աւելի կարեւոր են մեր ներքին շաղուածքն ու լարւածքը՝ անոնց գիմագրաւումին, անոնց հետ վերաբերումին եւ զանոնք չէզոքացնելու մեր մարդկային ու ազգային հրամայականին համար: Ինտել դուրսի ցուրտն ու փոթորիկը, աւաղել գայն, տրտնջալ անոր մասին, անիծել խաւարը եւ չջանալ ներքնապէս պաշտպանուիլ ներուժ տոկունութեամբ, լոյսով շնուածել ժութը անոր յաղթելու համար, ո՛չ մարդկային է եւ ոչ այլ հայապայել:

*Կարծէք այսօր եւ այսօրուան պայմաններուն յարաբերաբար զրուած ըլլան խորհմանստ սա բառերը, որոնք զրի առնուած էին ասկէ ճիշդ յիսուն տարիներ առաջ, թորզոմ պատրիարք Գուշակեանի գրչով:*

«Համայնքի մը Իամար «գէշ ժամանակներ» են ոչ թէ տնտեսական պրկումներէ կամ քաղաքական ցնցումներէ յառաջ եկած արեւաւորի օրերը, այլ ամենք՝ որոնց մէջ բանականութիւնը կ'անպատուէ ինքզինքն եւ հաւատքը կը նկատուի ամէնէն անպէտ ու անարժէք գորութիւնը» (*«Առաքելոց շաւիղով», էջ 38*):

*Այո՛, մեր բանականութիւնը՝ խոհական, հանդարտամիտ, կշռադատող, գանազանեւ եւ ընտրել կրցող մտածման որակն ու ընթացքը մէկ կողմէ, եւ հաւատքը՝ մեր անխախտելի եւ մշտական ուղեղ, ամբացնող ներքին ուժականութիւնը, միւս կողմէ, անհրաժեշտ գորութիւններ են, որոնցմէ կրնանք շատ բան նուաճել մեր նեղութիւններէն եւ տառապանքներէն, որոնցմէ շատեր պատճառուած են ոչ այնքան «տնտեսական պրկումներէ» եւ «քաղաքական ցնցումներէ», որքան մեր իսկ ճաշակներով խաթարուած ըմբռնումներէ եւ կենցաղակերպերէ, որոնց մասին այնքան առիթներով եւ այնքան զգուշացուցիչ, նոյնիսկ երբեմն բուռն արտայայտութիւններով խօսած եմ քարոզներուս, ճառերուս եւ պատգամներուս մէջ, ըլլա՛յ բանաւոր, ըլլա՛յ գրաւոր եղանակներով:*

*Եւ ինչպէ՞ս պիտի սնուցուին այդ «բանականութիւն»ն ու «հաւատք»ը, այսինքն՝ մարդուն ներքին կազմուածքը, անոր մէջ շաղախուած ըմբռնելով կրօնական ապրումներու ներշնչող քաղցրութիւնը, բարոյական նկարագրի տոկունութիւնը, արւեստներու ընծայած վեհացնող ըմբոյխնումն ու վայելքը, աշխատանքի բարերար ներգործութիւնը, պարկեշտութեան առաքիլութիւնը, ժուժկալութեան իմաստութիւնը, չափաւորութեան խելացութիւնը, շտապութեան եւ աւելորդապաշտութեան դէմ ընդվզումը, վճատութեան բեկանումը, յոյսին ստեղծարար առկայութիւնը, մէկ խօսքով՝ մարդը մարդացնող եւ հայը հայացնող արժէքներու ընտրութիւնը, որմէ կախում ունի էպպէս եւ առաջնահերթօրէն մեր երջանկութիւնը կամ նեղութեանց սանձումը:*

*Եւ ինչ որ կ'ըսէ նարեկացին ի՛ր Մատեանին համար, եւ ինչ որ կ'ըսէ պատմութիւնը մեր մատենաներուն համար, չե՞ն արդեօք «սպեղանիք զօրաւորք» եւ «դեղք ազդողականք» այլապէս անբժշկելի եւ առհասարակ անտեսանելի մեր ցաւերուն դարմանումին եւ մեր առողջութեան սնուցումին համար:*

Եկէք փորձ մը բնենք առողջարար գեղատուութեան եւ  
 բուժիչ դարմանումի: Այսպէս, հաղորդուի՛  
 Խորենացիի հայրենասիրութեան,  
 Եղիշէի դիւցազնաչնչութեան,  
 Եղնիկի իմաստութեան,  
 Դաւիթ Անյաղթի աշխարհատուութեան,  
 Շարականախօս վարդապետաւ: Հոգեհոսան երգերուն,  
 Շիրակացիի գիտութեան,  
 Շնորհալիի շնորհածիր հոգեխառնութեան,  
 Մխիթար Գօշի առակագրական ողջամտութեան,  
 Տաթևացիի ազգայնական նախանձախնդրութեան,  
 Յրիկի ժողովրդական պարզախորհուրդ հայեցողութեան,  
 Սայաթ-Նոփայի մարդկայնապաշտ ու մարդկայնացնող  
 արուեստին,  
 Արուսեանի գարթուցիչ ժողովրդասիրութեան,  
 ԲաՖֆիի ազատաշունչ շեփորահարութեան,  
 Խրիմեանի հայրենապաշտ գաւառասիրութեան,  
 Պետրոս Դուրբեանի հոգեխօս ներանձնութեան,  
 Պարոնեանի յանկուցիչ երգիծագրութեան ազգադարման  
 սրամտութեան,  
 Գրիգոր Զօհրապի իրապաշտական մարդկայնութեան,  
 Թումանեանի վերանորոգիչ պարզութեան,  
 Վարուժանի պայծառակերտիչ «Յեղ»ին ձայներուն,  
 Միամանթոյի հրաբխային ընդվզումներուն,  
 Մեծարենցի միւռոնաբոյր ամբօութեան,  
 Զապէլ Եսայեանի մարդախօյզ հոգեբանութեան,  
 Վահան Թէքէեանի կերտողական հաւասարակչութեան,  
 Յակոբ Օշականի յորդահոս, համայնատես եւ խորախոր-  
 հուրդ հայապաշտութեան,  
 Կոստան Զարեանի «Նաւը լեռ» բարձրացնող արուեստա-  
 պաշտութեան,  
 Եւ դեռ 20րդ դարու վերջին իսնամեակի հայրենի աշխար-  
 հի եւ Սփիւռքի մեր նորերգակ վաւերաչունչ գրողներու հոգե-  
 մտաւոր բազմաբեղուն ստեղծագործութեանց այնքան կազմա-  
 տորիչ ու հոգեչէն եւ հայակերտ արժէքներուն,  
 Այս բոլորին եւ դեռ ասոնց հազարումէկ նմաններուն  
 ստեղծած աշխարհներուն հետ հաղորդուիլը «սպեղանի» շէն մեր  
 կարեւոր գոյութեան դարմանումին, եւ յուսալից գոյատեւման  
 յառաջխաղացքին համար:

Ես կը հաւատամ, որ է՛ն: Կը հաւատամ, ո՛չ տեսական հա-  
 ւատքի գօրութեամբը, ոչ ալ սոսկ պատմական փորձառութեան  
 թիւադրութեամբը, այլ, թող տուէք ինձի ըսելու, անձնական  
 ապրումի գոյութեանական անխաբիլի զգացողութեամբ: Դառնու-

թեան, մտալլկումի եւ հոգեյան շարչրկումի քանի՛-քանի՛ պահեր իմ կեանքին մէջ իրենց գոյութիւնը թօթափած են եւ յոյսին ու խրատոյսին, ինքնագորութեան եւ կորովին գոյնն են զգեցած հոգիս մէջ՝ գիրքերու հետ բնթերցողական հաղորդութեամբ...

Ի՞նչ գեղեցիկ, ի՞նչ զօրեղապէս թելագրական են սա երկու բառերը, գորս, կը կարծեմ, միայն մենք՝ Հայերս, կը գործածենք, երբ գիրքի մը տպագրու ժիւնը կ'ողջունենք, ըսելով.

«ԼՈՅՍ ՏԵՍԱԻ»

Չենք ըսեր պարզապէս «տպագրուեցաւ» կամ «հրատարակուեցաւ» (published, publié կամ appeared, paru): Ինչպէս լուսապաշտ այս ժողովուրդը չ'ըսեր «բարի առաւօտ» (good morning) «կամ «բարի օր» (bonjour) այլ կ'ըսէ «բարի լոյս», այնպէս ալ ան գիրքը կ'ողջունէ նոյն լաւատես աչքերով: Բայց հարկ է, որ «լոյս տեսաւ»ը դատնայ, աստուածաշնչական բառերով՝ «եղիցի լոյս» եւ մեր կեանքին մէջ վերածուի «եւ եղև լոյս»ի...: Որովհետեւ, ի՞նչ կ'արժէ լոյսին բացուիլ եւ լոյս չբանալ մարդոց կեանքին մէջ: Եթէ հաւատարիմ ենք մեր լեզուի փիլիսոփայութեան, եթէ անկեղծ ենք Հայերէն լեզուի մեր գործածութեան մէջ, չենք կրնար «լոյս տեսաւ» ըսել առանց «լոյս եղաւ» ըսելու: Եւ այս վերջինը կարենա՛լ ըսելու համար՝ մէկ բառ կայ, զոր սոսկ խօսքով կամ լուկ գիրով չենք կրնար ըսել, այլ՝ աչքերով միայն — ընթեմն՝, կարդա՛լ:

\* \*

Գրիգոր Նարեկացիով սկսայ: Կ'ուզեմ փակել Արեւմտեան աշխարհին մէջ Նարեկացիի «Մատեան ողբերգութեան» գիրքին պէս հոշակուած ուրիշ գիրքէ մը քաղուած Հոյատեսիլ պատկերով մը: Ս. Օգոստինոս արեւմտեան լատինական գրականութեան տիտաններէն մէկն է ճանչուած տիեզերապէս: Իր հսկայածիր գրական արտագրութեանց մէջ, իր «Խոստովանութիւնք» (Les Confessions) նկատուած է իր գլուխ-գործոցը: Իր կեանքի նկարագրութեան հետ այդ կեանքին իմաստին խորունկ իմաստասիրական եւ աստուածաբանական վերլուծումը սքանչելիօրէն առեող Հոյակապ գործին մէջ առարկայական եւ յուզիչ մանրամասնութիւններով կը պատմէ «Ի խաւարէ ի լոյս» իր դարձի դարձակէտային պահը: Հեթանոս փիլիսոփայ

մըն էր, երիտասարդ տարիքին անտուկ կենցաղ վարած անձ մը, Հետադային Հոետոր, երբեմն մանիքէական վարդապետութեան Հետեւած անձ մը, նոր-պղատոնական մտածողութեամբ համագրաւուած մտաւորական գէմք մը, որ սակայն իր միտքի եւ Հոգիի ու կեանքի խաղաղութեան որոնումին մէջ չէր հասած իր ոպասած գոհացումին: Կը տագնապէր, կը փոփոքէր իր զրիստոնեայ մօր առինքնող ազգեցութիւնը մէկ կողմէ, եւ իր Հեթանոսական արմատացեալ մտայնութիւնն ու յունա-՝ ոտմէական մտածելակերպի ու սպրեւիտներու ազգակները միւս կողմէ, ներքին բախումի ցանցի մը վերածած էին զինքը՝ ի՞ր մէջ: Օրերով ու ամիսներով կը սուսայտեր Միլանոյի իր տան մէջ:

Այս կացութեան մէջ էր տիւ եւ յիշեր: Հիմա լսենք զինք ուղղակիօրէն.— «Մեր բնակարանը փոքրիկ պարտէզ մը ունէր: Այնտեղ կ'առանձնանայի եւ ընկերս՝ Ալիփիուսը քայլ առ քայլ ինձի կը հետեւէր: Տունէն բաւական հեռու անկիւն մը նստեր էինք: Կը դողայի, հոգիս կը տագնապէր...: Վարանումներու մէջ կը տարուբերէի: Ամէն տեսակ տարօրինակ շարժումներ կ'ընէի, մագերս կը բաշէի, ճակատս կը հարուածէի, կծկուած մատներովս ծունկերս կը բռնէի... հիւանդ էի, կը չարչարուէի, շղթաներու մէջ ինքզինքս բռնուած կը զգայի»:

Ահա այս ներքին տուայտանքին եւ տագնապին մէջ Ալիփիուսի մօտ նստած տեղէն կ'ելլէ, կը Հեռանայ, կ'երթայ թղեւի մը տակ կ'երկենայ եւ կը սկսի դառնօրէն եւ առատօրէն արտասուել:

«Մինչեւ ե՞րբ պիտի տագնապիմ, Տե՛ր», կը բացագանչէ: «Կ'արտասուէի անդադար, ծայրագոյն դառնութեամբ մը, բեկանուած սրտով: Եւ ահա, յանկարծ, ձայն մը լսեցի, որ դրացի տունէն կարծես կու գար:

«Երգի եզանակի մը հանգոյն ձայնը կ'ըսէր ու կը կրկնէր, տղու մը կամ աղջկան մը շեշտով, գոր չէի կրնար յստակօրէն գատորոշել:

Tolle, lege

«Առ, կարդա՛»

«Արտասուիս հոգի աչքերուս մէջ կասեցնելով՝ վեր եկայ: Ուշքս ամբողջ սեւեռեցի այդ ձայնին ու բռնեցի վրայ: Կը ջանայի յիշել, որ արդեօք մանկական երգի մը յանկե՞րգն էր: Բայց նման բան երբեք չէի յիշեր: Միակ մեկնութիւնս այն եղաւ, որ աստուածային պատգամ մըն է ան, որ գիս դէպի Գիրքը, Աստուածաշունչ մատեանը կ'ուղղէ կարգալու համար այն առաջին էջը, որ ձեռքերուս թերթատումին տակ պատահաբար բացուէր:

...«Ու վերադարձայ այնտեղ, ուր բարեկամս՝ Ալիփիուս, նստած կը մնար: Որովհետեւ երբ այնտեղէն հեռացեր էի ու թզեմիս տակ երկնցեր, հոն թռգեր էի առաքեալին (Պօղոս) Գիրքը:

«Բացի եւ հանդիպածս անաշխուն էջին վրայ կարդացի-  
«Այսուհետեւ մէկզի շարանք խաւարի յատուկ գործերը եւ սպա-  
նազինուինք լոյսի զէնքերով: Կոհեմութեամբ ապրինք մեր կեան-  
քը, ցերեկի լոյսին վայել ձեւով, ո՛չ անստակութեամբ եւ արբեցո-  
ղութեամբ, ո՛չ խառնակեցութեամբ եւ պղծութեամբ, ո՛չ նախան-  
ձով կամ հակասակութեամբ: Հագուեցէք Տէրը՝ Յիսուս Քրիստոս  
եւ հետամուտ մի՛ ըլլաք զուտ մարմնի ցանկութիւնները հոգա-  
լու...» (ՀՌՈՄ. ԺԳ. 13-14): Այլեւս անլի անաշ չգացի ընթերց-  
մանս մէջ. կարիքն ալ չկար. որովհետեւ այս համարի ընթեր-  
ցումս հազիւ աւարտած էր՝ խաղաղաբոյր լոյս մը իջաւ հոգի-  
իս մէջ: Եւ ամորոշութիւնն ու կասկածիս ստուերները անհետ  
փարատեցան...» («ՆՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆՔ», Ը. 8-12):

\*\*\*

Tolle, lege

«Առ, կարդա՛»

1600 տարիներ առաջ, 387ին էր, որ այս բառերը այժմու  
Միլանօ քաղաքին մէկ աննշան տան նոյնքան աննշան պարտէզի  
մը մէջ լսուեցան Օգոստինոսի կողմէ, իջան, սուղուեցան, տար-  
բացան անոր հոգիին մէջ, խաղաղաւէտ լոյսի նման, եւ փարատե-  
ցին տուայտանքն ու տառապանքը, ցրուեցին կասկածն ու տա-  
րուրեր հոգեվիճակը, եւ եղան դարձի խթան եւ հոգեկան խաղա-  
ղութեան եւ գոհութեան լիազոյն ապրում:

Այսօր, 1600 տարիներ ետք, 1987ին, նոյն բառերը նոյն եր-  
կինքէն եւ այս անգամ նարեկեան շունչով, եւ նարեկացիով ան-  
ժահ հայ ժողովուրդի պատմութեան հորիզոններէն կը հնչեն այս-  
տեղ, Անթիլիասի մէջ:

«Առ, կարդա՛»

Երբ կարդաս՝ միայն ա՛յն ատեն պիտի զգաս քու ցաւերուդ  
վրայ «սպեղանի»ին կակղութիւնը, «դեղ»ին ազդողականու-  
թիւնը:

Հայ Գիրքի ճրագալոյց է այսօր:

Ճրագներն ահա վառուած են բազմատեղեան այս աշտա-  
նակ-սեղաններուն վրայ:

Վառեցէ՛ք ձեր պատրոյզները. տարէ՛ք զիրքերը իրրեւ «աշտանակը վառեալք»։ Թող անոնք ձեր տուներուն մէջ յոյս ճաճանչեն եւ փարատեն խաւարը, որ այնքան հելտութեամբ եւ թանձրութեամբ այս օրերուն կը սեւապատէ հոգիները մեր։ «Լոյս տեսան» այս զիրքերը այս տարի եւ անցնող տասնամեակին։ Թող անոնցմով յո՛յս տեսնեն ձեր տուները, որպէսզի անոնց ճառագայթներուն զօրութեամբը հալածուի մէզը մթութեան եւ ձեր սիրտերն ու միտքերը անոնցմով տեսնեն կեանքի եւ հայութեան այն բոլոր գաղտնի ուժերը, որոնք մեր «անբժշկելի վերքերուն» վրայ «սպեղանի» են, մեր «անտեսանելի ցաւերուն» համար «ազդողական դեղ» են, եւ՝ թէ՛ մարդկային, թէ՛ ազգային, թէ՛ անձնական մեր առողջութեան ու յաղթանակին գրաւականն են։

«Աւ, կարգա՛»...

Գարեմիտ. Գարեմիտ  
Միշխ Տաւա Տիւրքիայ



Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

# ԴԷՄ ԱՌ ԴԷՄ ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ



«Ինքնանկար» (ի դեկտեմբեր, 1948)

Լեզուի կարեւոր ջէ: ԱՐՏԱՅԱՅՏՉԱՊԱՇՏ ԵՂԱԾ ԵՍ, ՏՊԱԻՈՐԱՊԱՇՏ, Թէ ՎԵՐԱՑԱՊԱՇՏ՝ ԱՅԳԻՔԱՆ ԱԼ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՐ: ԿԱՐԵՒՈՐԸ ԽՕՍԳԻ Է, ԻՆՉ Կ'ԸՍԵՄՆ Է, ԻՍԿ ԼԵԶՈՒՆ ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ ԿԸ ԲԵԻ ԽՕՍԳԷՆ, ԻՆՉԷՆ, ԵԹԷ ԻՍԿԱՊԷՍ ԸՍԵԼԻՔ ՈՒՆԻՍ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՈՐ ՏԱԳՆԱՊ ՄԸ ՈՒՆԻՍ:

ՓՕԼ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ



• *Լիբանանահայ կերպարարուեստի պատմութեան մէջ, Փօլ Կիրակոսեան կը հանդիսանայ եզակի զէմք մը՝ թէ՛ իր գեղանկարչութեան հռոմիոյրով եւ թէ՛ իր խառնուածքով: Յատուկ նշանակութիւն ունի մա՛նուանց սեփական կենսափորձին կշիռը անոր պատառոններուն մէջ, որոնք գոյնի եւ գիծի նախադասութիւններով կարծես կը շարադրեն կենսագրավէպը տազնայտեար, պարզ, այլ բազ-  
digitised by A.R.A.R.®*

մերանգ ներաշխարհի տեր մաքրարիւմ մարդու մը: Կեանքի եւ արուեստի միաձուլումը իր կիզակէտին հասցուցած այս արուեստագէտը, որ իր յայզերը պաստառին կը յանձնէ շիզերու ամբողջական լարումով, նոյնպիսի անմիջականութեամբ նաեւ կը բացուի բառերու աշխարհին՝ դառնալով տաֆ գրուցակից մը:

Ստորեւ տրուած գրայցը համադրութիւնն է վերջին տասը տարիներու ընթացքին, մէկէ աւելի առիթներով արուեստագէտին հետ մեր ունեցած հանդիպումներուն:



● 1950ական թուականներու առաջին տարիներու ձեր գործերէն ի յայտ կու գայ իր անմիջական շրջապատին հետ սերտ աղերս ունեցող երիտասարդ իրապաշտ գեղանկարիչ մը: Տպաւորապաշտ ըմբռնողութեամբ երկնուած ձեր այդ գործերը եկան գոյնի եւ գիծի աշխարհ փոխադրելու գեղանկարիչներու եւ արուեստի շրջանակներուն համար անձանօթ աշխարհ մը, Պուրն Համուտը՝ իր համեստ աշխատանքներով, տանտիկիներով, երազանքար պարմանուկներով, ցեխոտ փոզոցին մէջ բուսիկ թաղցող մանուկներով, սարսափաճար պատաններով եւ սրամիտ ծերունիներով, որոնք, ինչպէս առիթով մը հպարտօրէն դիտել կու տայինք, չճաւարութեան եւ անգոյրութեան դէմ կը պայքարէինք սրամտութեան գէնքով: Կարն խօսքով՝ դուք լիբանանեան գեղանկարչութեան բերիք նոր երանգ մը՝ պուրն համուտեան տաֆ կշռոյթն ու կենդանի գոյները, եւ քննադատներն ու կերպարուեստի շրջանակները ձեզ իրաւամբ կոչեցին «Պուրն Համուտի բանաստեղծը»:

Սիրոյ եւ հաւատքի այլապայտուփիւնները հանդիսացող ձեր այդ պատառները երկնած շրջանին, պուրն համուտեան սրամը ներշնչող միջավայր էր ձեզի համար, որովհետեւ անոնք ձեր դրացիներն ու բարեկամներն էին: Արդարեւ, դուք մէկ մասնիկն էիք այդ միջավայրին, ձեր դրացիներուն ակնու-

ցով՝ թաղին «խենթ»երէն մէկը, որ արհեստի մը գազտնիքներուն տիրանալու եւ ձեռքին «ոսկի ապարանջան» մը ապահովելու փոխարէն՝ օրը իրիկուն կ'ընէր սպիտակ պաստառին դիմաց, գծելով թաղի ծերունիները կամ քանի մը օր առաջ թաղը տակնուվրայ ըրած գրացի հանգուցեալին մահուան քափօրը:

Բայց այդ հարուստ ու բազմերանգ աշխարհին կողքին՝ դուք ունէիք նաեւ ձեր փոքրիկ աշխարհը, ձեր նորակազմ ընտանիքը, որ, իր կարգին, Պուրն Համուտը ներկայացնող մասնիկ մըն էր եւ ներշնչման աղբիւր: Եւ դուք սկսաք երկնել նաեւ ձեր ընտանեկան փորձառութեան վերցուած պաստառներ՝ իբրեւ բնորդ ունեւալով ձեր մօտիկ պարագաները:

— Այո, ատիկա անխուսափելի աշխատանք մըն էր: Եթէ այդպէս չընէի՝ կեղծ անձ մը պիտի ըլլայի, անջիղ եւ անհոգի գեղանկարիչ մը, շատ-շատ արհեստագէտ արուեստագէտ մը: Մինչդեռ, այդ չըջանին եւ Հմայուած էի վենետիկ վան կոկի տիպարով եւ ոճով: Ինձի համար գեղանկարչութիւնը, գեղեցիկ, դու արթ տեսարաններ չէր միայն, այլ կէանքը՝ իր սեւ եւ սպիտակ գոյներով, ցաւալի պահերով, տխուր գէմքերով, մութ գոյներով, բայց նաեւ՝ լոյսով եւ ծանուկին ճիշով ու անձեղ ծպիտով բացուող աշխարհը, կենդանի իրականութիւնը: Եւ հիմ է ու չի ու չով ուսումնասիրէք այդ շրջանի պատուա-



«Կիճը և մանուկը» (Ի. Դանկար, 1955)



«Փորձագուրկ բռնակիրք» (Ի. Դանկար, 1955)

ներս՝ վան կոկեան շունչ մը և փրձուհարու ածներու որոշ ազդեցութիւն մը պիտի նկատուէ:

Այս միջնորդութիւն մէջ, ես սկսայ գծել իրարու ետեւէ ծնած մանուկներս, նորածինը՝ մօրը գիրկը, ծիծ կերած պահուն, կամ աղջնակս՝ իր ապշահար և անմեղ աչքերով: Առանց յտակ ծրագիրի, առանց որեւէ որոշումի՝ ես իմ հայրական ուրախութիւնս և ինծի համար անգամ այդ տարօրինակ ապրումներն ու յուզումները թարգմանեցի գոյներու և գիծերու լեզուով, և մարդիկ սկսան ըսել՝ Քօջ կիրակոսեանը պէպէտէնք, մանուկներու նկարիչն էս:

Յետոյ, մի մոռնաք, որ թաղը լեզուն էր պատկերներով, կը խայտար անոնց վազվճուշտով, պոռչտուքներով և խաղերով: Եւ երբ պատկեր մը պատշգամէն վար կ'իջնար, օրինակ, էրր թաղին կիները կը սկսէին պոռայ-կանչել, թէ այսինչին պատկեր մեռաւ, պիտի մեռնի, հասէ՛ք... Ես ինծի անմիջապէս կը հարցնէի. «Ո՞վ է յանցաւորը, ի՞նչ է պատկերին յանցանքը, բնութեան յանցանքն է, արդեօք է՞ս եմ յանցաւորը, և այլն», և կը ջղայնանայի ու վրէժս կ'առնէի սպիտակ պատտառին վրայ գծե-

լով յայտոյ կիներ, իրենց մազերը փետտող մեր դրացու հիները, ճերմակ ու փոքրիկ դազազ մը՝ պատտառին կեղբոնը և սեւազգեստ ու սպաւոր կիները՝ անոր շուրջ: Կամ երբ մեր վարի դրացին, կուս ծախող աղքատ գրացին կը մեռնէր, կիները վարը կու լային և այդ տխուր ձայներուն մէջ մօրս լայն կը լսէի՝ կ'ազդուէի, թու զի ու մասխալ առնելով վար կ'իջնէի և անդուսն վրայ կը գծէի այդ յուզիչ պահը: Ապա վեր կ'իջէի և, տարը տաքին, դեռ թաղու մը շեղամ, փրձիկի արագ հարուածներով արգէն թապլոն աւարտած կ'ըլլայի:

Որովհետեւ մենք կ'ապրէինք այնպիսի՝ միջավայրի մը և պայմաններու մէջ, որոնք թաղեցիները վերածած էին մէկ և անբաժանելի ամբողջութեան: Սոսկական դրացիներ չէին այդ մարդիկը, դրացիներէ շատ աւելին, քոյր-եղբոր չափ հարազատ ու վշտակից մաքուր մարդիկ, իսկական հարազատներ, որոնք միշտ այ կը հասնէին իրարու, իրենց անգործ դրացիին պատկերներու մասին այ կը մասնէին՝ իրենց կիսածօթի գաւակներուն չափ, և յոր հացը, գծրախտութիւնն ու ուրախութիւնը կը բաժնէին իրարու հետ՝ ինչպէս

պիտի ընկին նոյն արհիւնը ունեցող ընտանիքի մը անդամները:

Այս իսկ պատճառով, ընտանիքս եւ շրջապատս անբաժանելի միութիւն մը կը կազմէին ինծի համար, զիրար լրացնող, շնչող եւ ներշնչող հասարականութիւն մը, որուն համեստ խօսանակն ու ուրախ եւ տխուր պահերու նկարիչն էի ես: Վերջապէս, ես իմ թաղիս ու թաղեցիներուս նկարիչն էի:

●Թայց մասն մկարիչն էիք այլ շրջանակներու բեկորներուն: Զեր մտերիմներն ու թաղիցիները կը պատմեմ, որ առտու կանուխ, արեւը դեռ չծագած, տրցակ մը թուրք ձեր անուրիմ տակ, դուք ճամբայ կ'ելլէիք դէպի քաղաքին կեդրոնը, գէպի Պուրն՝ գծելու համար կանաչնդէն շուկային բեռնակիրները. մուտանգիստի քարափներուն վրայ մտած անգործներուն հետքը, կեանքի դառնութեան հակերուն տակ կ'եմ այդ մարդոց պայտարը, պատառ մը հացի ի խնդիր վագրը: Եւ անոնք, երբ կը տեսնէին ձեզ՝ զիրեմք գծած ձեր պահունգ, անշուշտ, կը զարմանային, կ'ուզէին իմանալ զիչո՞ւ մեզ կը գծէ՞ հարցունովն պատասխանը՝ ինչպէս ձեր թաղի բնակիչները: Կը փափաքէիք խօսիլ անվճար բնորդներու հետ ունեցած ձեր փորձառութիւն մասին:

— Ինչու չէ: Տարօրինակ կապ մըն էր իմ եւ բնորդներուս յուս յարաբերութիւնը, եթէ այդ մարդիկը կարելի է բնորդ կոչել: Ահագեմական հասկացողութեամբ՝ անոնք արհեստագործ բնորդներ չէին, արուեստանոցի մէջ ու զամ ձեռով գիմացող դիրք գրաւող փորձառու բնորդներ. մնաց որ, այդ օրերուն, ամբողջ Պէյրուսի մէջ, եղած-չեղածը մէկ-երկու բնորդ կար: Խորքին մէջ, ես այն աչքն էի, որ կարելի արագութեամբ կ'որոսար պահար. մէկ-երկու վայրկեանի մէջ կ'ուրուագէի իրենց առօրեայէն վերջուցած նիւթս, հետագային զայն մշակելու եւ դոյնելու յաւելալ կշիռով ու արտադրանքներու թեւամար պատասխան վրայ երփնագրելու համար: Այդ մատուցանակները, փորձեր ըլլալով հանդերձ, ինծի համար կը ներկայացնէին թեմաներու անսպասու աղբիւր մը, ուրիշ եւ կը վերցնէի իմ պատասխաններուս նիւթերը:

●Այսինքն՝ կը հետեւէիք մասամբ իրապաշտ ուղղութեամբ եւ նուազագոյն դերը կը վերապահէիք երեւակայութեան: Կը պատահէ՞ր երբեք, որ ձեր արտեստանոցին մէջ, պատասխան դիմաց, պահ մը կեդրոնացայէլ եւ խոկայէլ ետք, դուք սկսէիք գծել ձեր երեւակայութեան ծնունդ առած գործ մը:

— Երբե՞ք: Ես չի ու չեմ հաստատուած միայն իրականութեան վրայ հիմնուած էմբելիտ շուէլ թաղիներու: Երեւակայութիւնը իր իմաստը կը ստանայ միայն ա՛յն պարագային, երբ կու գայ բիւրեղացնելու իրականութեան վերջուած թեման: Անիկա պէտք է ըլլայ իրականութեան շարունակութիւնը, զարգացումը՝ գեղագիտական առումով եւ ոչ թէ ինքն իրմէ կտած ֆանթազի մը, որովհետեւ կեանքն է արուեստին ներշնչման աղբիւրն ու նպատակակէտը՝ իր մարդկային եւ բնութեան պարզ իրականութեամբ, սինթետիկութեամբ եւ մարդ-բնութիւն փոխարարութեան ներքինով: Եսաքի կը պատահէր, որ ես պատասխան գծէի գրական մեկնակէտէ մը ներշնչուած, այսինքն՝ կարգալէ հաջ բանաստեղծութիւն մը, պատմուածք մը կամ Ա. Ետարանին հատուած մը, պայմանաւ, որ իմ կարգացած նիւթս համապատասխանէ իմ առօրեայիս, հարագաս հնչէ իմ առօրեայ ապրումներուս եւ սպանապներուս:

●Կը կարծեմք, որ ամբողջովին չպատասխանեցիք մեր հարցումին: Կ'ուզէիք խօսիլ ձեր հերոսներուն եւ Փոլ Կիրակոսեան գեղանկարիչին կապին, հետաքրքրական մանրամասնութիւններուն մասին:

— Սիրով: Նախ բռնեմ, որ նկարչութիւնը իրենց համար աւելորդ բան մըն էր, լիւիս մը. անոնց համար լուսանկարն ու իր պաներկ կամ ջրաներկ պատասխանը նոյն բաներն էին եւ այդ մարդիկը կը մտածէին միմիայն իրենց կտոր մը հասցր ճարտու համար: Թշուառութիւնը, անպարտութիւնն ու զժրախատութիւնը չէին ձգեր, որ իմ թաղեցիներս նան մտածեն



«Կեանքի շրջանը» (Իզահար, 1955)

արուեստի մասին, և հասանարար այդ իսկ պատճառով անոնք զարմանքով կը գիտէին գիւ, իրաւունք այ ունէին, որովհետեւ այդ օրերուն նկարչութիւնը հաց չէր կերցներ, մինչդեռ ես որչափ էի նկարչութեամբ ապրիլ, ամբողջ ժամանակս տրամադրել արուեստին. շարաքը միայն քանի մը ժամ զպրոցը դաս կու տայի՝ ստանալով խորհրդանշական գումար մը, որ մէկ-երկու օրուան ուտելիքիս հասկի կը բաւէր: Յետոյ, մի մոռնաք, որ մեր թաղեցիները աղքատ մարդիկ էին, պարզ արհեստաւորներ կամ անպարծ տուրեցներ. անոնք իրենց նկարները գնելու մասին չէին մտածներ, որովհետեւ չէին կրնար, և կը պատահէր, որ անոնք ձրի ուզէին իրենց զիմանկարը կամ մատիտանկարը եւ ես սիրով կու տայի...

● Իսկ քեռնակիրնե՞րը...

— Անոնք այ նոյն խմորէն մարդիկ էին, ընչ մը աւելի խեղճ: Կ'երթայի Մա'արատ, չու կան և մատիտի արագ գիծերով կ'որտայի թեռնակիրները՝ նստած, ոտքի, կողմով իրենց ուսին, վիճարանութեան պահուստի կրտսէ կրտսէ, և այլն: Անոնք

քոյս կու գային ու կը հարցնէին. «Ասիկա ի՞նչ է, ի՞նչ կ'ընես», և կը պատասխանէի իրենց հարցումներուն: Բարի ու խեղճ մարդիկ էին, որոնք երբեմն ալ կ'օգնէին ինձի, որպէսզի մէկը թու գրեթէ աննկով շփախցնէ, որովհետեւ կը պատահէր, որ հետաքրքրատէր մը, նայիմ բանով՝ գծանկարը կ'աններ ու կը սկսէր վազել: Այսպէսով, մենք բարեկամացանք իրարու եւ սկսայ թղթակիցի պէս արձանագրել ինչ որ իմ շուրջս կը գտնուէր:

● Ձեր քաղեցիներէն եւ քեռնակիրնեռէն անցաք մամուկներու, ապա՝ կիներու աշխարհը: Շրջան մը յատկապէս գծեցիք մանուկներ ու երիտասարդուհիներ, գրաւիչ դիմանկարներ, յետոյ՝ մանրամասնաւթիւնները ջնջեցիք եւ ունեցաք մէր լիպուս, որուն ամէնէն արտայայտչական տարրերը եանդիսացան կենդանան սիրուէթները, շատուածուիներն ու եեֆիաքներու գեղուհիները յուշող երկնասլաց կերպարներ, դէպի երկինք խոյացող շարժում տիպարներ, որոնք մոր ուզգուրիւն մը բացին լիբանանեան եւ արաբական գե-

զանկարչութեան մէջ եւ, տարիներու ընթացքին, հիմնեցին Փօլ կիրակոսեանի իւրայատուկ ու բամաստեղծական դպրոցը՝ ամէնէն խոտապահանջ ֆննդատներուն եւ արուեստաբաններուն իսկ վկայութեամբ:

Կեանքի փորձառութեամբ զուգահեռ՝ դուր այս արդիւնքին հասաք, անցնելով գեղարուեստական հասունացման հոլովոյթէն: Արեւմտեան իրապաշտ ու տպաւորապաշտ դպրոցէն անցաք արտայայտապաշտ շարժում, ապա աւսումնասիրեցիք ձեր արմատները, այսինքն՝ Միշին Արեւելի հին քաղաքակրթութիւնները, փիւնիկեան, փարաւոնեան, քիւզանդական, ասորական եւ հայկական քանդակագործութիւնը, որմանկարներն ու սքրանկարները եւ, անցնելէ ետք փնտռուեցնելու եւ տնայնացնելու ստեղծագործութիւններու աշխոյժ հոլովոյթէ մը՝ հիմնեցիք ձեր դպրոցը: ձի՞շո՞ւ է...

— Մասամբ՝ այո: Կ'ըսեմ մասամբ, որովհետեւ միշտ փնտռուեցնելու կատարելով Հանդերձ՝ ես ինքնաբերաբար վայրկեաններու նկարիչն եմ եւ կը գծեմ ջիզերու մեծ լարումով:

Բայց այս մասին մանրամասնօրէն խօսել առաջ, կը կարծեմ, պէտք է անդրադառնալ նոյնքան կարեւոր այլ հարցի մը: Ինչո՞ւ կը գծենք, ինչո՞ւ բանաստեղծութիւն կը գրէք կամ ինչո՞ւ ուրիշ մը երաժշտութիւն կը յօրինէք կամ կը նուագէք: Իմ պարագային, Հակոտակ գեղանկարչութեան Հանդէպ մանուկ Հասակէս ցուցաբերած անգիտակից հետաքրքրութեան, ես կը տառապէի Հագորդակցութեան դժուարութենէն: Կրկատար գիտելի մէկէ աւելի լեզուներ, բայց ոչ մէկ լեզուով կրնայի յստակօրէն արտայայտել զգացումներս եւ մտածումներս: Մէջս կ'եսային կրիտասարգի մը անասնածելի պարտմներն ու յոյզերը եւ կը զգայի զանոնք արտայայտելու անհրաժեշտութիւնը: Քանի մը արհեստ փորձելէ ետք, որչա՞ծ էի գեղանկարիչ դառնալ եւ ապրիլ իմ գործերուս Հասոյթով: Անգործ էի: Ինչո՞ւները զիրար կը խաշածէին մտքիս մէջ, բայց հարցումները կը մնային անպատասխան: Եւ սկսայ պայքարիլ կեանքին զէմ, երփնագրելով իմ տրամա՝ արագ գիծերով պատկերելով անգործներ, թշուառներ, բեռնակիրներ, մէկ խօսքով՝ տառապեայ ու գաղթական մարդիկ:

● Արդեօք այս հոգեվիճակի՞ն պէտք է վերստին այդ շրջանի գործերուն տխուր ու մութ գոյները, ձեր հոգեկան սնորոշութեամբ, տակնուվրայութեամբ թէ այլ տուեայներու:

— Այո, գոյները մութ էին, որովհետեւ մութ էր ե՛ւ անոնց արտաքին տեսքը, ե՛ւ հոգին: Որովհետեւ բեռնակիրը վարդագոյն, կապոյտ, կարմիր եւ դուարթ գոյնով Հագուստ չէր չէր Հագնիր, այլ՝ պատուաւորաբար, կարկանդակով ցեղոտիներ: Անգործ մարդիկ էին անոնք՝ ճիշդ ինչի պէս, եւ ես, բեռնակիրներ ու անգործներ պատկերելով՝ ձեռով մը իմ ինքնանկարս է, որ կ'երփնագրէի, այսինքն՝ անգործի իմ կացութեանս զէմ կը պայքարէի անգործներու տառապանքը երփնագրելով ջրուս եւ ուժեղ լեզուամտածողութեամբ մը:

● Ուրեմն, կրնամք ըսել, որ ձեր գեղանկարչութիւնը նայնիմէն ձեր կեանքի վէպն է, որ սկսաւ անգործութեամբ, թշուառներով, ապա անցաւ սիրային միութեան, կնոջական դիմանկարներու, մօր կերպարին, մանուկներու եւ հուսի՛ք քարտի մման հասակ նետող պարմանուիներու:

— Ծի՛ղ պոչպէս: Աւելի ուշ՝ երբ սիրահարուեցայ, սկսայ գծել կիներ, յետոյ՝ զոյգեր, զոյգեր եւ միմիայն զոյգեր: Ամուսնացայ եւ պատուաւոր դրամեց յոյ տիկինս, յոյութիւնը դարձաւ առանցքը իմ պատաստներուս, յետոյ եկան մանուկները, որոնք մեծնալով եղան երիտասարդուհիներ, շրջանակս լայնացաւ, եւ անոր հետ՝ պատուաւոր լեզուեցաւ օրէ օր բազմացող տիպարներով, նաեւ՝ մեծցաւ պատաստներուս ծաւալը:

● Ասոր զուգահեռ՝ իրապաշտութեան անցաք տպաւորապաշտութեան եւ վերջին տարիներուն մօտեցաք վերագապաշտ ոլորտներու, երբ ջնջեցիք մանրամասնութիւնները, կեղտոնցաք



«Պատշգամի վրայ» (Ի. Գանկար, 1965)

էութեան վրայ եւ գայն բարգմանեցիք վրձինի քանի մը արագ եարուածնե-րով: Եթէ զանակով կամ ճոյնիսկ վրձի-նով զծուած յիսունական բաւականե-րու ձեռ գործերը բազդատենք վերջին տասնամեակի պատճառներուն հետ, առաջին իսկ ակնարկով եր նկատենք, որ կարծր անշարժութենէն դուր հասաք սանձարձակ արագութեան, *փլատիք* յարաշարժութեան մը, որ ձեռով մը քստորոնի բեւեր կը յիշեցնէ: Ճի՞շդ է:

— Այո, բայց ըսեմ, որ չեզուն կարեւոր չէ: Արտայայտչապաշտ եղած ես, տպա-ւորապաշտ, թէ վերացապաշտ՝ այդքան ալ մեծ նշանակութիւն չի ներկայացնէր: Կարեւոր խօսք է, ինչ կ'ըսեսն է, իսկ լեզուն ինքնորերարար կը բխի խօսքէն, ինչէն, եթէ իրապէս ըսելիք ունիս, ժարդ-կային խոր տագնապ մը ունիս: Յետոյ, սուսին տարիներուն, ես կ'ուզէի ամէն ինչ քարացնել պատատին վրայ, որովհե-տեւ քարացած եւ դանդաղ կեանք մը կը պատկերէի, նստած բնուակիրներ, ան-շարժ ձերուներ՝ իրենց պատուած եւ ծանր ու գորշ հագուստներով: Եւ զժրխտութիւնը ներկայացնելու հա-մար, ես ստիպուած էի գործածել համա-պատասխան գործիք մը եւ դիմեցի գա-նակին, որովհետեւ դու արթ չէի, գեղեց-կութենէն հետո էի, ճշմարտութենէն հե-ռու էի, հասկցա՞ք ինչպէս:

*Իմ կեանքս մեր թաղի նաչերն էր, կա-տուն էր, անորոյութիւնն էր, մնայուն մղձաւանջն էր, եւ ես շատ կը սիրէի ինք-նանկարս, ուր մազերս ճերմկցուցած եմ, որովհետեւ կ'ուզէի արտայայտչապաշտ ըլլալ, արտայայտուել գորուոր եւ բիրտ լեզուով մը...*

● Ըստ կը ծագի աղեղութեան հար-ցը: Դուք ես անմասն չմնացիք յստակ ազգեցութիւններէ՝ թէ՛ գունայեղուա-մտածողութեան եւ թէ՛ նիւթերու տե-սակտէն: Անշուշտ, ունեցաք ձեր պաշ-տած կուռքերը, որոնք մեր հորիզոններ բացին փնտտութեան հետէն բրո-նզուած Փոյ կիրակոսեան անուն երի-տասարդ գեղանկարիչին դիմաց: Կը հանէի՞ք յօսսի այս մասին:

— Սիրով: Ես սիրելը պաշտեցի Միքե-լանժը, Ռամպարանտը, Վինչին, Թիսիանը, Վան Կոկը, Կոկէնը, Փիքասոն եւ տաղան-գաւոր այլ գեղանկարիչներ, յետոյ է միայն, որ սպասազրուեցայ, գտայ ինք-զիներս, երբ, Արեւմուտքին հակադրուե-լով՝ որոշեցի ըլլալ արեւելեան նկարիչ, իմ միջավայրէս եւ արմատներս սնած ար-ւեստազէտ մը: Մի մտածեք, որ բոլոր մա-նուկները նախ չորս ստրով կը քայեն, կը սողան, յետոյ՝ ու բիշներու օժանդակու-թեամբ, կազն է կազ եւ վերջապետութեան

միայն կը սկսին կանոնաւ որ կերպով քա-  
յի եւ վազել:

Դորտու որ արուեստներէն եւ քաղա-  
քակրթութիւններէն կարելի չէ հրաժարիլ:  
անոնք օդ ու աւիւն են մեզի համար, մեզ  
համարայ հանող անթնացու պեր, որոնց մի-  
ջոցաւ կ'անոնենք մեր առաջին քայլերը:  
Մանուկը իր ուժը կ'առնէ կեանքէն եւ  
ապա ոտքի կ'ելլէ, եւ երբ քաղի կը սկսի,  
ըսել չէ, որ իր անմեղութիւնը կը կոր-  
սընցնէ, մանուկ ըլլալէ կը դազրի, ո՛չ: Ան  
պարզապէս կեանքէն իր ուժը կ'առնէ,  
աւելի կը զօրանայ, աւելի կը հասունանայ  
եւ համարայ կ'ելլէ զէպի կատարելութիւն:  
Նոյնն է նաեւ մեր պարագան: Օրինակ,  
առէք նոյնիսկ ամէնէն հանճարեղ գե-  
ղանկարչները եւ դուք պիտի տեսնէք, որ  
ա՛յս է իրականութիւնը, որովհետեւ գե-  
րայէն ոչինչ կը ծնի եւ ոչինչ կը սկսի: Տա-  
վիչին Էռնիլ ըրաւ, Ռաֆայէլը Փերուճի-  
նոյին աշակերտեց, իր ուսուցիչն ազդը-  
ւեցաւ, Վան Կոկը քիչ մը Տըլաբբուայէն,  
քիչ մը Փրասարոյէն եւ մասամբ ալ ճափոն-  
ցիներէն ազդուեցաւ: Կարելի է երկարել  
շարքը, բայց, կը կարծենք, այս քանի մը  
օրինակները ինքնին պերճախօս են:

Ինչ կը վերաբերի իմ պարտաւստիս, հիմ-  
նականը հետեւեալն է. վան կոկեան զոր-  
ծերուս մէջ Վան Կոկին չափ ուժ կ'ա՛յ, թէ  
ոչ: Յաշերին, մօրս եւ իմ զիմանկարս  
այնքան արտայայտութիւն ունի՞ն, թէ ոչ-  
գիծերն ու վրձնահարուածները նոյնքան  
ուժեղ եւ խօսող են: Վերջապէս, կարեւ-  
որը հաստքն է, ամբողջական լարումն  
է, եւ երբ մէկը կ'ունենայ այդ հաստքն  
ու լարումը, երբ կը գծէ ոչ թէ գծելու,  
նկարիչ ըլլալու նպատակով, ալլ՝ տապ-  
նապ մը իր խորութեամբ արտայայտելու  
սիրոյն, երբ անկեղծութեամբ կը նայնա-  
նայ իր գործին հետ, կը դառնան անբա-  
ժանելի եւ բարախուն միութիւն՝ այդ  
ուժը ինքնարեքարար կու գայ: Ես նկարիչ  
չէի ուզեր ըլլալ, ալլ՝ միմիայն կարենալ  
արտայայտուիլ, որովհետեւ կարգին ոչ  
մէկ լեզու պիտի, միայն գծելու լեզու ին  
ծանօթ էի եւ կեանքը վերարտադրեցի իր  
ամբողջական ուժով, հարիւր առ հարիւր  
տոկոսով եւ, կը կարծեմ, յաջողեցայ,  
որովհետեւ, կը կարծեմ, ունէի հիմնական-

նք, նախ՝ շնորհքը, յետոյ՝ հաստքը, յա-  
մաս ինքնապատահութիւնը:

● Սկսեալ արագ զծանկարներով,  
որոնք ապրեցան զարգացման հե-  
տաքրքրական հոլովոյթ մը: Առաջին  
շրջանին աշխատեցաք ուժգին եւ  
կտրուկ վրձնահարուածներով՝ յար եւ  
նման վան Կոկի ոմին, յետոյ՝ անոնք  
աւելի երկար շունչ ստացան, իտալիոյ  
մէջ՝ զունային քափանցկութիւն, նիշդ  
բրաներկ գործերու պէս, որոնց վրայ  
գումարուելու եկան արագ ու քաղաքիկ  
գիծերը, որոնք յաւելեալ թօնով մը  
հարստացուցին ձեր պատանները:  
Այս հանգրուանը ապրեցաւ իր բնական  
հասունացումը եւ ուղղահայեաց այդ  
գիծերը տակաւ առ տակաւ վերածուե-  
ցան լայն ու վերասլաց արագ վրձնա-  
հարուածներու, որոնք հետ թիրեղա-  
ցաւ ձեր դիմագիծը, պիտի ըսէիք՝ Փոլ  
Կիրակոսեանի դպրոցը: Շուրջ քառա-  
սուն տարուան ստեղծագործական  
կենդանութիւնը մը կը նշանակէ ասիկա,  
յարափոփոխ եւ կենսախայտ փորձա-  
նուրիւն մը, որուն մասին թերեւս չէիք  
ալ մտածած, երբ 1949ին ցուցադրեցիք  
ձեր առաջին պատանները: Բազմաթիւ  
արուեստաբաններ ուսումնասիրած են  
այս հոլովոյթը եւ հասած ենտաքրքրա-  
կան եզրայանգումներու, բայց, կը  
կարծենք, հետաքրքրական պիտի ըլլար  
լսել ձեզ, որովհետեւ դուք կրնաք յա-  
ւագոյնս ներկայացնել այդ հոլովոյթը:

— Ես այս արդիւնքին հասայ առանց  
որեւէ ծրարիքի, բնական կերպով: Ըս-  
տիպուած էի շատ արագ, քանի մը երկ-  
վայրկեանի մէջ գծել ճեպանկարք, որով-  
հետեւ բնականօրէն ու անպորձնէրը  
նորեմն չէին ուզեր, որ գիրենք գծեմ, մա-  
նուանդ սկիզբները, զիս լրտես կարծեցին  
եւ օր մըն ալ պատուեցին թուղթերս եւ  
ստիպուած՝ ես արագացուցի գիծերս,  
փորձելով բռնել անոնց հոգին, էութիւնը,  
ասանց թուղթին նայելու, քանի մը երկ-  
վայրկեանի մէջ: Ես յաջողեցայ, որովհե-  
տեւ ամբողջ հոգիովս կ'ուզէի բնարած  
նիթս սկիզբաբի մը մէջ անշարժացնել  
թուղթին վրայ: Ես տիրացայ ա՛յն վարդե-  
տութեան, որ ասանց թուղթին նայելու





«Նուկան» (Գրանկար, 1951)

սկսայ շափերը, Համեմատութիւնները  
ամենայն ճշգրտութեամբ եւ արագու-  
թեամբ վերարտադրել, եւ ձեռքս այդ  
եղաւ, ձեռքս հոգի եղաւ, ձեռքս միտք  
եղաւ, ձեռքս արտայայտութիւն եղաւ,  
մէկ խօսքով՝ ձեռքս մտտէլ եղաւ, թուղթ  
եղաւ, մատիտ եղաւ:

Յետոյ, տարիներու ընթացքին, այս  
արագութեամբ սժտուեցան նաեւ պաս-  
տառներս, երբ միաձուլուեցայ գործիս  
Նետ եւ սկսայ գծել ամբողջական վերա-  
ցումով, ամբողջական թափով, առանց  
մտածելու ձեւաւ որոյ ոչ պաստառին մա-  
սին, անոր կազմաւ սրման Հանգրուտնե-  
րու ու եւ յարակից մանրամասնութիւն-  
ներու մասին: Յանձնուեցայ անոր Հոս-  
քին, կրկնապատկուեցաւ թափը եւ գոր-  
ծերս Հարստացան այդ կրկնապատկուած  
ու ժականութեամբ, շարունակ վերանո-  
րուուող, զոյն ու բոյր փոխող, բայց միշտ  
ապրելու երջանկութիւնը փառարանող  
յաւտեսութեամբ, կեանքին բխած ան-  
թաղկամունչի խորհուրդներով եւ կեն-  
սաթրթիւն շունչով:

● Կր կարծենք, որ հաս կ'արժէ պահ  
մը դանդաղիլ ձեր գունամտածողու-  
թեան կրած հոլովոյթին վրայ: Յիսու-  
նական թուականներու վերջաւորու-  
թեան, երբ արդէն ծանօթ անուն մը  
դարձած էիք, ձեր պաստառները սկսան  
լիանալ գուարք գոյներով: Երջանկու-  
թիւնն ու լաւատեսութիւնը դարձան  
ձեր գործերը բնորոշող յատկանիշներ,  
պայծառութիւնն ու յոյսը՝ անոնց հիմ-  
նական գիծերը. սէրը եւ խաղաղու-  
թիւնը՝ ձեր ամենօրեայ խօսքը, երգը,  
աղօթքը:

Երէ մեկնինք ձեր ա'յս հաստատու-  
մէն, ձեր պաստառները ձեր կեանքի  
կենսագրավէպին էջերն են կրնանք  
ըսել, որ յաջողութիւնը իր բարերար  
անդրադարձը ունեցաւ ձեր պաստառ-  
ներուն վրայ: Աւելի ուշ, երբ նիւթապէս  
ուսիլ բարեկեցիկ դարձաք եւ, դուրս  
ելլելով կիրանանի սահմաններէն՝ դար-  
ձաք համարաբանական յարգելի անուն  
եւ որոշ չափով միջազգային ճանա-  
չումի արժանացած արուեստագէտ՝  
ձեր գործերը լիացան գուարթութեամբ,  
խիղով եւ բանաստեղծաշունչ բա-  
փանցիկութեամբ:

19 Սեպտեմբեր 1973ին, արկածի մը  
հետեւ անհով դուր կորսնցուցիք ձեր աջ  
սրունքը: Արուեստաբաններն ու էճնա-  
դասները պահ մը մտածեցին, թէ Փօլ  
Կիրակոսեանը պիտի վերադառնայ  
առաջին հանգրուանի իր գորշ եւ քախ-  
ժուտ գոյներուն, տխուր քեմաներուն:  
Սակայն, ի գարմանս բոլորին, դուր շա-  
րու նակեցիք երփնագրել նո'յն հաւատ-  
քով, միեւնոյն լաւատեսութեամբ եւ  
վերանորոգ շունչով: Անշուշտ, ողբեր-  
գական երանգ մը եկաւ ու հաստատու-  
եցաւ ձեր պաստառներուն մէջ, գա-  
նունք գսպանակեց որամաթիք ենչեղու-  
թեամբ, բայց դուր մնացիք նայն լաւա-  
տես գեղանկարիչը՝ թէ՛ ձեր գունա-  
մտածողութեամբ եւ թէ՛ շօշափած նիւ-  
թերով: Կ'ուզէի՞ք խօսիլ ձեր կեանքը  
տակնու վրայ բրած այս անկիւնագար-  
ձային թուականին եւ անոր անդրա-  
դարձներուն մասին:

— Անկասկած, դժուար է քանի մը նա-  
խազատութեամբ նկարագրել սուքս

կորսնցնելու արկածին հետևանքները: Ֆիզիքական որեւէ կորուստ կարելի չէ գործանել, անպայման խոր վերք կը ձյն հոգիիդ մէջ, բայց ետ կը հուսատամ, որ անդարմանելին, ահաւորագոյն կորուստը մարդուն հոգիին եւ հաւաքին կորուստն է: Մանօթ է ձեզի, որ վերելակին մէջ բանաստեղծ եւ թատերագիր Իսամ Մահմուդի եւ լրագրող Իպրահիմ Արիսի հետ բանտարկուելէ ետք, երբ օքսիմէնը սկսաւ պահսիլ եւ Իսամը սկսաւ զժուար շնչել, զինք շնչահեղձութենէ ազատելու համար օտքովս հարուածեցի զբան ապակիին եւ պատահեցաւ անպատկին: Նոյնիսկ այդ վայրկեանին ես ինքզինքս չկորսնցուցի, աննկարագրելի, ստուտածային ուժ մը եկաւ վրաս, որովհետեւ զօրաւ որ էր հաւատքս, ապրելու, ստեղծագործելու կամքս: Չարմանալի թուի թերեւս եթէ ըսեմ, որ մէկ օտքի վրայ, արիւնլուայ վիճակով, ապտակեցի Իսամը, որ սկսած էր մարելու նշաններ ցոյց տայ: Վերելակէն դուրս ելայ մէկ ոտքի վրայ ցատկուտելով եւ, հակառակ մեծաքանակ արիւնահոսութեան, յաջողեցայ ինքնաշարժ մը կեցնել եւ մինչեւ Ամերիկեան հիւանդանոց ջիդերուս տէրը մնայ: Իրարանցումի մասնուողը ընկերներս էին, կարծես իրենցմէ մէկուն բան մը պատահած ըլլար, իսկ ես՝ զիրենք միլիթարողը, ուշքի հրախորդը: Ես յաճախ մտածած եմ այս մասին, փորձած եմ թափանցել հաւատքի ուժին խորքը, հասնիլ անոր արմատներուն, բայց միշտ այ յանդած եմ ա՛յն եզրակացութեան, որ հաւատքը անսկիզբ եւ անվախճան խորհուրդներու ծովն է, որուն տեսանելի հորիզոնին երբ կը հասնինք՝ կը տեսնենք նոր հորիզոն մը, եւ այսպէս՝ շարունակ, առանց կանգ առնելու: Եթէ մէկը ունի

այդ հաւատքը, եթէ ամուր են ջիդերը՝ ո՛չ մէկ արդէն կրնայ կեցնել զինք եւ ան կը յոգայ կեանքի ծովուն մէջ, ամենայն ինքնափստահութեամբ, առանց իսկ զգալու՝ հորիզոնէ հորիզոն:

● Մահուան գաղափարէն շարսափեցա՞ք երբեք...

— Երբ արթնցայ կոշմարէն՝ մասամբ այր, որովհետեւ կ'ուզէի ապրիլ, այսինքն՝ նկարել, նկարել եւ նկարել: Տարօրինակ կերպով կրկնապատկուեցաւ նկարելու անպուսպ պահանջս, որովհետեւ ես կտուրած էի մարդուն, այսինքն՝ սիրոյ, կեանքին, յոյսին: Եւ հիւանդանոցէն դուրս ելայ վերածնած հոգիով, կրկնապատկուած, տանապատկուած հաւատքով:

Յետոյ, ո՞վ ըսաւ, որ մահը վերջնակէտ մըն է: Մահը միշտ այ սկիզբ մըն է: Մենք կը թաղուինք մեր մօր արգանդին մէջ եւ ինն ամիս պայքարելէ ետք միայն յոյս աշխարհ կու գանք: Կը շարունակենք մեր պայքարը, կեանք մը ամբողջ, որովհետեւ կը հաւատանք մարդուն, գեղեցիկին, ճշմարտութեան: Ֆիզիքական մահը, ըսել կ'ուզեմ՝ բնական մահը հանգստութիւն է, ժամանակաւոր կարճ դադար մը, որմէ ետք կը սկսի մեր բուն կեանքը. ես կը սարսափեմ միայն ոճիրէն, գազանային սպանդներէն, անժամանակ մահերէն, տակաւին չծաղկած՝ ուսման մը կամ կոյր փամփուշտի մը հետեւանքով սպաննուած մանուկին մահէն, որովհետեւ, ո՞վ գիտէ, ի՞նչ-ի՞նչ ծաղիկներ պիտի տար մարդկութեան: Քանի՞քանի՞ արուեստագէտներ սպանուեցան այս վերջին տալը տարիներու ն՝ տակաւին վրձինը, ջուրկը կամ գրիչը իրենց ձեռքը շտուած: Աստուծոյ մահն է ահաւորագոյնը, մահերո՛ւն մահը...

(Շար. 1 եւ մնացեալը յաջորդելու)

Հարցազրոյցը վարեց՝  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

### Յ. ՕՇԱԿԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

#### Ն. ՍԱՐԱՑԵԱՆԻՆ

..... \* \* .....

է.

18 Օգոստոս 926  
Նիկոսիա

Սիրելի Նիկոյ,

Առեւինին ընդունեցի նամակդ: Յեղակարծ դէպքեր ու հոգիի շարժեր արվելք եկան որպէսզի ատենին պատասխանեմ: Բայց գիտէիք անշուշտ պիտի գար նամակս:

Նախ ըսեմ թէ շատ սիրեցի պրածդ: Ո՞ր Վառնայի mollusque ոճը, որուն էր պակսէր այնքան շատ բան: Այ մարդ եղած ես, այդպէս էր տեսնեմ ու ատիկա ոճէդ որ ողեայար ունի հիմա: Եսա ուրախ եմ որ կեանքը տակաւին չէ յաջողած փրկի հոգիիդ մէջ սա պզտիկ խորքը, մարդարիտին բոյնը պիտի ըսէր քեզի պէս երիտասարդ բանաստեղծ մը, որուն կասկածն ու հեռանկարը ուղեցի ու նենայ ատենին, երբ պզտիկ էիր: Հիմա դրեթէ կարծրացուցած ես անոր պատկերը: Ու ինծի կու պայ թէ մարմինիդ հետ միայն էր կործանի այդ տապանակն այլ չու մէջդ:

Կր համակրիմ նաեւ վերապահ հպարտութեանդ: Ու հոս օգտակար կ'ըլլամ քեզի: Պարտապ տեղը չիս ապրիր: Ատոր ապահով կրնաս ըլլալ: Ինչ որ ամբարած ես ջիզերուզ ու ուկաններովը, չի կորսուիր: Ու ես հանդիսով կը նաշիմ օրտան ուր պիտի գաս թափելու պահձու այդ յուզումներուդ տուփերը: Մարդկրը կը տեսնես կոր ակնացովդ: Հանոյքն ու ցաւը կ'ընդունիս ընտանու-թեամբ, առանց դերասանութեան ու սանկ քիչ մը տերվիլութեամբ: Կիները կը դպին միսէդ աւելի՛ աչքերուդ: Ատոնք լաւ են ու նշաններ թէ Օշակահը շէր խարած կամ խորուած ինչպէս լսեք էր Վահանին:

Գահիրէն ձգեցի: Կիպրոս եմ, Մելիթոնեան հաստատութեանց մէջ: Գրականութիւն չեմ ընէր: Այս տարի Գահիրէ պատրաստեցի Զարդարեանի վրայ մասնաւորական ու ուսմանսիրտ թիւն մը: Այսբան: Կ'երի այ Հայրենիքին (\*) մէջ: Հիմա ձեռքս ու նիժ գարձեալ դպրոցական աշխատանք մը հայերէնի դասընթացք մը որ տիրոզ պիժը գրականութիւնն ու վերլուծումը պիտի ըլլան:

digitised by A.R.A.R.@

Այս տարի թերևս յաջողիմ երկու գիրք Հանել: Մեթոս, ոգի, կազմ նոր են բո-  
լորովին: Ատենը եկած է որ կամաց կամաց գիծի ելլէք:

Վահրամը նամակ գրած էր: Չկրցի պատասխանել ոչ թէ ծուլութեան  
այլ նամակին ձեռին Համար: Վահանին գրած իր նամակները միշտ կը կար-  
գայինք Գահիրէ: Անոնց մէջ ինքզինքը կը զնէր: Մինչդեռ ինծի գրածը պաշ-  
տօնական հով մը ունէր ու ատոր Համար ցուեցայ: Ան ալ փոխուած է շատ:  
Հոգին շատ կը փորէ: Իրաւ է թէ տակաւին չործիքները նիւար են այդ խո-  
զարկու մին Համար: Բայց Համ ատենն այ կը բ ս է: Գեղամէն լուր շուկիմ, լսե-  
ցի որ հիւանդ է ու կազդուրուելու դացած է: Չարոյեանը կեղբունականի մէջ  
Չօպանեանի վրայ բրած ճԼԱԾԸը գրկեր էր թէնդիկին տարեցոյցին մէջ տպուե-  
լու Համար: Այդ յիմարու թիւերը Հեմ ներքեր: Նախ պէտք է ճանչնայ աշխարհն ու  
մարդերը: Չօպանեանին վարձով տպելն անգամ շատ կը տեսնեն իր բարե-  
կամները, ուր մնաց անոր վրայ ճշմարիտ խօսք ըսելը: Չարոյեանին պատ-  
մըւածքը տեսայ Արագածին (\*) մէջ ու շտրեցի:

ԱՀա քեզի դժբախտ նամակ մը, գայն գր, զին պէս: Ներք որ այնքան  
ազուոր ու լեցուն նամակիդ փոխարէն այսքան քիչ ու թեթեւ դրեմ քեզի: Բայց  
մի յու սահառիր: Գու օրդ եկած էր, քեզի այդ նամակը գրած պահուդ: Օր մըն  
ալ իմս կու գայ:

Չմոռնաս գրել ինծի: Վահրամին ալ Հաղորդէ բարեւներս:

Սիրով  
Յ. Օշական

Յ. Գ. Բարի եղիւր ինծի զրկելու 1924ի Փրանսական զպրօցներու ընդ-  
Հանուր ծրագիրը նախակրթութեան, երկրորդական ուսման, Համալսարանի  
(եթէ կայ) բաժիններով: Անհրաժեշտ պէտք ունիմ ու անմիջապէս: Չես մոռ-  
նար:

Նոյն

(\*) Կ'ակնարկէ «Արագած» գրական հանդէսը:

Ը:

Յ Դեկտեմբեր, 1926  
Նիկոսիա

Սիրելի Նիկոս,

Բոլոր նամակներդ ալ առած եմ: Տարօրինակ է որ դու ն կը կարծես  
Օշականին նամակ գրել, մինչդեռ փխպակ մըն է որ կը փորձես: Հետաքրքրա-  
կան պիտի ըլլար այս պարագան քեզ յիշեցնել: Ամէն ինչ յաջող է ձեռնարկիդ  
մէջ իբր ծրագիր: Նորէն խրատ պիտի տամ: Բայց ձեր սերունդը այնքան քիչ  
մտիկ ըրաւ որ աւելորդ չի դար կը կարծեմ: Նամակներուդ մէջ ու բուսադրուած  
վիճակներդ ատաղձներ են շահեկան պատմութեամբ մը, պայմանով որ կապ-  
ւին կեղբորնի մը որ գոյու թիւն ու նի: Կինն է այդ կեզրունը: Ուրեմն պարզ է յա-  
տակագիծը:— 1<sup>o</sup> Նիկոսիա, որուն անցեալը պիտի ողկուրու ի, լայն շերտերով ու  
արադ Հարուածներով, որպէսզի շուտ մը գայ բուն նիւթին, Բարիզի մէջ տե-  
ղաւորուած մեր վերջին սերունդին: 2<sup>o</sup> կիներ որուն անունն ու ազգու թիւեր

նշանակու թիւն չու յի: Բայց որ կը պահէ իր հոտին շարժը բոլոր արու ներք: 3<sup>o</sup>—  
 րնկեր մը, որմէ կը խլնո այդ հիտին կտորը: 4<sup>o</sup> պատահական մարդեր, որոնց  
 սխու էթները քիչ մը variatio 1 կը բերեն: Իսկ 1<sup>o</sup> հոգեբանական կարեւորա—  
 գոյն վիճակը զգացական էյուժէ մըն է, 2<sup>o</sup> ձգտու մներ որոնք ձեր սերունդը կը  
 յատկանշեն: 3<sup>o</sup> այլասերումները որոնք այսօրուան գաղտնիքն են: 4<sup>o</sup> մեծ քա—  
 զաքակրթութեան մղձաւանջը մերինին վրայ: Ու տակաւին շատ մը բաներ:

Ահա ինչ բաներ խորհեցայ կարդալով ջու. նամակներդ: Օշականը  
 անոնց մէջ յատուկ անուն 'ըն է, անիմաստ ու աւելորդ: Ու լաւ է որ այդպէս  
 է քանի որ ամէն տղայ ինքզինքն է անպատճառ ու այդ յատկանութեամբ է որ  
 կը յաջողի բան մը գտնել:

Ոչինչ ունիմ գրելիք իմ անձէս: Անհուն դժբախտութիւն մը կը ճնշէ ու—  
 սերուս եւ ես ոտքերս դեռ կը յամառիմ պահել ամուր: Նայինք երբ կու գայ  
 փլուզումը: Եթէ ձանձրոյթ չըլլայ, Nouvelles Littérairesի խմբագրատունը  
 կ'երթաս, ու կը գտնես բաժանորդագրութեանց բաժինին պեսը: Ես բաժա—  
 նորդ էի թերթին ու 15 ամսուան բաժնեդիրը վճարած անցեալ տարի: Բայց  
 միշտ անոնք կը շարունակեն 12 ամիս թերթ գրկել: Հիմա որ աւարտած է տա—  
 րին (Հոկտեմբերի վերջ) դեռ կը շարունակեն թերթ գրկել: Կը հասկնաս թէ ին—  
 չա՞ն կը գրկեն. եթէ երեք ամիսը գոցելու համար է, լաւ: Թող շարունակեն  
 գրկել. այլապէս կեցուր թերթը ու վճարէ մինչեւ Դեկտեմբեր թիւերը .....(\*),  
 Քրանգի հաշուով, 8—10 Քրանգին մէջը պիտի ըլլայ երկու ամիսը: Ենտոյ ես կը  
 գրկեմ քեզի կամ Պայենցով կամ Հրաչեայ Տէր Ներսէսեանով:

Կր սպասեմ որ լուրջ նկատես պատճառաւոր մասին թելագրութիւնս:  
 Եթէ ուզես, բոլոր նամակներդ վերագարձենմ քեզի ու դուն օգտուէ անոնցմէ:  
 Ինչպէս որ կ'ուզես, պատրաստ եմ բնելու: Գալ նամակիս պիտի գրկեմ շեքը  
 պատանի են՝ Հատորիկ մը, քեզի իբր նուէր:

Սիրով  
 Յ. Օշական

(\*) Անրկնիցի բառ:

Թ.

12 Յունուար 1927  
 Նիկոսիա

Սիրելի Նիկոյ,

Առի ձեռագիրդ:

1<sup>o</sup> Նիթ չու յիս:— Երբեք մի մտածեր թէ առանց հիմնական բան մը մե—  
 զի հաղորդելու ձգտումին որեւէ գործ կրնաս պարտագրել մեզի: Կ'աշխատես  
 այդ պակասը դարմանել պատկերներու, տեսիլներու, անձերու փոփոխումով:  
 Ու արդիւնքը այն կ'ըլլայ որ փոխանակ ամբողջութեան՝ մեր մտքին կը կառ—  
 շին սանկ ու նանկ ծուէններ: Արդ, արուեստի ամէն գործ անպայման Արիք  
 մըն է,

2° Աճնու մեծագրանց ունիս: Դժբախտութիւն է որ այդ վայրեր ինքն իր մէջ մտնող է: Այսինքն վարդ զայցող պատկերն է, տեսիլն է, որ արդէն կապ չուի մտնողին մէջ: Չանապան մարդերու պանապան շարժու մները տալու ասուն կը յոգնիս շափապանց շուտ ու կը ձգես կ'երթաս, զու ն հեղինակը ու մարդերը ու իրենց գործողութիւնները կը մնան անաւարտ:

3° Ընդդայնու մ շու նիս: Ասիկա հետեւ ւնքն է առաջին պակասին: Բոլոր պատմանները կեանք շլլայլ աս կի ուրու պարութիւններ են: Ու առարկան ինչով որ կը զատուի իր ստուերէն, նոյնը հաս'ցիր քու տուածիդ և իրականութեան համար:

4° Կատուցում շու նիս: Անշուշտ հիմա մտա է շինելը, ստանկ եկածին պէս տար: Բայց մեծ ճարտարապետներ միայն առոր մէջ կը բռնեն իրենք գիրենք: Սկողները պէտք ու նին տե: ական մարգանքի: Սխալ ազդեցութեան տակն էս Չարեանին որ կը շրջի վտանգին շուրջը, առանց կորուստի, քանի որ մտածու մներու և սրամտութեան հետ գործ ու նի: Կեանքին հետ այդպէս պիտի չհամարձակէր կատակել: Դարձեալ զէ կերպով ազդուած էս Չարենցէն որ կեանքին հետ այդ կատակը փորձած է և տուած շարաչար (Նրկիւր Նալիւրի վէպը):

5° Հաւատք ու լրջութիւն շու նիս: Հիմա կը զարմանաս թէ ինչ գործ ունին այս պահանջները արու ևստի կալուածէն ներս: Բայց զու ն գիտես աւետարանին առակը: մանանեխի հատիկին շափ հաւատքը բաւական պիտի ըլլար յետները տեղափոխելու:

6° Յուսկնոտ ևս: Մի բանք թէ ուրիկ կը հանեմ այս պարմանայի անուկանը: Բայց ևս ոճերը կը կարգում գոց գիրքերու պէս: Այդ, ամէն բանի մէջ յաւակնոտ, այո': Երբեք ինքզինքիդ դէմ: Ուրիշները չհանելով չէ որ մարդ յաւակնոտ կ'ըլլայ: Ընդհակառակը, պիտի համուտ ըլլաս զու ն քեզի հետ ու պիտի խոնարհիս քու ներսիդ քոյոր պահանջներուն:

7° Մարդերը շու ճաննար:

8° Թէքնիքի անհոն մարգանքի պէտք ու նիս:

Ուրեմն, սիրելի նիկոյ, քեզի կը զարմանեմ ձեռագիրդ, ինչորելով որ նորէն գրես ու դնես

1° Հիմնական գործողութիւն մը որ սկսի ու վազկ ու տեղ մը թուփի:

2° Այդ գործողութիւնը վարող, կամ անկէ վարուած որոշ ու ջիգ մարդեր, որոնք թիփիք ըլլան: (Յատկանշական միջավայրի մը հետ գործ ու նիս: Գրելիք մեծ շահեկանութիւն ունի, մեծ շարժումի մը իրր առաջին գետինը ներկայացող այս միջավայրը սեւեռելու արժանի է ամէն կերպով: Այնպէս որ եթէ կինն անգամ ամոցոյն իյնայ հոն, ինչպէս է տուածը գժրախտաբար, միսուները այդ կըրտնիկ գործակալները պէտք էր թուիթին պատկերին, քամուած ու սպասուած քոյորովին:)

3° Նուազ փնտոտուած ոճ մը: Եթէ Մօրուան կը փորձէ ատկէ անիկա անհոն ու պարու մներու քազո: րսիներ ու նի իրեն կտին: Միշտ կեանքը կը պահուի անոր պատկերներու և ևսին: Մինչ քու կիններդ զուրսէն, մանաւանդ օղէն կը զոյցուին: Ատոնց շատ այ պէտք չու նիսք: Չեմ բեր թէ աւելորդ են: Այնպէս մը որ աննշմար ըլլան, (հակասակ կողմէն հասկցիր), ու կեանքի տխրին վրայ զոյգով ըլլաներու պէս զան ու սահին ոչ թէ զլուիս բռնեն ու կեանք, ինչպէս է քու պարագայիդ:

4° Խնամք

- 1° մարդերու
- 2° գետինի

- 3° միջնորդի
  - 4° պայմանական
  - 5° պարագրաֆի
- } յօրինումներու ատեն:
- 5° Յարասեռութիւն
    - 1° տեսիլքի
    - 2° վիճակի
  - 3° սեւեռումներու
  - 4° մանրամասնութեան խուզարկութիւն
- } մէջ

6° Ամբողջութիւն ու կառուցում: Այնպէս ճշտորոշ զիրար կարգացող կարենայ լիակատար պատկեր մը ստանալ քու հիմնական Բարիգիդ Հայ շրջանակներէն: Ոչ միայն ատիկա: Բայց նաեւ վայելիք մը գեղեցիկ ձևի տակ ասոնք արժևորուած տեսնելու: Օրինակ մը քիչ պիտի լուսարանի: Մեր յափտիտութեան բոլոր խոսքայոյց գրականութիւնը այսօր մեռած տարր է: Ու քան տարի ետքը անիկա փոշի իսկ պիտի չուենայ: Բայց կարճիք ժամուցը շուրջ շրջանի ազատի ու հակառակ իր տնտեսն թերութիւններու նկարագր վաւերագր մը: Քիչէն շատ հակադիր: Փամանակ չունիմ աւելի:

Կր դրկեմ ներփակ գիրք մը եւ ձեռագիրդ:

Եթէ յարմար գիրքեր կարենաս ձեռք ձգել, նորերէն, կրնաս դրկել: Նայլ որ ծախք չընես:

Ձեմ խօսիք իմ մասին:

Սիրով  
Յ. Օշական

Յ. ՕՇԱԿԱՆ

(Շար. 2)

# ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

(Հատուած)



Հայ գրականութեան մէջ, հատորային իր բախտով թերևս ամէնէն զօրախոզ զէժքը եղած է Եղիա Տեմիրչեպիան, որուն արձակ թէ չափածոյ գործերը շնորհիւ գիտեր ինչ պատճառով զբուսած մտային իր իմբացրած «անգլաներուն», իրեն ժամանակակից թերթերուն եւ թէ Հեաազային Փոյսոյ ու արտասահմանի հրատարակութեանց մէջ:

Ուրիշներու կարգին՝ Օշական եւս յիշեցուց անկէ հատորներ մը կազմելու հրամայականը, որ կենսագործու էկաւ նշանաւոր գրող Լաիւն մահէն շուրջ տասն տարի ետք, Փարիսի ճշայ գրողներու քարեկամներէ մասենալարին նախածնունդ թեամբ: Արամ Անտոնեանի կազմած այդ հատորը կը հաշուէր 470 էջ, մեկտեղելով 50 բանաստեղծութիւն, 38 արձակ եւ 27 նամակ: Անիկա օժտուած էր նաեւ մասենագիտական տեղեկութիւններով:

Թերևս այդ էր նայ մտաւ որովհետո թեան պատկերացուցած «մեթոփիսիանական հատորները, բայց անիկա կըցաւ», բաւարարութիւն տայ բանաստեղծութեան թաղմանքներուն, եւ այսօր նոյնը կամ նոր հատոր մը լսյա բնծայելու հրամայականին առջև չէ նք գտնուիր արդեօք: Հարցու մը կը զննեք ու կ'անցնինք...

... Սկիզբէն ի վեր հրապարակի պահանջը եղած է Հատորնոյր Եղիա մը: Այսպէս կազմուած այդ հատորը պիտի համախմբէր իր մէջ թերևս ամէնէն lyrigue այն քանի մը էջերը, որոնք Արեւմտահայ գրականութեան մէջ երբեւիցէ ըլլան գրուած: Այնքան իրաւ բանաստեղծ մը կար այս յիմարին ետին: Դարձեալ հոն է, որ մեզի պիտի արուէր երջանկութիւնը՝ կարողալու անհաւասարելի գաշնաւորութեամբ էջեր, ուր կը շփոթես ապրումն ու երազը, իրականութիւնն ու քմայքը, սիրտը եւ միտքը, նի թն ու հոգին, տարօրէն հաշտ, արտառուչ խառնուրդի մը մէջ, որուն ըլլար խնայուած տաժանքը փիլիսոփայական գաժան հմտութեան, գրական թեթեւ sophismeին:

Այս շարքին տակն է, որ կը կարծեմ, թէ սխալ է ըլլար գետեղել ինքնավերլուծական այն խոր, մթին, տարօրէն նուրբ եւ զարմանալի կերպով իրաւ քանի մը գրութիւնները, որոնք Մոնագն սարգսարու թիւերը երեւցան շԱրի-



ւելիքի մէջ: Արտայատուծութիւն, վիճակ, արտագին ճշգրտութեամբ խորացումներ, բոլորը ըստածքի եւ պատկերացման անհասարկի թարմութեամբ: Ձեռ կրնար ասոնց առիթով չիլիւ որձնէզ, յիմար սեւը, որ իր փառքը ապրեցաւ: Արեւմտահայ գրականութեան մէջ, արձակ քերթուած անունին տակ, մեզի կտակելով շքեղ բանակոյտ: Եղիան դուրս է կարաւանէն, առնուազն խորքի հարազատութեամբ մը: Անշուշտ գրագէտին հիմնական մեղքը, բուլ կ'ուզեմ՝ կառուցման մէջ ընդոծին թերութիւնը հոս այ ըլլայ միջամտիս, կործանելով մեր հիացումը, բայց պաշտպանելով առնուազն գրագէտի անոր վարկը: Հետաքրքրական պիտի ըլլար իր սերունդի մարդոց գրական եղափոխութիւնը (evolution) լուսաւորելու տեսակէտէն մօտենալ Եղիայի եղանակին, որուն մեծ գիծերը գրիթէ նոյնն են, հակառակ սեւերու եւ աշխատանքներու մեծ տարբերութեանց: Այսպէս է, որ յիշելու համար օրինակ մը՝ «Լիբր Պոսթորը», անոր տայ առիթ, որ իր անձին խոր յուզականութիւնը, եղբրական թախիծը, իր այլեւրոն զմայլելի ներութիւնը, իր իմացականութեան անասնձ խոյանքները քովէ քով գան միշտ արագ, երկրորդականէն խեղդուելու վտանգին մէջ, բայց ազատութիւն այդ վտանգէն ու վերածութիւն տպաւորապաշտ թեքնիքին տակ ծափաբանական կցկտուր, անյարիւր, նոյնիակ հակասական, բայց միշտ Եղիայ: Իր ո՛ր լիբրուն մէջ այս մարդը շեղաւ այս ամէնը միասին, որպէսզի ըլլար զանոնք հոն՝ ուր անձնական հակակշիռը (կ'ակնարկեմ մտքին) կը վերածուի իր նուազագոյն շահերուն: Ար գրականութիւնը չի կրնար մոռնալ «Ներաշխարհը», «Սիլիւսարի էջերը», «Սիլիւսարի պարտէզները» ոչ թէ որովհետեւ այդ գիրքերուն ետին ճշմարիտ տաղանգ մը, առնուազն խառնուածք մը իրենց զիրենք կը պարտադրեն մեզի, այլ որովհետեւ իրենց առիթով մեզի համար ընդմիջու շահուած եւ այս անպակ մեր հաւաքական զգայնութիւնը շահաբերող մտափիճակներ, հոգիի պահեր կտակուած են մեր հաւաքական հարստութեանց թանկարանին: 1880ին Եղիան իր սերունդէն ի՞նչ տախտակ կրնայ մեզի ներկայացնել: Այս հարցումին պատասխանը դուք կը գտնէք ո՛չ թէ խմբագրող, վիպող, դասող, փոխտփայլող Եղիային մէջ, այլ՝ այն կցկտուր էջերուն, ուր քմայքը, երազը, զգացումը կը փայլակին ու կ'անցնին: Ասոնք տպաւորապաշտ էջեր են: Ըսի, թէ «Ազգական մը օրագիրը» կը պարունակէր Եղիայի բանաստեղծական քանի մը շքեղագոյն էջերը: Կ'աւելցնեմ, թէ այդ էջերը նոյն ատեն արեւմտահայ գրականութեամբ նուաճուած գեղեցկագոյն էջերն են դարձեալ, ուր սքանչելի նայուածք մը, խոր, սխրագին թրթռակալութեամբ ջիղերու սարուածք մը, մինչեւ իր եզունդները ազնուական գրագէտի մը ճարտարութիւնը, բայց մանաւանդ Պոլսէն խուսափուկ, զաղփազփուն զաչկութիւնները մեզի տրուած բլլար հաստատել այն անորակելի համբու քաղցրութիւնը, տրամութեան մէջն իսկ սրտատուչ հայ ողբէն՝ իրողութիւնը, զոր եւ զգացեր եմ այս ժողովուրդին բոլոր մեծ ու զօրաւոր ստեղծումներուն ծոցը, մեր գրականութեան նախաւոր շրջաններէն մինչեւ մեր օրերը: Ինչ որ անորակելի համբ ու գեղեցկութիւնը, շնորհը կազմեց Գողթան երգերուն, ինչ որ այնքան սրտատուչ կերպով մեզ կը նուաճէ մեր շարականներէն ոմանց ներսը՝ իր բիրեղեայ դիտում, մեր ազօթներուն ծոցը՝ իր բիւ շոգանքով սրտը այս ժողովուրդին: Այս բոլոր ինքնատիպ, ուրիշներէ զերծ, սխրագին ապրումներէն, – որոնք պատկեր են մեր գիւղերուն ողկոյզներուն, մեր քաղաքներուն այսօր անհետ հոգիին, մեր շարժուն հայրենիքին՝ որ լեզուն է, մեր զէմքը, մեր արուեստը, իր ամէնէն բիրեղացած, մաքրամաքուր կերպարաններուն տակ – այդ էջերը կը վկայեն:

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Ե. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



## ՄԵՆԱԿ

Տարիներն, որոնք ետիս են՝  
 Իրենց գուարբութեան դառն յիշատակով  
 Ձիս կը չարչարեն:  
 Տարիներն, որոնք առջիս են՝  
 Խելագարութեան ահռալի հեռապատկերով  
 Ձիս կը փարացնեն:

Հին տարիներն, որոնց լիայոյս սլայծառութիւնն  
 Աստիճանաւ կը նուազի,

digitised by A.R.A.R.@

Նոր տարիներն, որոնց դեւաբոյս մքուքիւնն  
Տենդերու սաստկութեան հետ կ'անի:  
Հին տարիներն, հնագոյն յրն, ի՞նչ քաղցր կը ժպտին.  
Նոր տարիներն, նորագոյն յրն, ի՞նչ ծամածուքիւններ  
ունին:

Հին տարիներն իրենց ի հտ ամէն բան,  
Հին բարի՛ տարիներն անգուր,  
Տարին ամէն բան իրենց հետ,  
Ամէնքն ու ամէն բան անդարձ յաւիտեան.  
Մայրս, հայրս, եղբայրս.  
Սէրս, յոյսս, հաւատքս:

Նոր տարիներն ոչի՞նչ պիտի բերեն ինձի,  
● Նոր տարակոյսներ պիտի բերեն մտքիս.  
Նոր յուսախարութիւններ սրտիս,  
Ու նոր մշուշներ հոգիիս:  
Արագ-արագ կու գան որպէս գուժկան,  
Ու յամբ-յամբ կ'երթան,

Զի ծանրաբեռնեալ միշտ կ'երթան  
Նոր տարիներն, որոնք հի՞նք են այժմ:  
Անկողիները մէկիկ-մէկիկ ծրարեցան,  
Պնակները մէկիկ-մէկիկ վերցան,  
Ու ձայները մէկիկ-մէկիկ մարեցան:  
Ու տունս հիմա մէկ անկողնեակ,  
Ու սեղանս հիմա մէկ պնակ,  
Ու բրնձ՝ կենդանի ձայնի մ'արձագանգ:

Ես կերակուրս կ'ուտեմ, ու կերակուրս գիս կ'աւտէ:  
Ես սենեակներս կը պտտիմ, եւ շարուկանք գանկիս  
սենեակները կը պտտին.  
Եւ պատերուն վրայ պատանքի պէս ներմակ  
կը պտտիմ գիրկընդիսառն իմ սիրելեացս ստուերները:  
Կը պտտին գիրկընդիսառն հի՞նք տարիներուն  
ստուերները:

Հին բարի տարիներն անգուր,  
Երջանկութեան պայծառաշող պատկերներ  
Աչքիս տակ միշտ կը պտտցնեն:  
Ու տարիներն, որ պիտ գան,  
Սեւ-սեւ սարսուռներ  
Հոգիիս մէջ կը պտտցնեն...

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

Ե. ՏԵՄԻՐԱԿԱՆՆԵՐ

# ՊԱՏԵՐԱԶՄ

## ԸՆԴԴԵՄ ՖՈՒԱՆԱԱՅԻ

Յրանսան որբան կը նպաստէ մեզ, այնքան ալ կը վնասէ զրեթէ:

Մեր բարձր գոտերն, որք Փրանսերէն լեզուաւ կ'ուսանին բնութեան ու մարդկութեան պատմութիւնն, նոյն Փրանսական լեզու ն խօսող ազգին կը յարին լիովին. այդ ազգին քաղաքական ու դրական կենաց մէն մի դէպք, իր-րիւ ազգային կենաց դէպք, կը շահագրգռեն պմեզ, երբ ուսած ենք Փրանսերէն լեզուն, երբ ուսած ենք Փրանսական պատմութիւնն, երբ մանաւանդ դիւթիշ պատմագրի մը հետ՝ Միշլըշի կամ Լամարթինի՝ հանդիսատես եղած ենք Պատ-թիյի կործանման, ունկնդիր եղած ենք Միոսպոյի փրկածայն որոտման, Վեռնիոյի քնարերգական աստնարանութեան, եւ Բան դիցուհւոյն Ռոպես-Փիեռի բերնով՝ տիեզերախօսութեան: Արդարեւ գրաւիշ ժողովուրդ. արգա-րեւ մօզի՛չ պատմութիւն՝ այն Մեծ յեղափոխութեան պատմութիւնն: Աշ-խարհի մէկ ծայրն, այլ աշխարհի պատգամն ու մենտորն եղած է Փրանսական ժողովուրդը: Երէկուան պատմութիւնը, այն յեղափոխութեան պատմու-թիւնն. այլ աւելի վսեմ ձայներ չէին լսուած յաւուրս այն յառաջինս Արարչու-թեան, յորժամ երկինք կը խօսէին եւ շահիթք կը գործէին:

Ահա այդ պատճառաւ Փրանսան կը նպաստէ մեզ՝ իր արտակարգ մե-ծութեան պատճառաւ. ահա այդ պատճառաւ Փրանսան մեզ կը վնասէ՝ զարժ-եալ իր արտակարգ մեծութեան պատճառաւ: Մեզ իր լոյսերով կ'ողողէ, պայ-ծառազոյն իր լեզուաւ գողցես լուսաւորազոյն հանդիսացումներով զճշմար-տութիւն. ուստի եւ մեր զարգացման կը նպաստէ Փրանսան. զմեզ իր փառա-ւոր պատմութեան եւ իր արդի նշանաւոր կացութեամբ կը յափշտակէ, կը ղե-րէ, այն աստիճան, որ միայն Փրանսան կը տեսնենք ու Փրանսան կը լսենք. ուստի եւ կը վնասէ մեզ Փրանսան: Կը մոռնանք, թէ մենք ալ ազգ ենք, ոյր քաղաքակրթութիւնն հնազոյն է, քան Փրանսական ազգինն, օ՛, կը մոռնանք, թէ մենք ալ բնագաւառ մը ունինք, ոյր այգիները անարատազոյն եւ հզօրա-զոյն գինի կ'ընծայեն, քան բիւրազունակ ու բիւրախորժակ զաղղիական գի-նիներն. եւ կը մոռնանք թէ մի՞ճճեմքն կ'երկրէն յառաջ ու Պեռանժէէն առաջ մենք ալ ունեցած ենք մեր երգիչներն, ունեցած ենք այն Գողթան երգիչներն, ոյց հազուադիւս հատկոտորք համարձակութիւն կու աայ մեզ հոյակեկու, թէ բոլոր ազգաց երգիչներէն գերազանց՝ երգչաց երգիչք էին մեր հին երգիչք, Գողթն գինեւէտ գաւառին երգիչք: Կը մոռնանք, թէ մեր ազգն ալ ունեցաւ հակներ, հակայք մարմնական կորովոյ՝ ոյց մին գոռ քնարաւ երգուած է Պո-րէն Նար-Պէյ արքեպիսկոպոսէն. հակայք մասւորական կորովով, ոյց միոյն կեանքն յուզեալ ու յափշտակիչ լեզուաւ զես մօտերս Աղբիւր ուուսահայ հան-

դէպի մէջ պատմուեցաւ Բաֆֆի Հոգելի վիպասանէն: Կը ժողովանք, թէ Ծրանայի Ազգային մատենադարանէն ճորագոյն մատենադարան մը ունինք հոն, Հայրենի Հողին վրայ, ուր գրեանք քարերու վրայ կը գրուէին, ուր քաղաքակրթութիւնք իրարու չբայ կը բարդուէին, ուր կ'իջնէին Հնդիկք Հիմայայէն, ուր կ'իջնէին Հնագոյն ազինք հասարակածէն, ուր իբրեւ տիեզերական ժամատելի մը՝ կը միանային սուրի ժողովուրդք ու կրօնի ժողովուրդք, հովիք ու հողագործք ու նաւարկուք ու հիմնարկուք քաղաքաց ու քաղաքակրթութեանց: Կը ժողովանք, թէ այն երկիրն, ուր Հայք իբրեւ Հայ կարող են ապրել այսօր ու յոյս ունին ապրել յաւիտեան, կը ժողովանք, կ'ըսեմ, թէ այսպէս էր այդ երկիրն: Կը ստե՛մ, կամ թէ չափազանցութիւն կ'ընեմ: Նոքա, որք կարողացած են ինճիճեանն եւ Ախշանեանն, Սերոպայի Հին ու նոր ճանապարհորդաց գիրքերն, նաեւ անցեալ ամ այդ Հայրենի երկիր վրայ հրատարակուած երբակ Հրատարակութիւնք Ալլահօվերտեանի, Միրախորեանի, Արուանձտեանցի, նոքա մանաւանդ, որք այդք տեսած են Հայաստան աշխարհն եւ ձեռով չօլափած իր անհամար ճնշխարքն ու նշմարքն, նոքա պիտի վկայեն՝ թէ ոչ կը ստեմ, ոչ կը չափազանցեմ՝ Հայրենասիրական տարապայման եռանդեան Քորթոքմանէն:

Այո, ճշմարտութիւն, իրողութիւն է այդ երկրի փառքն, այլ այդ ճշմարտութիւնն, աւա՛ղ, չէ ծանօթ, չէ զգալի Հայ ազգին մէկ կարեւոր ու կշռաւոր մասին, ոչր աչքն ու ձեռքն, ու սիրտ ու խելքն, ու մարմինն ու Հոգին՝ որպէս ըսի՝ Ծրանային Համար են միայն: Մեր բնագաւառն աշխարհազրապէս ու պատմապէս անձանօթ է բացարձակօրէն Հայ երիտասարդաց ու երիտասարդուհեաց, որք գիտեն Ծրանայի ետին գիւղաքաղաքին անունն ու Փրանսական պետութեան ետին պաշտօնէին անունը: Հայութեան բազմաշրջան ու բազմեմբույթ կենաց անտեղեակ են բազում ազգայինք, որք ուսումնասիրած են Փրանսական ընկերութեան քաղաքական ու անտեսական ու գրական ու բարոյական կեանքը: Ա՛հ, Ծրանեան մեզ շատ կը նպաստէ եւ մեզ շատ կը վնասէ. մեր սէրն իրեն Համար է, մեր հրացու մն իրեն Համար, մեր արտասուքն իրեն Համար. իր սօն օրերն Հայոց այլ են սօնական օրեր, իր Հեղինկաներն են, որ կը լեցնեն մեր գրատուներն, որպէս իր կերպասներն են՝ որք կը լեցնեն մեր սնտուկներն:

... Մաքառիլ Ծրանական ազգեցութեան զէմ կամ մանաւանդ Փրանսական շայսերու ու փողփողումներուն մէջէն ի վեր Հանել, Ժանօթացնել ու պանծացնել ինչ որ ազգային է, ինչ որ Հայ Հողին վրայ ծնունդ առած է, ինչ որ Հայ մտաց արտադրութիւն է, ինչ որ Հայ սրտէ բխած է, ինչ որ, ի մի բան, մերն է. ահա պաշտօնս, ահա գործօ այս պիտ ըլլայ: Պատերազմ ընդդէմ Ծրանայի վերնազիրս այս կը նշանակէ: Գիտեն ընթացողք, թէ չեմ եւ Փրանսաստեաց. ի Ծրանսա ծափահարած եմ Հանրի տը Պոստիի թատերն ուր կ'ըսուէր, թէ ամէն ոք ունի կրկին Հայրենիք, մին իրն ու միւսն այլ՝ Ծրանսա: Եւ մի՞թէ կրնանք փակել մեր սիրտն այն ազգին Համար, որ կը բանայ իր թեւերն ազգաց Համօրէն: Մակայն երբ ազգային մեծ ազէս մը անտարբեր կը թողու մեր սիրտն, որ կը յուզուի Փրանսական ազգին պատահած փոքր աղէտի մը Համար, երբ ոտից կոխան կ'ընենք ազգային դոհարն, եւ մեր կրծոց կամ ճակատուն վրայ կը կրենք գոռոզաբար օտարին դոհարն, երբ Փարիզեան դարչաւստութեանց Հարիւր յիսուներորդ տպագրութիւնն անյազարար կը ծծենք մեր բոլոր զգայաբանք, եւ տեղեկութիւն իսկ չունինք, թէ գիրք մը հրատարակուած է դրախտափայլ երկրին Համովն Հոտովն օծուած ու տողորուած, այնժամ կը զայրանայ Հայրենասէր Հոգին եւ կը գոչէ ուժգին. Պատերազմ ընդդէմ Ծրանայի:

ԵՂԻԱ ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ



### ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇՅԱԼ



ՈՒՅԵԱՆ ՀՈՒՆՅԱՆԱՆ ԳՐՈՒՆ 1936

Փարիզի Է՛նայ գրադպաներու բարեկամները մատենադարան յոյս ընծայած անմիջորոշակա՛նակա՛ն հատընտիրն ու զից՝ Երեսունէկ տարի ետք, 1906ին, Երևանի «Սովետական գրող» մատենաշարը տարաբարտ գրադպան հրատարակեց 535 էջեաց հատար ձեռ. տարը հազար տպարանակո՛ւմ:

Տեմբրեպաշեանի այս երկու հատորները թով թուփէ բերելով՝ կը պարզուի, որ Երևանի հրատարակիչները զուրս ձգած են Փարիզի հատընտիրն մէկ տեղ գտած ընդհանրապէս կրօնական բնոյթի արձակ եւ լափածոյ շարք ձեռ գործը, եւ մտացալին վրայ դու՛մարելով՝ փիլիսոփայական ու ազգային կնիք կրող իրենց յայտանարեւած էջերը՝ կազմած են նորը, ծաւալով ու աշխարհափեփեփածը աւելի աւազարու:

Փարիզեան հատընտիրին ծանօթ ընթերցողին չամար, բնական է, ամենէն շահեկանը այս է, այս յանկուճք, որուն մէջ չեն պակտիր տեմբրեպաշեանական պոռթկու մներ՝ արձակի թէ յափածոյի մարդերու վրայ:

Այս մեծ արժանեքին թով, ցաօք, երևանեան հատընտիրը կը աստապի խմբադրական դուրդուրանքի բնդ չանուր պակտակ ձք: Մատենագիտական խիստ անհրաժեշտ տեսչանքը զանց առչուած են բուրգովին, արեւմտահայ այլ ճիշտակներու գործերուն օրինակով՝ փոյթ չէ կցած կազմելու հայերէն դժուարիմաց եւ տարբարեւր բարարանք, է՛նայտու՛մի արտափելի անճաշակութիւն

ձեռ կը տիրէ ծայրէ ծայր եւ հարկ եղած բծախնդրութիւնը չէ կիրարկուած սրբապատկան ախտատարներուն առիթով, հայերէն թէ տարբարեւր պարագային:

Հայերէնը դեռ ուրիշ: Հապա Փրանսերէնը: Մենք չենք կարծեր, որ Փրանսերէն-հայերէն բառարաններ կազմած Եղիա Տեմբրեպաշեան ինք թոյլ տուած է, որ իր գրու թեան մէջ սարդին Փրանսերէն պատակաւուած բառեր, իսկ եթէ՛ Կերտները իրենք սխալ խոսած կամ գրած են Փրանսերէն լեզուն, այդ պարագային ո՛հ, է՛ այդ փաստին նշանը, ո՛հ, են աչքի բերեր:

A quoi bon  
Revue des deux mondes  
Cnel crim avons-nous fet.

Հայաստանի մէջ պատրաստուած ուժերու սովին չեն աստապիր այսօր: Տրանսերէնի պարագային՝ մտան են կամ չոն են Արրաւամ Ալիբեկան, Ալեքսանդր Փոփեկան, Անահիտ Դալուկեց, ու հոն են իրենց ընդգրկներին յայտարարար Փրոյստ, Փոյ Վայերի, Արթիւր Թեմպո, Ստեփան Մայարմէլ Քարգմանած Վահրամ Մարտիրոսեան, Աշոտ Ալեքսանեան, Աննա Յակոբեան, եւ ուրիշներ:

Ո՛չ, պակտողը պատրաստուած ուժերը չեն, բծախնդրութիւնն է պակտողը, որուն համար, գծախնդրութիւնն է պակտողը, առաջին անգամը չէ, որ ի՞նչ կը բացուի այս սիւնակներէն...

# Աղակուբային ԼՂԵՐԵՐ

## ՖՐԱՆՍԱԿԱՆ «ԻՊԵՐԱՍԻՈՆ»Ը ՀԱՅՐԵՆԻ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ՀԵՏ

Ապրիլ ամսուան բնիկները, Փարիզի մէջ 15 օր տեւողութեամբ տեղի ունեցած հայկական շարժապատկերի երրորդ փառատօնին առիթով, Փարիզ այցիկած էին հայ բեմադրիչները, բեմադիրներն ու ղեկավարները՝ Ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն անդամներն բեմադրիչ Հենրիկ Մայեանի, դերասան Սոս Սարգսեանի, երաժիշտ Տիգրան Մանուսրեանի, բեմադրիչ Բազրատ Յովհաննէսեանի եւ Ալպէրտ Մկրտչեանի հետ ֆրանսական «Լիպերասիոն» օրաթերթի ունեցած էր բազմաձայն զրոյց մը՝ հայ շարժապատկերի անցնալին, ապագային եւ Ներկային մասին:

Երկրորդ այնպիսի ամսաթիւն մըն է: 1965 կրկնաբարձ ստեղծագործական անշարժութեան շուրջ հարցումի մը պատասխանելով, Սոս Սարգսեան կ'ըսէ՝ «Երկրի բաղաժապկան կացութեամբ, պատերազմին եւ տնտեսական կացութեան հետեւանմով կարծէ՛ք պատմութիւնը կանգ առած էր Հայաստանի մէջ: Մեր Սոս, պատերազմէն առաջ, քննադատի մը վերջը պարտաւ մը գոյացաւ: ստեղծագործութեան մէջ, որուն վրայ պէտք է աւելցրնել ստալինեան բնութիւնն ու ճնշումը»:

Հայրենի գերատեսիլն պատասխանին վրայ, կրկնաբարձ լրագրողը հարց կու տայ, թէ այդ ժամանակաշրջանին վրայից ինչպէ՞ս յաջողեցան շարժապատկերի եւ ստեղծագործել, Սոս Սարգսեան կը պատասխանէ՝ «Շնորհիւ Ստալինի: Վրացիները միշտ բախտաւոր եղած են: Այդ օրերուն, լուսնիմբ անհատականութիւնն ունեցող գեմներ, որոնք զօրաւոր կերպով կապուած ըլլային հայկական մշակույթին, մտածումին, զգայնութեան: Որպէսզի կարենանք պատրաստել հայկական ժապատկերներ, պէտք էր սպասել Տոլլաթեանին եւ Մայեանին»:

Հարցումի մը, թէ «Տոլլաթեանի առաջին ժապատկերները չէ՞ն նմանիր թէ՛կ-Նազարեանի հայկական տիպարներ Ներկայացնող ժապատկերներուն», թէ՛ վերջինին ժապատկերները զատու աւելի յամբարող կային բնութիւնը կը կրկնէ, աւելի կը նմանին այդ շրջանի շնոր շարժումի պատկանող ժապատկերներուն», հայրենի բեմադրիչ Հենրիկ Մայեան կ'ընդգծէ՝ «1961էն սկսեալ, իսկական վերագործ մը կայ դեպի ազգային զգացումը, ծաղկում մը կայ Փարսմանովով, Փելլէշախով եւ Տովարիանով, որոնք ժապատկերներ կրնան հետաքրքրել



Սոս Սարգսեան, Հենրիկ Մայեան եւ Ալպէրտ Մկրտչեան

խորհրդային միւս համընթացութիւններուն հասարակութիւնը, Տոլլաթեանի արտասահմանի հասարակութիւնը»:

Իսկ թէ առաջին հարցումն անհրաժեշտ անցաւ հայկական շարժապատկերը, ո՞ր կէտերը աւելի առաջնահարգ կարի որո թիւն Ներկայացուցին շարժապատկերի պատասխաններուն, Մայեան կը ժառանգէ, թէ այդ շրջանին մեծապէս օգտուեցան իրուշխեանէն վարչակարգին բեմեռած ազատութիւններն եւ երիտասարդ բեմադրիչներն եւ բեմադրիչներն վրայ խոր ազդեցութիւն ձգեցին Թարթուսիցիի եւ Տարչիւնի նման անհատականութիւնները:

Ապա, «Հայկական շարժապատկերի միութիւնը ի՞նչ բանի մէջ կը կայանայ» հարցումին պատասխանելով, Սոս Սարգսեան գիտել կու տայ, թէ զայն պէտք չէ փնտռել ժապատկերներուն ունի, այլ՝ «հայկական ճիշտագիրին, հայկականութեան մէջ, երբ կ'ուզէ: Եւ առկա մեծ մասամբ կը պարտին Հենրիկ Մայեանին, որ հիմա մեզի հետ ներկայ է: Անոր «Շուտակի: Նիս» (1967) ժապատկերն է այդ վերանորոգմանը:

Վերջինիս մասունքը գարգայնելով, ի կարգին, երաժիշտ Տիգրան Մանուսրեան կ'անցնէ՝ «Մեր հայկականութիւնը գտնելու միտքները շատ հազուադէպ եւ դժուար են: Անոնք շարքուն կը

նմանին և Հայաստանը քարերը շինուած է: Հոն  
նե, մէկը միւսին հոյ կրնամք գնիլ, բայց ամկա-  
րիկ է բաղդատի ուրիշ բանի մը հետ: Այդ է  
պատճառը, որ մեր շարժապատկերը երբեմն  
դանդաղ, բանաստեղծական կը թուի:

Վերջապէս, կըր Քրանսազի լրագրողը կը յայտնէ  
այն տեսակէտը, թէ Յովհաննիսեանի նախնականու-  
թեան ներկայացման Լզանակը բեմադրիր կ'ա-  
ռաջնորդէ ղեկի վերացական և բնագոյնական  
ողորտներ, Տիգրան Մանուսեան զայն կը վերազրէ  
բեմագիր Հրանդ Մաթևոսեանի, որուն ստորագ-  
րութիւնը կը կրնն Յովհաննիսեանի «Անճամ  
արեւ» և «Տէրը» ժապաւէններուն բեմադրները:

### ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ՓԱՌԱՏՈՆ՝ ՆԱԵԻ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

Վերջերս, 2 շաբթուան համար Միացեալ Նո-  
տանցներ այցելած են արուեստագէտներ Յրուսակ  
Դովլաթեանը և Արմէն Ջիգարիանեանը: Անոնք  
յաջորդաբար այցելած են Լոս Անճելըս, Ֆրէզնո,  
Պասթըն և Սան Ճրանսիսքո, ուր հանդիպումներ  
ունեցած են նախկան զաղթածականներու մէջ:

Այս առիթով, Յրուսակ Դովլաթեան յայտնած է,  
թէ Լոս Անճելըսի մէջ հիմնուած է «Ներեան կինո-  
համերգային միասորումը», որուն հիմնական  
նպատակն է նախկան ժապաւէնները ծանօթաց-  
նել ո՛ր միայն նայ, այլև՝ ամերիկացի նախնականու-  
թին:

Դովլաթեան ըսած է, որ ժապաւէններու ցու-  
ցադրութեան բացուած կատարուած է «ԼՍՆ»-ու  
ընկուզեմին ժապաւէնով: Իսկ առկի ուշ ցուցա-  
դրութեան են ինն ժապաւէններ: Դովլաթեան յայտ-  
նած է, թէ նախապէս իրենց մտախորհութիւննե-  
րուն, «ԼՍՆ»-ու ընկուզեմին մէն ժողովրդակա-  
նութիւն գտած է և թերթերը գրախօսականներով  
անդրադարձած են անոր:

Նրա դիտարկութիւն եղած է, թէ նախկան ժա-  
պաւէնները ինչո՞ւ ստար լեզուով բացատրուա-  
կանները չեն կրեր, Դովլաթեան ինչ և սրեղու հաս է  
այդ թերթի մէջ, յայտնելով զանազան արհեստա-  
գիտական դժուարութիւնները, զորս սակայն կա-  
րելի է մտաւանելն յաղթանակով:

Նոյն առիթով Դովլաթեան ընդգծած է «Ինկոս»  
ներու ընդհանրացման դէմ, յայտնելով որ անոնք  
կը կործանեն և կ'ոչնչացնեն պատասան ու շաբ-  
թապատկերը:

Իր խօսքի աւարտին, Դովլաթեան նաև կարճա-  
նալի նորութիւն համարած է, որ Միչիկընի հան-  
րայայտ օգիւրդի Խատրոնը տարիներ առաջ բե-  
մադրած է «ԱՆՆՆ» օգիւրդի, որ շայն սրժապակի  
գտած է աշխարհի երաժշտական շրջանակներու  
մօտ:

### ՄԱՀ՝ ԼԻՒՍԻ ԹՈՍՊԱԹԻ



Պոստոս 19ին, Սան Ճրանսիսքոյի մէջ մահացաւ  
Լիւսի Զարթեան-Թոսպաթ, յոյրը՝ բանաստեղծ  
Մատթէոս Զարթեանի և զբաղուուի Սիրան  
Անպալի:

Ամուսնացած էր Լիւսիանի նախկին պետական  
երեսփոխան, «Էլ Սուար» Քրանսապատ օրաթերթի  
ակր և անօրէն Տիգրան Թոսպաթի ձեռ:

1953-1975 ժամանակաշրջանին, Լիւսի Թոսպաթ  
խմբադրած ու լոյս ընծայած էր «Այդ» օրաթերթը,  
որ փակուեցաւ 1975ի Յունիսին, Լիւսիանի պա-  
տերազմին հետևանքով:

1980ին, Լիւսի Թոսպաթ Լիւսիանէն մեկնեցաւ  
Միացեալ Նահանգներ, և անոցոր հիւանդութեան  
մը հետեւանքով մահացաւ վերջերս՝ ՌՏ տարեկա-  
նին:

Մշակութասեր և ընկերային խառնուածքով  
նայուի մըն էր ան: Պէրուսի մէջ, երիտասարդու-  
թեան մաս կազմած էր «Համազգային»ի «Գաղտնի»  
Ինկիլեան» Խատրոնի մրցումը, նաև՝ Բարսելոնի կա-  
նոնական ղեկավարած «Գոստան» երգչախումբին:

Մասնաւոր էր մշակուի թային միութիւններու մէջ,  
իւր կարծիքը մասնակցութիւնը բերելով զապալի  
մշակութային կեանքի կարգացման: Կը շաշաղիկը  
չտարնայի երիտասարդները, ղեկատար կրածիւններն  
ու ղեկանկարչները, կրողները:

Լիւսի Թոսպաթ հանրային ծառայութեանց իւր  
ներշնչու մը ստացած էր Պոլտոյ բարեկեցիկ և  
արուեստասեր իւր բնաներքին մէջ:





զեցնել կը ներկայացնէ տեղացի շատարարներն: Հայերէն, գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն եւ իտալերէն տիրապետած այս հայտնի խաղաղարարներ, գերման երիտասարդ գրողներու արժան շնորհը պարբերական կը գրէ: «Ո՛ր միայն դերասան եւ բեմադրիչ է ան, այլև՝ արձակագիր, վիպասան ու քարգծանիչ, որ աշխատակցած է նաև Պերլինի, Պազրլի, Համպուրկի, Քեյլնի եւ այլ հայրամերու աստիկայաններուն»:

1943ին, «Նի շորն» պարբերականը ՏՆ պատկերասպարզ էջեր նուերած էր հայ մշակութիւն եւ բանաստեղծութեան, խմբագրութեանը՝ Գրեգոր Մեյիսեանի, Համո Պետրոսեանի, Գոն Արարեանի, Խիթա Սեփանեանի եւ Էդիկ Յովհաննիսեանի:

1943ին, Գոն Արարեանի հետ ան կը պատրաստէ Անթոն Զեփովի «Արդրո» ժապատէջը, որ մեծ յաջողութիւն կը գտնէ Գերմանիոյ մէջ: Նախապէս, ան յորջո՞ւնեցած էր Հայերէն Ծոն Քյայսթրի «Փշրուած կուժը» եւ «Տանձնիկը միսին» վաղաքական ժապատէջին մէջ, իսկ աւելի ուշ, իրբն գլխաւոր գերասան՝ 1944ին, «Օրշիղէն դէս վահրնգրիմս ժապատէջին եւ 1945ին՝ «Քարու-չէֆտի Ֆերլիք» անուն փոխման մէջ»:

Գրեգոր-Առաքել Մելիքեան երկար տարիներ է վեր անդամ է Արեւմտեան Պերլինի «Երկր» թատրոնին եւ ժապատարած է բազմաթիւ տիպարներ, գասական եւ արդի գանազան թատերախաղերու մէջ:

**ԱՐՏԱՇԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԽՐԱԳԻՐԸ՝ ԱՐԱՐԱՍԸ**

Անգլիտասա Արապ Սիլվա ամասներկր, իր բնութագրի տարուան Յուներթի թիւով, հրատարակած է լուսնկան հարցազրոյց մը համարաբան եւ միջազգային շարժառի տիրացած իրաքանայ գեղանկարիչ Արապի հետ, որ նաև նուանած է «Երան լարուս» հանրապետարանին մէջ ներկայացուցու իրաւունքն ապտիք: 1 Ե Ե

Արապի հարցազրոյցի մէջ, վերացական ոճով ստեղծագործող Արապ նախ ինձան է ապագայի իր ծրարներուն մասին: «Ի՞նչ են ձեր անմիջական ծրարները» հարցումին պատասխանելով, ան քսած է. «Եր պարտատեմ Արարտ իբան մասնի քթածրար մը: վերքերս այցելեցի Հայաստան եւ խորապէս տպաւորուեցայ՝ տեսնելով այս եզակի լեռը: Մասնագետ եմ, յեռներ մոզոյցած եմ, նոյնիսկ միջնե թիպեր գացած եմ՝ Հիւսպայան տեսելու: Բայց կրնամ վստահեցնել, որ ո՛չ մէկ լեռ, որքան ալ վեհ ըլլայ, կարելի է բաղդատել Արարտին նետ: Երբ կը դիտել անոր գագաթը, այն ստեղծ եսուցայ, թէ ինչու՞ նոյնալ տապանը հոն նանգած էր»:

Երբ Հանրիթ Ապտի հարց տուած է. «Ձե՞ք կարծիր, թէ ձեր յիշողութեան մէջ բնացած իայն է, որ գնցուած է այդ լեռան տեսիլը», Արապ բասացիորէն դիտել տուած է. «Ամենմիլն: Իրիտարար իրաւեցիի մը աչքերով է, որ զայն դիտեցի: Իր արտակարգ գեղեցկութեան բացի յատկանշականը այն է, որ օրուան իրաւանչիւր ժամուկ Արարտը տարբեր գոյն կը ստանայ: Հիացումով կը հետնիմք անոր յարեմեակամ կերպարանափոխումներուն, կարծէք թէ անիկա կը վերածնի ամէն վայրկեամ՝ ի՞ր իսկ մոխիրներէն: Կը պատահի, որ Արարտը ամբողջովին անհետի ամպերու ետին, օրեր ամբողջ, նոյնիսկ շարքաներ: Մարդիկ կ'ըսեն. «Արարտին ամօթածուրիւնը բնած է, յետոյ, յանկարծ, անանց նախանշանի լեռը կը վերայայտնուի իր ամբողջ տիրութեամբ եւ կը գրաւէ հորիզոնը՝ իր վիսափառ հասեկով: Ինչպէ՞ս չմտածել իրաքի մասին, տեսնելով զայն պարբերաբանակ եւ երկնայալաց, եպարտ՝ իր ուժով եւ իր յաւիտեանականութեամբ»:

**ԵՐԻՏԱՍԱՐԳԻ «ԱՍՏՂԵՐ» ԱՆԻ ԳԱՒԱՅԵՆԱՆ ԵՒ ՐԱՅՅԻ**

«Նի Ըորթ Թայմզ» օրաթերթի 7 Յունիսի թիւին արուեստներու յատկացուած բաժնի կ'անդրադատուայ երկու հայ արուեստագետներու յաջողութեանը: «Երանչայ թիւն կ'իմանանք, ինչ իրիտարարութիւնն է Անի Գուաֆեան, տարեկից երիտասարդ գաստգերքու հետ նուազան է ի նպաստ երաժիշտներու կազմակերպուած նուազանակ կի մը ընթացքին, Նի. Ըորթի մէջ: Երաժշտական այս հանգիտութեան մասնակցած է յայտնի արուեստագետ Միշու Տիլիքըր (գաշնակահար) եւ օրուան պատուոյ հիւրը եղած է «Քենըտի Սենթրքթի արուեստից տեսրէն Մարթա Գազայա»:

Անի Գուաֆեան կը նկատուի նոր սերունդի ամէնէն օժտուած շուրճակահարներէն մին:

Թերթի նոյն բաժնին մէջ երկար յոգուած մը հրատարակուած է մանուկներու յատուկ պատկերիչներու (վիտո) եւ ճայներիչներու մասին: Այս քսածինով կը արուած է յուսանկարը պատրաստայ գաստգերի մը, Բաֆֆիի Բաֆֆիի պատրաստած ճայներիչներէն եւ ճայնակեակներէն երկուքու կէտ միլիան օրինակ վաճառուած է քանի մը ամուսն ընթացքին: Գայնակեակները մանկական երգերու եւ պատմութիւններու յատկացուած են եւ իրբն պայտիսն առաջիններն են իրենց տեսակին մէջ:

Թերթը կը շէ, որ պանտաստիկները նման ճայնակեակներու պատրաստութեան մէջ յատկապահաններ եղած են եւ առաջնակարգ գաստգերքուներն այս մարցին մէջ:

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

**ԲԱՆԿՈՐԸ ԵՒ ՄԱՍՈՒԹԻ ՈՍԿՈՐՆԵՐԸ**

(Վ Է Պ)

- Անթիլիաս, 1987, 652 էջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարան, հրատարակութիւն՝ «Գէորգ Մելիտինեցի» գրական մրցանակի վերահրատարակութեան ֆոնտի:

Վ Ա Շ Է Օ Շ Ա Կ Ա Ն

**Փ Ա Խ Ս Տ Ա Կ Ա Ն Ը**

(Պ Ա Տ Մ ՈՒ Ա Մ Ք Ն Ե Ր)

- Անթիլիաս, 1987, 204 էջ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տպարան, հրատարակութիւն՝ «Գէորգ Մելիտինեցի» մրցանակի հրատարակութեան ֆոնտի:

Մ Ա Լ Խ Ա Ս

**Զ Ա Ր Թ Օ Ն Ք**

(Վ Է Պ — Ա. Շ Ա Տ Ո Ր)

- Պէյրութ, 1988, 447 էջ, «Համազգայինի Վահէ Արթուր» տպարան, Գ. տպագրութիւն:

ԱՌՆԱՆՆԵՆ  
Հատաժամանակ 40 Լ.Ո.  
Տարեկան բաժնեգիրն 400 Լ.Ո.

ԱՌՆՐԻՍ  
Հատաժամանակ 25 Ս.Ո.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ  
Տարեկան բաժնեգիրն 40 Ամերիկեան տոլար

بَاكِين

مجلة شهرية ، ادبية فنية وعلمية  
المدير المسؤول  
السيد ارتين كارنيك قرانجيان

PAKINE  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն  
ԱՄՐԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒԵԱՍԻ  
Խմբագիր  
ԳՕԶՈՍ ՄՆԱԳԵԱՆ  
Խմբագրության անդամները  
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԼԻՊԵՐԵԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԿՐԱԿՈՍԵԱՆ  
Վարչական պատասխանատու  
Ս. ՏԷՐ ԽԱՀԱՏՈՒԹԵԱՆ

B.P. 11-8404 - Beyrouth - Liban  
Tel. 296898